

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆԼ ԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԳՐԻԳՈՐԻԻ

**ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԺԴԺԷ ԴԴ. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ.02.01 – «Հայոց լեզուն» մասնագիտությունը ամբիջական
գիտություն է ներկայացնում լեզվի գիտական
աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Լիանա Ս. Հովսեփյան

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ.....	4
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԾԽԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ-ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒ ԹՅՈՒՆ	18
1. ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ	24
2. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԾԽԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	26
3. ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԱԾԽԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ	38
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱԽՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒ ԹՅՈՒՆ	47
1. ՆՈՐԱՀԱՅՏ ՏԵՐՄԻՆՆԵՐ	49
2. ՀԱՅՏՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՂ ԿԻՐԱՌՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	69
3. ՀԱՅՏՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՅԼ ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ԿԻՐԱՌՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	75
4. ՀԱՅՏՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	79
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒ ԹՅՈՒՆ	87
1. ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՔԵՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ	88
ա. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ-ՈՒ ՂՂԱԳՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	88
բ. ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ-ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	89
գ. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	90
դ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	99
ե. ԿԵՏԱԴՐԱԿԱՆ-ԱՌՈԳԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	101
2. ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԿԱԶՄՈՒ ԹՅԱՆ	108
ա. ՊԱՐԶ ԿԱՄ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	110
բ. ԱԾԱՆՑԱԿՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ	111
գ. ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐ	115
դ. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒ ԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԿԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	117
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	123
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	125
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	126
ՀԱՎԵԼ ՎԱԾ 1. ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ	136
ՀԱՎԵԼ ՎԱԾ 2. ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	145
ՀԱՎԵԼ ՎԱԾ 3. ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ (ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԵՐ).....	147

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ երեւնի բառապաշարը պատմական զարգացման ընթացքում անընդմեջ փոփոխվել ու կատարելագործվել է, որի հետևանքով էլ արտացոլում է հասարակական կյանքում եղած ցանկացած տեղաշարժ և նորություն: Բառապաշարի զարգացման և հարստացման մեջ կարևոր է նրա կատարելագործումը, այսինքն՝ բառային կազմի մեջ տեղի ունեցող փոփոխությունների ամբողջությունը, որոնք բնութագրվում են իբրև բառապաշարի որակական զարգացում¹: Այս զարգացումն էլ ոչ միայն նոր բառերի մուտքն է լեզվի բառային կազմ, այլ արդեն իսկ գործածվող բառապաշարի ճշգրտումը, կատարելագործումն ու արդիականացումը: Իսկ այս հարցում իր կարևոր դերն ունի տերմինաբանությունը, որը բառապաշարի առանձնահատուկ մի շերտ է: Կազմելով բառապաշարի մի մասը՝ տերմինաբանությունը ևս պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է ներլեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությանը:

Մեջ բերենք Էդ. Աղայանի մի դիտարկումը, որ «... եթե մի 20-30 տարի առաջ տերմինաբանության հետազոտությունը կազմում էր ամեն մի լեզվի բառագիտական ուսումնասիրության մի բաժինը միայն, ապա այժմ բառապաշարի գիտական ուսումնասիրության մեջ առանձնանում է որպես ինքնուրույն բնագավառ: Լայն առումով տերմինաբանությունը, իբրև գիտություն տերմինների ու տերմինահամակարգերի մասին՝ տերմինագիտություն, այժմ արդեն դառնում է միջգիտական օժանդակ գիտություն, որով զբաղվում են ոչ միայն լեզվաբանները, այլ գիտության ամենատարբեր ճյուղերի ներկայացուցիչները»²: Տերմինային իմաստը ճշգրտորեն սահմանելի հասկացություն է, ըստ այդմ՝ տերմինը «որևէ տերմինահամակարգի պատկանող և այդ համակարգին հատուկ՝

¹ Աղայան Էդ., Ժամանակակից հայ երեւնի բառապաշարի կատարելագործումը, ԲԵՀ, 2, Երևանի համալսարանի հրատ., 1978, էջ 156:

² Աղայան Էդ., Տերմինագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1978, էջ 4:

ճշգրտորեն սահմանելի հասկացությունն արտահայտող բառ է կամ բառակապակցությունն»³:

Գիտական հասկացությունների և նրանց հատկանիշների ուսումնասիրությունը զբաղվում է տերմինագիտությունը: Տերմինագիտությունը, բառապաշարի գիտական ուսումնասիրության մեջ առանձնանալով որպես ինքնուրույն բնագավառ, ժամանակի ընթացքում ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ ենթարկվում է մշակման ու կատարելագործման: Տերմինագիտության հետազոտության առարկան տերմինն է, որը՝ որպես լեզվի բառային կազմի բաղկացուցիչ մաս, ընդգրկում է գիտության բոլոր բնագավառներին վերաբերող գիտաբառերը՝ իրենց հասկացական իմաստներով և գործառական դաշտով:

«Եթե բառն իբրև նշան անվանում է առարկայի հիմքում ընկած լեզվական իմաստը, ապա տերմինը վերանվանում է այդ նույն իմաստի կոնկրետ նշանակությունը, որն էլ տերմինային իմաստն է»⁴:

Ռ. Իշխանյանն ասում է. «Տերմինը ոչ միայն բառ է, բառի մի տեսակը, այլ և որևէ անջրպետ չկա տերմին-բառի և սովորական բառի միջև, քանի որ սովորական կոչված բառերը գիտության այս կամ այն բնագավառում գործածվում են իբրև տերմիններ»⁵:

Տերմինակազմության հիմնական միջոցը լեզվի բառակազմական ներքին հնարավորություններն են: Լեզվի ներքին միջոցներով նոր տերմինների ստեղծումը հայոց լեզվի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից է: Տերմինները առաջանում են երկու ճանապարհով՝ ոչ տերմինային բնույթի բառերի հիման վրա և հայոց լեզվի բառակազմական միջոցների օգնությամբ⁶: Տերմինի ստեղծման ճանապարհներից մեկն էլ կենցաղային բառերի՝ որպես տերմին գործածումն է, որը պայմանավորված է կենցաղային և տերմինային բառապաշարի ընդհանրությունով: «Տերմիններ ստեղծվում են նաև գրաբարից ավանդված և արևմտահայերեն բառերի

³ Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1984, էջ 323:

⁴ Համբարձումյան Վ., Հայոց լեզվի կետադրական տերմինների ծագումը և կառուցվածքը, ՊԲՀ, 1 (156), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2001, էջ 202:

⁵ Իշխանյան Ռ., Հայերենի տերմինաշինության հարցեր, ԼՀԳ, 7, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 88:

⁶ Ասլանյան Ս., Բառի տերմինացման մի քանի հարցեր հայերենում, ԼՀԳ 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 42:

կամ արդեն պատրաստի տերմինների փոխառությունը, հաճախ նաև բառիմաստի փոփոխումը, որը ևս լայն տարածում ունի լեզվում»⁷:

Նեղ իմաստով տերմինաբանությունը գիտության, տեխնիկայի, արվեստի որևէ բնագավառի տերմինների ամբողջությունն է⁸: Տերմինաբանությունը բառային կազմի մյուս մասերի համեմատությամբ նրա ամենաարագ զարգացող բաժինն է: Քերականական տերմինաբանությունը մյուսներից տարբերվում է նրանով, որ վերաբերում է լեզվի առավել կայուն, քիչ փոփոխվող բնագավառին՝ պայմանավորված քերականական կառուցվածքի չափազանց դանդաղ փոփոխությամբ: Տերմինը անխզելիորեն կապված է բառին և հասկացությանը: Եվ ինչն էլ բառ՝ ունի բառին հատուկ հատկանիշները: Տերմինի և բառի հիմնական տարբերությունը դերի և իմաստային առանձնահատկություններն են:

Տերմինը տվյալ առարկայի կամ երևույթի կա՛մ անվանումն է, կա՛մ սահմանումը: Այն սովորական բառերից տարբերվում է իր արտահայտած հասկացության ծավալով⁹, իսկ Ռ. Բուդաղովն ավելացնում է, որ այն խիստ որոշակի իմաստ ունեցող բառ է¹⁰, Ե. Գալկինա-Ֆեդորովը տերմին է համարում այն բառը, որին համապատասխանում է գիտության, տեխնիկայի, արվեստի և այլ բնագավառի մի որևէ ամբողջական, որոշակի հասկացություն¹¹, Ուշակովը տերմինը սահմանում է որպես «բառ, որը խիստ որոշակի հասկացության անվանումն է»¹², Օժեգովը գտնում է, որ «տերմինը գիտության, տեխնիկայի որևէ հատուկ բնագավառի որոշակի հասկացության անվանումն է»¹³, իսկ ըստ Դալի՝ այն «առարկայի ընդունված և պայմանական անվանումն է»¹⁴: Անդրադառնալով

⁷ Նույն տեղում, էջ 43-44:

⁸ Большая Советская энциклопедия, т. 25, изд. «Советская энциклопедия», Москва, 1976, стр. 473-474.

⁹ Левковская К. А., Теория слова, принципы ее построения и аспекты изучения лексического материала, гос. изд. «Высшая школа», Москва, 1962, стр. 62.

¹⁰ Будагов Р. А., Введение в науку о языке, изд. «Добросвет-2000», Москва, 2002, стр. 33.

¹¹ Галкина-Федорук Е. М., Современный русский язык, гос. учебно-педагогическое изд. министерства просвещения РСФСР, Москва, 1957, стр. 117.

¹² Толковый словарь русского языка, т. IV, Гос. изд. иностранных и национальных словарей, Москва, 1940, стр. 689.

¹³ Ожегов С. И., Словарь русского языка, Гос. изд. иностранных и национальных словарей, Москва, 1960, стр. 783.

¹⁴ Даль Вл., Толковый словарь живого великорусского языка, т. IV, издание т-ва М. О. Вольф, С.-Петербург-Москва, 1912, стр. 754.

իմաստային առանձնահատկություններին՝ Վինոգրադովը նկատում է, որ, «բառը լինելով գիտական տերմին», սահմանող դեր է ձեռք բերում և հագեցած լինելով իմաստային հատուկ բովանդակությամբ՝ դառնում է տրամաբանական սահմանման միջոց¹⁵:

Տերմին բառը ծագում է լատիներեն «terminus»-ից, որ բառացի նշանակում է «սահման», «սահմանային նշան», «եզր»: Գրական արևելահայերենում թարգմանվում է՝ «գիտաբառ», երբեմն՝ «անվանում», իսկ արևմտահայերենում՝ «եզր»¹⁶: Ուշ շրջանի լատիներենում այն ստացել է «տերմինի» այժմյան իմաստը¹⁷:

Ամփոփելով տերմինի ընկալումները՝ Ա. Մուրադյանը տալիս է հետևյալ սահմանումը. «... այն բառ է կամ բառակապակցություն, որն արտահայտում է գիտելիքների որոշակի բնագավառի մասնագիտական որևէ հասկացություն՝ գիտականորեն առավել ճշգրիտ և խիստ սահմանադատված նշանակությամբ»¹⁸:

Բոլոր ժամանակներում էլ գիտության մեջ արդիական են անցյալի արժեքների վերհանումը, բազմակողմանի ուսումնասիրությունը, քննական մոտեցումը սկզբնաղբյուրներին, ճիշտ գնահատումը, որոնք խիստ անհրաժեշտ և կարևոր են ամեն ազգի մշակութային համապատկերը ամբողջացնելու տեսակետից: Միջնադարյան քերականագիտական երկերի համալիր ուսումնասիրության առումով կարևորվում է լեզվաբանական-բանասիրական վերլուծությունը:

Հայերեն մեզ հասած հազարավոր ձեռագիր գանձեր մեր հին ու միջնադարյան գրականության, բազմադարյան մշակույթի, իմաստասիրական, քերականագիտական, բարոյագիտական, պատմագրական, ճարտասանական, բժշկագիտական, աստղաբաշխական, մաթեմատիկական և գիտության այլ ճյուղերի բազմաթիվ ուսումնասիրություններում մարմնավորված մեր տեսական մտքի զարգացման արտացոլումն են, որով էլ պայմանավորված է հայոց

¹⁵ Виноградов В. В., Русский язык (Грамматическое учение о слове), гос. изд. «Высшая школа», Москва, 1986, стр. 16.

¹⁶ Մուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզուն (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2004, էջ 171:

¹⁷ Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 118:

¹⁸ Նույն տեղում:

լեզվի բառային հարստությունը, նրա բառատեղծական զարմանալի ճկունությունը:

Դեռևս V-VI դարերում մեր ժողովուրդը մտահոգված էր ոչ միայն իր հայրենիքն ու լեզուն պահպանելով, այլև մարդկային հոգևոր հարստություններին հաղորդակից լինելով, համաշխարհային մշակույթի զարգացման ասպարեզ մտնելով հոգսով:

Յայ մատենագրության սկզբնավորման շրջանից իսկ տերմինաբանության մշակման ուղղությամբ զգալի աշխատանքներ են տարվել: Յայերը ստեղծել են համապատասխան բառեր հունարեն տերմինների համար: Յայ տերմինաշինության մտահոգության առարկան միշտ էլ եղել է օտար տերմինների հայերենացումը, սեփական տերմինների ստեղծումը¹⁹:

Ինչպես նշվում է, V-VII դարերում գերիշխում էր հունաբան հայերենը, իսկ լատինաբան հայերենը սկիզբ է առել XVI դարի կեսերին Եվրոպայի հայկական գաղութներում: Եվ եթե հունաբան հայերենը առաջացել է գիտական տերմինաբանության բացակայության պայմաններում՝ նպաստելով հայ մշակույթի ինքնուրույնությանն ու պահպանմանը, ապա լատինաբան հայերենը զուտ քաղաքական և կրոնական նկրտումներ էր հետապնդում, նրա գործունեությունը հայկական մշակույթի ինքնուրույնությանն ու պահպանման դեմ էր ուղղված²⁰:

Երկու հայերեններն էլ շուրջ երկու դար գոյատևել են՝ լինելով ժամանակի մտավորական որոշակի խավի լեզուն. հունաբան հայերենը սկիզբ է առել Յայ աստանում թարգմանչական աշխատանքի ընթացքում, մինչդեռ լատինաբանը սկզբնավորվել է Եվրոպայում և տարածվել այլ նպատակներով: «Լատինաբան հայերենը որևէ հետք չի թողել հայ քերականագիտության վրա, մինչդեռ հունաբան հայերենի կերտած տերմինները մինչ այսօր գործածական են հայերենում»²¹: Սակայն Ա. Մուրադյանի արտահայտած այս կարծիքին համամիտ չէ Գ. Մուրադյանը, որն էլ բերում է լատինաբան հայերենից ժառանգած տերմինների բազմաթիվ օրինակներ, որոնք

¹⁹ Խասապետյան Ս., Արևելահայերեն և արևմտահայերեն տերմինների համեմատական քննություն, ԲԵՅ, 2, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1984, էջ 161:

²⁰ Մուրադյան Ա., նշվ. աշխ., էջ 15:

²¹ Նույն տեղում:

այսօր կենսունակ են հայերենում և Ա. Մուրադյանի պնդումը համարում է չափազանցված²²: Այդ բառային նորամուծությունները շատ լավ ներկայացնում է Յ. Աճառյանը՝ փոխառված բառերը բաժանելով հինգ կարգի՝ «բառեր, որոնք չունեին իրենց համազորը մեսրոպյան հայերենում. լրացնում էին լեզվի թերի կողմերը, հետևաբար գտան առանձին ընդունելություն և այսօր էլ սովորական գործածություն ունեն հայերենի մեջ», «բառեր, որոնց համազորները թեև կային մեսրոպյան հայերենի մեջ, բայց չունեին պահանջված ուժը և կամ այնպես համարվեցին և մրցման ժամանակ տեղի տալով հունաբան ձևերին՝ խափանվեցին», «բառեր, որոնք իրենց համազորները ունեին մեսրոպյան հայերենի մեջ և նրանց հետ միասին և հավասար աստիճանի վրա գործածվեցին և այժմ էլ գործածվում են», «բառեր, որոնք ունեին իրենց համազորները մեսրոպյան հայերենում, բոլորովին ավելորդ և անճաշակ նորաբանություններ էին, ոչ մի պահանջ չէին լրացնում, հետևաբար թե՛ հին հայերենում, և թե՛ արդի լեզվի մեջ ընդունելություն չեն գտել», «բառեր, որոնք չունեին իրենց համազորները հայերենում, թեև լրացնում էին իրենց ժամանակի գիտական պահանջները, բայց հետո ավելորդ դարձան և իրենց անճոռնի կազմության պատճառով էլ բոլորովին ջնջվեցին»²³:

Բնականաբար հունաբան հայերենի կերտած գիտական տերմինաբանությունը շատ բանասերների կողմից ընդունվելու հետ մեկտեղ նաև քննադատվում էր. նրանք հունաբան հայերենը համարում էին գրաբարի բռնի օտարացում, խաթարում, որը «արդյունք» էր հունաբան դպրոցի ներկայացուցիչների հունամոլության, հունարենի առանձնահատկությունների կուլյր, ստրկական հետևողության:

Ա. Բագրատունին այն բանասերներից էր, որը շատ բարձր էր գնահատում թարգմանիչների կատարած աշխատանքը, հմտությունը թարգմանությունների ճշտության մեջ՝ համարելով այն

²² Մուրադյան Գ., Լատինաբան հայերենի առնչությունը հունաբան հայերենին. արդի հայերեն քերականական տերմինաբանության ծագումը, ԲՄ, 19, «Նաիրի», Երևան, 2012, էջ 355:

²³ Աճառյան Յ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Հայ պետիրատ, Երևան, 1951, էջ 165-166:

միաժամանակ արժանիքներով և թերություններով լի, գտնելով, որ թարգմանիչները «անիմանալի կամ անսովոր բառեր չիներ են», «յուրաքան բառերը չարն ու բարին անխտիր խառն գործածեր են», «յուրաքան բառերեն շատ մըն ալ այնչափ մտեր է ազգին մեջ, որ մինչև բուն աղեկ ազգայինները բոլորովին մոռցուեր ու խափանուեր են»²⁴։ Ա. Սուքոյանը նորամուծություններին հետևյալ բնորոշումներն էր տալիս. «նիւթական կազմութեամբ նմանողութիւն», «հրեշաւոր հոլովք», «մեծաւ մասամբ շաղփաղփութիւնք», սրանց հետ մեկտեղ նա բարձր է գնահատում նախածանցների ստեղծումը՝ համարելով այն «հարստութիւն մը՝ որուն կարծենք թէ գլխաւոր հեղինակ եղած են այդ քերականութեան թարգմանողներն»²⁵։ Յ. Մանանդյանը շատ բարձր էր գնահատում հունաբան դպրոցի դերը, իսկ այդ շրջանի իմաստասերներին համարում հեղինակավոր գիտնականներ։ Նա ևս նրանց ստեղծած գիտական տերմինաբանությունը դիտում է որպէս լեզվի զարգացման բնական երևույթ՝ ասելով, որ «յուրաքան այդ լեզուի ուսումնասիրութեամբ է, որ հնարավոր պիտի լինի լուսաբանել մեր լեզուի յաջորդական զարգացումը»²⁶։ Ջահուկյանը ևս անդրադառնում է հունարենի անտեղի ու անհաջող նորամուծություններին, առանձնահատկություններին արհեստական յուրացումների, զուտ կաղապարային ընդօրինակումների հարցին, սակայն դրանով հանդերձ չի նսեմացնում այն խոշոր աշխատանքը, որ նրանք կատարել են հայ գիտափիլիսոփայական տերմինաբանության ստեղծման համար։ Նագտնում է, որ հունաբան դպրոցը ուրույն տեղ է գրավում հայ մշակույթի և լեզվի պատմության մեջ՝ համարելով այն «առաջադիմական և անխուսափելի երևույթ՝ իբրև գրական լեզվի մշակման արտահայտություններից մեկը»²⁷։ Ըստ Ա. Մուրադյանի՝ «հունաբան դպրոցի ներկայացուցիչները եղել են իրենց ժամանակի

²⁴ Արսէն Բագրատունի, Հայ երէն գրաբառ լեզուի յստակութեան վրայ, «Բազմավէպ», հ. չորրորդ, թիւ 13, Վենետիկ, տպ. սր. Ղազարով, 1846, էջ 203:

²⁵ Սուքոյան Ա., Սկիզբն հայկական լեզուի և Դիոնեսիոսի Թրակացւոյ քերականութիւն, «Բազմավէպ», հ. ԼԵ, Վենետիկ, տպ. սր. Ղազարով, 1877, էջ 108:

²⁶ Մանանդեան Յ., Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1928, էջ 11:

²⁷ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1954, էջ 45:

առավել զարգացած և առաջադեմ գաղափարներով տոգորված այն մտավորականները, որոնք թարգմանական ու ինքնուրույն բեղմնավոր գործունեությամբ նպաստել են հայ ժողովրդի քաղաքական ու հոգեկան անկախության համար մղած պայքարին»²⁸:

Քերականական տերմինաբանությունը կերտողները հավասարապես տիրապետել են հայերենին և հունարենին, նրանք պարզապես չեն փոխառել տերմինը, այլ վերցրել են նրա իմաստը և որոշակի սկզբունքով ստեղծել համապատասխան հայերեն բառը: Այս սկզբունքով առաջնորդվել են ոչ միայն տերմինաբանությունը կերտելիս, այլ և բառակազմական, քերականական և շարահյուսական նորամուծությունների ժամանակ ևս: Այս սկզբունքայնությունն ու հետևողականությունն էլ հունաբան հայերենի երկարատև գոյության առաջին կռվաններից մեկն էր:

Ն. Ադոնցը շեշտում է հունաբան դպրոցի թարգմանությունների խիստ բառացի լինելը, որն էլ բացատրում է տվյալ դպրոցի թարգմանական արվեստի առանձնահատկություններով²⁹: Իսկ Գ. Ջահուկյանը շեշտում է, որ հունաբան դպրոցի ստեղծած տերմինաբանությունը մինչ օրս էլ զգալիորեն գործածվում է քերականագիտության մեջ³⁰:

Լատիներենի վրա հիմնված արհեստական գրաբարը գոյատևել է մինչև XVIII դարի վերջերը՝ լինելով ժամանակի բարձր ու գիտական լեզու: «Լատիներեն հայերենը հին գրական հայերենի լայն գործառնության յուրատեսակ արտահայտությունն էր եվրոպայի հայ գաղթօջախներում, մինչ հայրենիքում գրում էին «ավանդական գրաբարով»³¹: Լատիներեն հայերեն էին ոչ միայն թարգմանական, այլ և ինքնուրույն երկերը, ինչպես օրինակ Յովհաննես Յովով Կոստանդնուպոլսեցու քերականությունը:

Ըստ Գ. Մուրադյանի՝ լատիներեն հայերենի՝ հետազոտողների մատնանշած առանձնահատկությունների համեմատությամբ հունաբան հայերենի հետցույց է տալիս, որ դրանց մի զգալի մասի

²⁸ Մուրադյան Ա., նշվ. աշխ., էջ 65:

²⁹ Ն. Ադոնց, Երկեր, հ. Գ (Հայերենագիտական ուսումնասիրություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ CLIX:

³⁰ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 111:

³¹ Յովհաննիսյան Լ., Գրաբարի երկու դրսևորում XVII դարում, ՊԲՀ, 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, էջ 183:

ակունքները հունաբան հայ երեւում են³²: Լատինաբան քերականները շատ դեպքերում վերցրել են հունաբանների կերտած հազվադեպ գործածություն ունեցող արհեստական ձևերը և համակարգված ներկայացրել: Դրա ցայտուն կիրառությունը ցույց է տվել Վ. Ջամբարձումյանը նախածանցավոր ու բարդ նորաբանությունների և ներգոյական հոլովի կազմության օրինակներով³³:

Ն. Տեր-Ներսեսյանը կարծում է, որ Լատինաբան հայ երեւն առաջացել է XVI դարի երկրորդ կեսին Լատինաբան հայ երեւ քերականությունների սկզբնավորումներով: Նա ասում է, որ «Ֆր. Ռիվոլայի հայ երեւ քերականութիւնը տակաւին չունի հետքերը Լատինաբանութեան: Կղեմէս Գալանոսինը մեծ քայլ մըն է դեպի Լատինաբանութիւն: Յովհաննէս Յակոբ Յոլովի «Ձտութիւն հայկաբանութեանը» պաշտօնական քերականութիւնն է Լատինաբան հայ երեւին, որ ահա մէկ դարէ ի վեր, կը կազմուէր Յռոմի շրջանակներուն մէջ: Մեր կարծիքով, իսկական Լատինաբան հայ երեւի առաջին քերականութիւնն է ասիկա (Ոսկանի քերականութիւնը), թէպէտ շատ ամփոփ, որ գրեթէ տասնամեակ մը կը կանխէ Յ. Յ. Յոլովի պաշտօնական քերականութիւնը: Ոչ միայն. այլ նաեւ կարգ մը կէտերով մէջ, Ոսկան շատ աւելի Լատինաբան կը յայտնուի՝ քան նոյն ինքն Յոլով»³⁴:

Հունարենից հետո Լատիներենը համարվում էր առավել կանոնարկված, հղկված-մշակված և եզրու, բնականաբար քերականություն են էլ դիտվում է «տիպար»³⁵:

Հայ գիտական տերմինաբանությունը սկզբնավորվեց հինգերորդ դարում՝ գրերի գյուտից հետո, և պայմանավորվեց թարգմանչաց շարժումով, երբ առաջ եկավ օտար բառերն ու բառակապակցությունները հայ երեւ համարժեքով արտահայտելու պահանջ: Երբ թարգմանիչները ստանձնեցին փիլիսոփայական, տրամաբանական, քերականական, ճարտասանական աշխատությունների

³² Մուրադյան Գ., նշվ. աշխ., էջ 343:

³³ Ջամբարձումյան Վ., Գրական հայ երեւի հունաբան և Լատինաբան տարբերակների փոխհարաբերության հարցի շուրջ, ԼՀԳ, 2, Երևան, 2008, էջ 141-142:

³⁴ Տեր-Ներսեսյան Ն., Ոսկան վարդապետի քերականական ըմբռնումները, «Բազմավեպ», թիւ 11-12, Վենետիկ - Ս. Ղազար, 1966, էջ 312:

³⁵ Աբաջյան Ա., Գրաբարի հոլովները Լատինաբան հայ քերականների ըմբռնմամբ, ԴԲՀ, 1, Երևան, 2005, էջ 231:

թարգմանություն գործը, նկատեցին գիտական գրականության և գիտական կայուն տերմինաբանության բացը, որն էլ սկսեց հաղթահարվել գիտականորեն ձևավորվող հունաբան դպրոցի ստեղծումից հետո:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչները թարգմանեցին Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստը», Ափտոնիոսի «Պիտոյից գիրքը», Թեոն Աղեքսանդրացու «Ճարտասանական վարժությունները», Պորփյուր Փյունիկեցու «Արիստոտելի ստորագությունների ներածությունը», Արիստոտելի, Պլատոնի, Դավիթ Անհաղթի և այլոց աշխատությունները: Թարգմանության ժամանակ դասական հայերենը առավելապես հարստացավ մի շարք նորամուծություններով, հատկապես քերականական տերմիններով, որոնց մի մասը առ այսօր էլ շարունակում է կենսունակ մնալ հայերենում: Սակայն չենք կարող չնշել նաև, որ շատ հաջող թարգմանական նորամուծությունների կողքին ստեղծվեցին նաև այնպիսիք, որոնք արհեստական ու օտար էին հայերենի քերականությանը:

Դիոնիսիոս Թրակացու աշխատությունը դարձավ այն սկիզբը, որից էլ առաջացավ հայ քերականագիտությունը: Թրակացու քերականության թարգմանությունը սոսկ թարգմանություն չէ, այլ հայերենի ուսումնասիրության առաջին համակարգված փորձն է³⁶: Հինգերորդ դարում Թրակացու քերականության հայերեն թարգմանության վրա հիմնվեց հարուստ մեկնողական գրականություն, որն էլ նպաստեց հայոց լեզվի քերականական համակարգի գիտական ամբողջացմանն ու ճշգրտմանը: Թրակացու երկի թարգմանությունից առաջ հայերը ծանոթ էին որոշ քերականական հասկացությունների, բայց եզրերի միօրինակություն չկար, որի հետևանքով էլ ավելի էր կարևորվում հայերեն քերականական եզրաբանության ստեղծման անհրաժեշտությունը: Քանի որ չկային համակարգված գիտելիքներ, չկար նաև մշակված ու համակարգված քերականական եզրաբանություն: Մինչ այդ նկատելի էր հունական և ասորական քերականական հասկացությունների օգտագործում, որոնք,

³⁶ Տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 76:

բնականաբար, փոխառվում էին այդ էզոկոներից: Ինչպես նշում է Ա. Մուրադյանը. «Քերականական հասկացությունների համանշանության (ալֆաբետիզացիայի, սիլոբիայի-կապիտալ-աթոնայի) կողքին, նկատելի էր նաև քերականական հասկացությունների որոշ բազմիմաստություն (աթոնայի- 1. տառեր, գրեր, 2. գրերի կապ, վանկ), որովհետև նրանց քերականական իմաստը ճշգրտված, սահմանազատված չէր բառի մյուս իմաստներից, հետևաբար դեռևս չէին մասնավորվել որպես եզրեր»³⁷:

Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայերեն թարգմանությունը ամբողջից անգամ ստեղծվեց հայերեն քերականական համակարգված եզրաբանություն: Եվ պատահական չէ, որ բնագրի հայերեն թարգմանությունը մինչև XVII դարի սկիզբը որպես քերականության դասագիրք է օգտագործվել հայկական դպրոցներում և շուրջ մեկ հազարամյակ եղել հայ քերականների մեկնությունների առարկան: Դրա շնորհիվ աշխատության եզրաբանությունն ունեցել է կարևոր պատմական նշանակություն հայ քերականագիտության ասպարեզում և ոչ միայն դարձել է հայ քերականությունների եզրաբանության հիմնական կորիզը, այլև մինչ օրս էլ շարունակում է գործել էզվաբանական-քերականական գրականության մեջ: Հայերենի քերականական տերմինների ստեղծման և զարգացման գործում մեծ է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանության դերը: Թարգմանչի աշխատությունն այն հիմնաքարն էր, որին հենվեցին հետագա քերականների մեկնողական երկերը, որոնց հեղինակներն էին Դավիթ փիլիսոփան, Մովսես Քերթոզը, Անանունը, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Համամ Արևելցին և այլք, որոնց գերիմոտներն էր լավագույնս մեկնաբանել Դիոնիսիոս Թրակացու երկը: Եվ այդ աշխատությունների մեջ ոչ միայն քերականական նյութն էր քննվում, այլև արծարծվում էին փիլիսոփայական և ճարտասանական բնույթի մի շարք հարցեր: Դիոնիսիոս Թրակացու աշխատության թարգմանությունն ու հին մեկնությունները գրված են բավականին բարդ ու արհեստական էզվով, որը հասկանալի էր միայն հունական կրթություն ունեցող մարդկանց, դրանով էր

³⁷ Մուրադյան Ա., նշվ. աշխ., էջ 133:

պայմանավորված երկի՝ մեկից ավելի հեղինակների կողմից արված մեկնությունները:

Դասական հայ երեսում քերականությունը կոչվում էր դարբնություն, իսկ քերականը՝ դպիր: Սակայն հետագայում թարգմանության շրջանում մի շարք տերմինների հետ մեկտեղ կրտսեր թարգմանիչները փոխեցին նաև *դարբնություն* բառը *քերականություն* բառով, իսկ *դպիրը* դարձավ *քերթող*, որը միաժամանակ և՛ քերական, և՛ բանաստեղծ էր նշանակում³⁸:

Հայ քերականագիտությունը, անցնելով երկար ուղի, ստեղծել է հայեցի գիտական կայուն տերմինաբանություն, որը մեծ մասամբ գործածական է նաև ժամանակակից քերականության մեջ, և ոչ միայն տերմինների մեծ մասն է մինչ այսօր անփոփոխ, այլև նույնիսկ որոշ սահմանումներ (օր.՝ շաղկապի սահմանումը)³⁹: Քերականական ըմբռնումների ու հասկացությունների հարուստ ընդգրկումը իր միտվածությամբ, հիմնականում սկսված էր բուն իսկ մայրենի լեզվի օրինաչափությունների քննությանը, և հունական քերականագիտության ուղղակի առնչությամբ հայ քերականագիտությունը ձևավորվել, աճել և հզորացել է հայկական դարբնության ընդհանուր ակունքների հիման վրա: Թարգմանական աշխատանքի ընթացքում կրտսեր թարգմանիչները նկատեցին, որ գիտական գրականությունը պահանջում է համապատասխան լեզու և գիտական կայուն տերմինաբանություն⁴⁰:

Քանի որ հետազոտության նյութը ձեռագրերն են, ուսումնասիրությունը կատարվում է ձեռագիր սկզբնաղբյուրների հիման վրա, և հետևաբար անխուսափելի է աղբյուրագիտական որոշակի քննություն:

Ձեռագրերը հայ ժողովրդի ստեղծած այն արժեքներից են, որոնք մշակույթի հարատև մասունքներն են, պատմության վկան անցյալ դարերից: Աշխատանքի մեջ քննվող տերմինների մեծ մասը հունաբան և լատինաբան (պայմանավորված ձեռագրերի թվագրումով) տերմինների փոխառության և պատճենման «արդյունք» են:

³⁸ Աղայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1958, էջ 79:

³⁹ Նույն տեղում, էջ 86:

⁴⁰ Մուրադյան Ա., նշվ. աշխ., էջ 9:

Սույն աշխատանքի համար նախապես ուսումնասիրել ենք Մ. Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանի և Չմմառի վանքի մատենադարանի ձեռագրերի ֆոնդերը: Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) հարուստ ձեռագրական գանձարանից ընտրել ենք 15 ձեռագիր և մեկ ձեռագիր էլ Չմմառի վանքի մատենադարանի Անտոնյան հիմնական հավաքածուից (այսուհետև՝ BzAn) և ուսումնասիրությունը կատարել ենք վերոհիշյալ 16 ձեռագրի շրջանակներում՝ թվագրված ԺԴ-ԺԵ դարերով: Ընտրությունը կատարելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով. նախ ընտրել ենք բոլոր այն ձեռագրերը, որոնք պարունակում են քերականական աշխատություններ: Այնուհետև առանձնացրել ենք տերմինների տեսանկյունից չուսումնասիրված, չհրատարակված քերականական աշխատություններ պարունակող ձեռագրերը, ընտրությունն էլ կատարել ենք արդեն հայտնի լեզվաբանների կողմից ուսումնասիրված քերականական աշխատությունների բացառումով: Իսկ ուսումնասիրության սահմանները ԺԴ-ԺԵ դարերն ենք ընտրել, պայմանավորված այն հանգամանքով, որ ԺԴ դարից առաջ ձեռագրերում հանդիպած քերականական բնագրերը ուսումնասիրված են և հրատարակված, իսկ ԺԵ դարով սահմանափակվել ենք աշխատանքի սահմանված ծավալը չգերազանցելու նպատակով:

Ապա յուրաքանչյուր ձեռագրում մանրամասն ուսումնասիրել ենք մեզ հետաքրքրող քերականական բնագիրը: Բնագրերից քաղել ենք լեզվաբանական այն տերմինները, որոնք պայմանականորեն նորահայտ ենք համարում՝ հաշվի առնելով հետևյալը. ա) որևէ նախորդ քերականի կողմից չեն գործածվել, բ) որևէ քերականի օգտագործած տերմինի ավելի վաղ կիրառությունն է ուսումնասիրության նյութ ձեռագրում, գ) որևէ քերականի կողմից գործածված տերմինի բուն իմաստից բացի այլ իմաստով կիրառությունն է, դ) որևէ քերականի օգտագործած տերմինի հնչյունական կամ բառակազմական նոր տարբերակն է:

Նշենք, որ բացի Երևանի Մատենադարանից և Չմմառի վանքի մատենադարանից՝ մյուս ձեռագրական հավաքածուներն ուսումնասիրելիս օգտվել ենք արդեն տպագրված ձեռագրացուցակներից, որոնցում տեղ են գտել մեր

ոսւսումնասիրած ձեռագրերի ընդօրինակությունները: Այդ նյութերը Երևանի և Չմմառի վանքի ձեռագրական ժառանգության հետ կազմում են սույն ատենախոսության աղբյուրագիտական-ձեռագրագիտական հիմքը: Աշխատանքի ընթացքում ճշգրտվել են ոսւսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնող առանձին ձեռագրերի ստեղծման հանգամանքներ և հեղինակներ:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ-ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Գրաբարի քերականությունները, ինչպես հայ տնի է, մինչև XVIII դարի կեսերը գրված են եղել հունարենի և լատիներենի քերականությունների օրինակով և պարունակել են գրաբարին խորթ արհեստական ձևեր, այնուհետև միջնադարյանների սրբագրմամբ, սկզբնավորվել է ինքնատիպ միայն գրաբարյան իրողություններն ամփոփող և սահմանող քերականությունների փուլը: Այս աշխատությունները, տարբեր լինելով ժամանակով, կրած ազդեցություններով, քերականության ըմբռնման ու ձևակերպման սկզբունքներով, գիտական ու կրթական նպատակներով նույնանում էին: Քերականական մեկնությունները՝ որպես ձեռնարկ-դասագրքեր, դարեր շարունակ գործածվել են ճեմարաններում, վարդապետարաններում և համալսարաններում, դրանք, բացի բուն քերականական գիտելիքից, ներառել են նաև հարակից իմացություններ, հիմնականում փլիհսոփայական բնույթի՝ վերածվելով յուրատեսակ փոքրիկ «հանրագիտարանների»⁴¹: Բովանդակային այդ ընդգրկման հաստատումն են նաև միջնադարյան քերականների բնորոշումները. նրանք քերականության յուրացումը համարում էին իմաստասիրության «դուռ և բանալի», գիտելիքի բարձր ոլորտ մուտք գործելու միջոց և հետագա իմացությունների ուղեկից⁴²: Վարդան Արևելցին, ընդունելով Դիոնիսիոս Թրակացու այն միտքը, որ քերականությունը հմտություն է, այնուամենայնիվ հավելում էր, որ այն գիտություն է իր բնույթով, բացահայտում է լեզվի իրականությունների քերականական իմաստները, որի շնորհիվ էլ քաջահմուտ ուսումնականը կարողանում է ըմբռնել լեզվի

⁴¹ Խաչերեան Լ., Հայ լեզուաբանության առաջացման պատմությունը և քերականագիտական միտքը V-XVI դարերում, Լիզպոն, 1992, էջ 3:

⁴² Եսայի Նչեցի, Վերլուծություն քերականության, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966, էջ 63, նաև Գրիգոր Մագիստրոս, Մեկնություն քերականին, Մատենագիրք հայոց, հտ. Ժ2 (ԺԱ դար), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 388, Յովհաննես Երզնկացի, Հաւաքումն մեկնության քերականի, printed by Alco Printing Co, Լոս Անճելըս, 1983, էջ 85:

կանոնավորությունը, հղկվածությունն ու գեղեցկությունը⁴³: Վարդան Արեւելցին քերականության մասին իր այս ըմբռնմամբ հետևում է Դավիթ քերականին, որը ևս գտնում է, որ քերականությունը իմացականությամբ և գիտությամբ յուրացվող ուսմունք է⁴⁴: Այս ըմբռնումը արտացոլված էր կրթական ծրագրերում. քերականությունը և ճարտասանությունը դիտվում էին իբրև նախագիտելիք ամեն իմացության՝ «նախակրթութիւն ինչ»⁴⁵, որից հետո միայն ընձեռվում էր իմաստասիրական ուսումնառության իրավունք: Իմացության այսպիսի աստիճանակարգ կիրառվում էր նաև Եվրոպայի միջնադարյան համալսարաններում, որտեղ քերականությունը «Եռյակ» դասընթացների (Trivium) բաղկացուցիչն էր, որպես առաջնային ուսումնական առարկա և դասավանդման իրավունք շնորհելու պայման⁴⁶:

Միջնադարում ուսուցումը դյուրացնելու նպատակով քերականական հասկացությունները տրվում էին հարց ու պատասխանի շարադրանքով, որը կոչվել է կատեխիզիս⁴⁷: Այս կառուցվածքը կիրառվել է համառոտ դավանաբանական երկերում, ապա թեմատիկ ծավալումով ընդգրկել այլ գիտություններ: Այդ եղանակի հետզհետե տարածումը նկատել է ամերիկացի գիտնական Պոլ Մոնրոն՝ գրելով. «Մասնավոր թեմաների շուրջ գրված ձեռնարկները կատեխիզիսի ձևով են. այն է՝ հարց ու պատասխանի, որոնք այնքան սովորական դարձան հետագա դարերում»⁴⁸: Մինչդեռ այդ կառուցվածքը կիրառված է միջնադարյան հայկական ձեռագրերում, հետևաբար կարելի է կարծել, որ հայկական

⁴³ Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, ՅՍՄՐ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 8:

⁴⁴ Ջահուկյան Գ., Դավիթ քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը, ԲՄ, 3, ՅՍՄՐ ԳԱ հրատ., Երևան, 1956, էջ 246:

⁴⁵ Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, ՅՍՄՐ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջ 14:

⁴⁶ S. S. Laurie, The Rise and Early Constitution of Universities with a Survey of Medieval Education, D. Appleton and company, New York, 1907, p. 225.

⁴⁷ Բառն առաջացել է հունարեն գոյականից՝ ή καθήχσις «հրապարակում, (բանավոր) ուսուցում, խրատ», որը ձևավորվել է բայից՝ κατήξω «հրապարակել, (բանավոր) ուսուցանել, սովորեցնել», տե՛ս <http://urokirus.com/online/blogs/7433-2011-06-13-13-52-38.html>.

⁴⁸ Paul Monroe, A Brief Course in the History of Education, The Macmillan company, New York, 1935, p. 127.

դարձությունն ընտրել է նյութի մատուցման մեթոդական այնպիսի սկզբունք, որին եվրոպան հետևել է ավելի ուշ⁴⁹:

Կարելի է առանձնացնել միջնադարյան մեկնությունների մի քանի տեսակներ ըստ կառուցվածքի՝ ներհյուսված մեկնություններ, բան-մեկնություններ, հարցարաններ⁵⁰: Կառուցվածքից ելնելով՝ Դավիթ փիլիսոփա-քերականի⁵¹, Անանունի⁵², Մովսես Քերթոզի⁵³, Ստեփանոս Սյունեցու⁵⁴, Համամ Արևելցու⁵⁵, Գրիգոր Մագիստրոսի⁵⁶, Հովհաննես Երզնկացու⁵⁷, Հովհաննես Ծործորեցու⁵⁸ մեկնությունները նույնական են, ծավալային որոշակի տարբերություններով: Սրանք կոչվում են ներհյուսված մեկնություններ, այսինքն՝ մեկնիչը տալիս է սահմանումը, որին անմիջապես հաջորդում են մյուս քերականների բացատրությունները:

Կա մեկնությունների մեկ այլ խումբ, որը կոչվում է «բան-մեկնություններ»: Այդ խմբին են պատկանում Վարդան Արևելցու⁵⁹ և Եսայի Նչեցու⁶⁰ մեկնությունները. տարբերությունը քերականությունների ներկայացման ձևն է: Այստեղ քերականությունները բաժանված են երկու մասի՝ «Բան» և «Մեկնություն»: Առաջին մասի մեջ հարցադրում է արվում, իսկ երկրորդում տրվում է բացատրություն-մեկնությունը: Մասնակիորեն այս շարքին կարելի է դասել նաև Գրիգոր Տաթևացու քերականական աշխատությունները, որոնց կառուցվածքը հետևյալ բաժանումն ունի, նախ՝ քերականության առաջին մասում տրվում է

⁴⁹ Այս մասին մանրամասն տե՛ս Մանուկյան Տ., Կատեխիզիսային քերականությունները XIV-XVII դդ. հայերեն ձեռագրերում, ԲԵՅ, 140.2, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 34-40:

⁵⁰ Դավիթ Չեյթունցի, Մեկնութիւն քերականի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 21-23:

⁵¹ Ն. Ադոնց, Նշվ. աշխ., էջ 77-124, հմմտ. Մատենագիրք հայոց, հ. Ե (Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1161-1187:

⁵² Նույն տեղում, էջ 125-156, հմմտ. Նույն տեղում, էջ 1217-1238:

⁵³ Նույն տեղում, էջ 157-179, հմմտ. Նույն տեղում, էջ 1189-1214:

⁵⁴ Նույն տեղում, էջ 181-219, հմմտ. Մատենագիրք հայոց, հ. 2 (Ը. դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 571-593:

⁵⁵ Նույն տեղում, էջ 251-285, հմմտ. Մատենագիրք հայոց, հ. Թ (Թ. դար), Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 534-553:

⁵⁶ Նույն տեղում, էջ 221-249, հմմտ. Մատենագիրք հայոց, հ. Ժ2. (ԺԱ. դար), էջ 386-481:

⁵⁷ Հովհաննես Երզնկացի, Նշվ. աշխ., էջ 79-303:

⁵⁸ Հովհաննես Ծործորեցի, Համառատ տտեսութիւն քերականի, printed by Alco Printing Co, Լոս Անճելըս, 1984, էջ 109-327:

⁵⁹ Վարդան Արևելցի, Նշվ. աշխ., էջ 71-167:

⁶⁰ Եսայի Նչեցի, Նշվ. աշխ., էջ 53-186:

հարցադրումը՝ «բան» բառով առանձնացնելով, ապա՝ անմիջապես հաջորդում է նյութի պարզաբանումն ու վերլուծությունը «լուծումն» բառով առանձնացրած⁶¹: Գրիգոր Տաթևացին գրչության արվեստի վերաբերյալ ունի հետևյալ ձեռնարկ աշխատությունները՝ «Նորին Գրիգոր աշակերտի Յովհաննու լուծումն համառոտ դժուարիմաց բանի ի գիրն գրչութեան Առիստակիսէ հռետորէ», «Գրիգոր եռամեծի լուծմունք համառոտ խրատ գրչութեան Գեորգա վարդապետի գոր նախ խնդրեալ է ի նմանէ Կոստանդեայ գրչի և ապա Գոյներիցանց Ստեփաննոսի», «Դարձեալ խրատ նոյն Գեորգ վարդապետի առ Ստեփաննոս Գոյներիցանց գրեալ», Տաթևացու աշխատություններում սահմանազատված չեն քերականությունն ու տրամաբանությունը, նա երկուսը քննում է միահյուսված: Ըստ Ջահուկյանի՝ «Տաթևացու քերականական հասկացությունները նույնանում են տրամաբանականի հետ»⁶²: Նա քննում է լեզվական իրողությունները ոչ թե որպես քերական, այլ տրամաբան-իմաստասեր:

Այնուհետև XV-XVII դարերում ձևավորվեցին քերականության դասագրքերի աշակերտների համար ավելի պարզեցված տարբերակներ, որոնք կոչվում էին հարցարաններ⁶³: Այս դասագրքերում քերականությունը շարադրված է հարց ու պատասխանի միջոցով: Ի տարբերություն դասագրքերի նախորդ կառուցվածքների՝ այստեղ ոճն ավելի աշխույժ է, դյուրամատչելի, իսկ օրինակներն առատ են: Այս ձևը կիրառել են Դավիթ Չեյթունցին⁶⁴, Առաքել Սյունեցին իրենց աշխատություններում⁶⁵:

Սրանցից տարբերվում է Յովհաննես Քոնեցու աշխատությունը⁶⁶: Ինչքան էլ որ Յովհաննես Քոնեցին օգտվել է

⁶¹ Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 180:

⁶² Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), էջ 293:

⁶³ Դավիթ Չեյթունցի, նշվ. աշխ., էջ 22-23:

⁶⁴ Նույն տեղում, էջ 61-187:

⁶⁵ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, printed by Alco Printing Co, Լոս Անճելոս, 1982, էջ 67-198:

⁶⁶ Յովհաննես Քոնեցի, Յաղագս քերականին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, էջ 155-221:

նախորդ մեկնիչ ներից, այդուհանդերձ նա հետևել է V դարի քերական Պրիսցիանոսի քերականագիտական հայացքներին⁶⁷:

Միջնադարյան քերականական աշխատությունների ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ դրանք լոկ քերականական ուսումնասիրություններ չէին, այլ մեկնողական բնույթի ձեռնարկ-դասագրքեր էին, որի հավաստումը մեկ անգամ ևս տեսնում ենք ընտրված ձեռագրերում:

Ընտրված ձեռագրերում քերականական աշխատությունները ըստ շարադրանքի բնույթի բազմազան են. քերականական նյութեր կան ծառերի տեսքով, հարց ու պատասխանով շարադրված և սովորական շարադրանքով գրված քերականական աշխատություններ:

Հայերեն քերականական աշխատությունները սովորաբար ներկայացված են շարադրանքի տեսքով, սակայն Երևանի Մատենադարանի 2335 և 5619⁶⁸ ձեռագրերը հետաքրքրական ու բացառիկ են նրանով, որ նրանց մեջ, բառային շարադրանքից բացի, քերականական նյութը ներկայացված է գծապատկերային ծառի տեսքով⁶⁹: Այս գծապատկերները լեզվաբանական հասկացությունների և հատկանիշների դասակարգումներ են ծառերի տեսքով, այսինքն՝ սրանք քերականական տերմինների յուրատեսակ ձևային նկարագրություններ են, որոնք ստեղծվել են ուսումնական նպատակադրումով և ավելի մառչելի, դյուրին ու պատկերավոր ներկայացնելու համար լեզվական նյութը՝ հայերենի խոսքի մասերից յուրաքանչյուրը՝ իր քերականական հատկանիշներով և օրինակներով: Սա շատ կարևոր և նշանակալի է՝ հատկապես եթե հաշվի առնենք, որ միայն XX դարում ձևային նկարագրությունը դարձավ սկզբունք, թեև մինչ այդ լեզվական փաստերին ձևային մոտեցման և նույնիսկ նրանց կադապարային ներկայացման սաղմերը հայտնի էին դեռևս անտիկ շրջանում և հին

⁶⁷ Նույն տեղում, էջ 53:

⁶⁸ 5619 ձեռագիրը ժողովածու է՝ բաղկացած մի քանի ձեռագրերից. հիմնական մասը գրվել է 1176 թ., մյուսները՝ XIV, XV դարերում, իսկ մեզ հետաքրքրող ծառը պարզապես XVIII դարի հավելագրություն է, այդ իսկ պատճառով խնդրո՞ւնք ամարկալ ընագրի այս ձեռագրում ամկաօրինակը ներկայացնում ենք որպես XVII դարի գործ:

⁶⁹ Սույն նյութի մասին առավել մանրամասն տե՛ս Մանուկյան Տ., Միջնադարյան հայկական քերականությունների մեջ լեզվաբանական հասկացությունների և հատկանիշների դասակարգումը ծառերի տեսքով, ԲՄ, 19, «Նաիրի» հրատ., Երևան, 2012, էջ 389-392:

հնդկական քերականագիտության մեջ (Վառունի՝ խոսքի մասերի ձևային դասակարգումը կամ Պանինիի՝ քերականական համակարգում պայմանական նշանների կիրառումը)⁷⁰:

Նյութի շարադրանքի բնույթով հետաքրքիր են նաև հարց ու պատասխանի՝ կատեխիզիսի ձևով շարադրված քերականությունները: Հայերեն ձեռագրերում կատեխիզիսների միջոցով ներկայացվում էին հիմնականում ուսումնական ձեռնարկները, որոնցում հարց ու պատասխանը տեղի էր ունենում ուսուցչի և աշակերտի միջև, ընդ որում ոճը խիստ աշխույժ էր, օրինակներն՝ առատ, որն էլ ուսուցումը դարձնում էր հնարավորինս մատչելի: Քանի որ ուսուցումը կատեխիզիսների միջոցով դառնում էր ավելի առարկայական ու տեսանելի, ուստի բացառություն չէին և քերականական աշխատությունները, որոնք մի քանի ձեռագրերում ներկայացվում են կատեխիզիսների տեսքով: Ուսումնասիրության առարկան են սույն բնույթի ՄՄ 2281, 2307, 2366 և 2448 ձեռագրերը, որոնցում քերականությունը ներկայացված է հարց ու պատասխանի տեսքով⁷¹: Հարց ու պատասխանի միջոցով շարադրված քերականական աշխատությունները խորթ չէին հայ քերականագիտությանը, քանի որ Դավիթ Չեյթունցին իր քերականությունը կազմել է՝ նախորդ քերականների մեկնությունները հարց ու պատասխանի վերածելով:

Հայերենի քերականության պատմությունն իր հիմնական անցումներով, փուլային առանձնահատկություններով հայտնի է և ուսումնասիրված, սակայն այդ շղթան լրացնելու ձեռագրային նյութը չի սպառվել: Մի շարք քերականական բնագրեր դեռևս գիտական շրջանառության մեջ դրված չեն. ընտրել ենք այդպիսի 16 ձեռագիր, որոնք պահվում են Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրատանը և մեկը Չմմառի վանքի մատենադարանի հիմնական հավաքածուում⁷², քննել ենք ստորև՝ նկարագրելով դրանց բնույթը, կառուցվածքային և բովանդակային հիմնական հատկանիշները:

⁷⁰ Հովսեփյան Լ., Ժամանակակից հայերենի ձևային նկարագրության խնդիրներն ու սկզբունքները, «Ջահուկյանական ընթերցումներ-2007», «Վան Արյան», Երևան, 2007, էջ 112:

⁷¹ Նյութի մասին առավել մանրամասն տե՛ս Մանուկյան Տ., Կատեխիզիսային քերականությունները XIV-XVII դդ. հայերեն ձեռագրերում, էջ 34-40:

⁷² Ուսումնասիրվող ձեռագրերից նյութերի ընտրության, աշխատությունների ժամանակի և տեղի մասին տվյալները քաղել ենք Մաշտոցյան Մատենադարանի և

Նշված ձեռագրերն ընդհանուր դասակարգմամբ կարելի է խմբավորել ըստ ավանդման ձևի և դրանցում առկա քերականական նյութերի ամբողջականության. առանձնացրել ենք երեք տեսակ.

ա. առանձին ամբողջական քերականական ձեռագրեր,

բ. տարբեր բնույթի ձեռագրերում (մեծ մասամբ՝ ժողովածուներում) ամբողջական քերականական աշխատություններ,

գ. հատվածական աշխատություններ և քերականական պատառիկներ (իսկզբանե հատվածական եղած և վնասվածության հետևանքով պատառիկ դարձած):

Դրանց կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները կամփոփվեն՝ ըստ նյութի մատուցման եղանակի ու քերականական հարցերի ընդգրկման:

Թե՛ ձեռագրերում եղած հատվածական աշխատություններն ու քերականական պատառիկները, թե՛ տարբեր ժողովածուներում առկա ամբողջական քերականական երկերը և թե՛ հատկապես այն ձեռագրերը, որոնց բովանդակությունը միայն քերականություն է, գրված են հիմնականում ուսումնական նկատառումով: Հաճախ ձեռագիր ժողովածուներում տեղ գտած հատվածական տեքստերը ծաղկաքաղ են արված ըստ պատեհի, նպատակի կամ ուսումնական որևէ ծրագրի ծառայեցնելու⁷³:

1. ԱՊԱՆՁԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ

Այս բաժնում քննում ենք այն ձեռագրերը, որոնք պարունակում են մեկ ամբողջական քերականական աշխատություն:

Զմամբի վանքի մատենադարանի ձեռագրացուցակներից, ինչպես նաև Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի «Մայր քարտարանից» և «Մայր մատյանից», որոնք հաճախ ճշգրտված են մեր և Մատենադարանի «Ձեռագրագիտության և Մայր ցուցակի» բաժնի մյուս աշխատակիցների ուսումնասիրությունների դեմս չհրատարակված նյութերի հիման վրա, որոնք տրամադրվել ու համար խորին շնորհակալություն են եղել հայ տնում բաժնի ղեկավարին՝ Գևորգ Տեր-Վարդանյանին, և աշխատակիցներին:

⁷³ Գրչագրերից բնագրային մեջբերումներ կատարում ենք նույնությամբ՝ պահպանելով աղբյուրի ուղղագրության հարադատությունը, իսկ կետադրությունն ու տողադարձը կատարում ենք ըստ մերօրյա կանոնների: Ուղղագրական սխալների դեպքում տվյալ բառին անմիջապես կից փակագծերում նշում ենք՝ «այսպես» կամ տվյալ տառի ընդգծումով: Չուգած գրությունների դեպքում՝ *վանգ/վանկ, դրուակ/դրուագ, այլ/այդ* և այլն, հատուկ ընդգծումներ չենք անում:

Ուսումնասիրության համար ունենք միայն մեկը՝ 2284 թվահամարը կրող ձեռագիրը:

ՄՄ 2284 ձեռագիրը⁷⁴ գրվել է 1690 թվականից առաջ, իսկ գրչության վայրի մասին տեղեկություններ չկան: Ձեռագիրը, որ միայն այս նյութն է պարունակում, ունի «Նորակրթից ի հայախօսութիւն, դիւր և համառօտ նախաւարժութիւն, ներում տարազտեալք եզերք հայկազինք, իւրայնօք պատահմամբք հանդերձ աւանդին, իսկ և համակերտմունք եզերաց նոյնոց, մի ընդ այլոց մանրամասնեայց մեկնեալք գետեղին» խորագիրը: Այս քերականական աշխատության-դասագիրքը, ինչպես նկատում ենք, ունի չափածո և բովանդակալից խորագիրը, որը արտացոլում է աշխատության բովանդակությունը և նպատակը՝ հայախօսության հեշտ և համառոտ նախաւարժություն, որում գետեղված հայերեն տերմինների մի մասը ավանդված են իրենց բնորոշումներով, մինչդեռ մյուս մասը առանց այլ և այլ մանրամասնությունների է գետեղված:

Աշխատությունը բաղկացած է երեք գրքից (գլխից)՝ գիրք առաջին, երկրորդ, երրորդ: Գրքերում խոսվում է բառագիտության, ձևաբանության և շարահյուսության մասին, և յուրաքանչյուրն էլ համապատասխանաբար բաժանվում է ենթագլուխների: Առաջին գրքում խոսվում է անուն և դերանուն խոսքի մասերի հոլովման մասին, բայի լծորդությունների, նաև նախադրությունների, մակբայների, միջարկությունների և շաղկապների մասին: Երկրորդ գիրքը ներկայացնում է նախադրության և բայի հոլովառությունը, իսկ երրորդ գրքում մանրամասն խոսվում է քերականության բաժիններից ձևաբանության մասին՝ սահմանումներով, տեսակներով, օրինակներով հանդերձ: Չուգահեռներ տանելով՝ ասենք, որ ձեռագրում կան բազմաթիվ տերմիններ, որոնք հայտնի են քերականագիտության մեջ որպես առաջին գործածություններ լատինաբան մի շարք քերականներից՝ Յովհաննես Յովով Կոստանդնուպոլսեցի, Կղեմես Գալանոս: Առաջին հայացքից թվում է՝ բոլոր լատինաբան քերականություններից ծաղկաքաղ է արված: Յատկապես հոլովների հարացույցերում մեծ մասամբ գործածված են

⁷⁴ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, Ի. Է. «Նայիրի» հրատ., Երևան, 2012, էջ 795-798:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցուն հատուկ հոլովներ: Բայի լծորդությունների հարացույցները, շաղկապը, համաձայնության բաժինը շատ ընդհանրություններ ունեն Հովհաննես Հոլովի քերականության հետ: Նախադրության և մակբայի, միջարկության հատվածները նմանեցնում ենք Կղեմես Գալանոսի քերականությանը: Նյութը բավականին շատ հագեցած է օրինակներով, բնականաբար ձեռագիրը ինքնանպատակ չի պատվիրվել ու գրվել, այլ դասագիրք ծառայելու համար: Երկրորդ գրքի վերջին ենթաբաժինը նվիրված է տրամաբանությանը: Առավելագույն թվով նորահայտ տերմիններ ենք առանձնացրել նաև 2284 ձեռագրից. դրանց թիվը քառասունն է:

Ուսումնասիրության նյութ դարձած քերականական աշխատությունները, որոնք առանձնացրել ենք բազմաթիվ տարաբնույթ ձեռագրերում, ազդված լինելով հունաբան, առավել ևս լատինաբան քերականություններից, կարելի է ինքնուրույն քերականություններ համարել: Ինչքան էլ որ որոշակիորեն զգալի է նախորդ քերականների ազդեցությունը թե՛ կառուցվածքային և թե՛ տերմինների գործածության առումով կան ինքնուրույն հատվածներ, ինչպես նաև բազմաթիվ նորահայտ տերմիններ, որոնց քննությանն առավել մանրամասն կանդորադառնանք հաջորդ գլուխներում:

2. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջական քերականական աշխատությունները հիմնականում կարելի է գտնել տարբեր բնույթի ժողովածու ձեռագրերում: Ուսումնասիրության նյութերը վերցրել ենք ութ ձեռագրից:

12 թվահամարի ձեռագիրը⁷⁵ գրվել է 1692 թ. Լեոպոլիս (Լվով) քաղաքում: Ձեռագիրը ձեռնարկ-դասագիրք է մանուկներին ուսուցանելու համար՝ «Այբբենարան մանկանց նորավարժելեաց հանդերձ աղօթիւք եւ մասամբ նախապետականօք քրիստոնէականի վարդապետութեան, բաժանեալ ի դրուակս Ե...»: Մ. Գասպարյանը

⁷⁵ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 45-50:

պարզաբանում է, որ «այն ուսուցչի մեթոդական ձեռնարկ է»⁷⁶: Սա առանձին ուսումնական գիրք-ձեռագիր է, որը ոչ միայն քերականական հատված ունի, այլև կրոնական, բարոյակրթական, խրատական, աշխարհիկ բովանդակությամբ ընթերցարաններ:

«Այբբենարանը...» բաղկացած է հինգ մասից («դրուակից»), որոնցից առաջինում խոսվում է քերականության որոշակի հասկացությունների՝ տառի, փաղառության, առոգանության, նշանագրերի, թվականի մասին: Այնուհետև հաջորդ մասերում ուսուցանում են տերունական աղոթքը, աստվածաշնչյան գրքերից ծաղկաբաղարված հատվածներ են բերվում:

Քննության առարկա քերականական մասը գտնվում է ձեռագրի 6ա-15ա էջերում, որտեղ ընտրողաբար ներկայացվում են մի քանի նյութեր որոշակի տարիքի երեխաների ուսուցման նպատակով: Քերականական նյութն ունի վեց ենթաբաժին, որոնցից առաջինն ունի «Յաղագս տառից» խորագիրը, ուր և քննվում են տառերի, գրերի տեսակները՝ երկաթագիր, գլխագիր, բոլորգիր, նոտրգիր: Հաջորդ բաժինը նվիրված է վանկի կամ փաղառության ուսումնասիրությանը, այնուհետև խոսվում է առոգանության և նրա տեսակների մասին, հաջորդիվ շարունակվում է բառերի փոխարեն դրվող նշանագրերի քննությունը՝ տալով մոլորակների, կենդանակերպի նշանների ցանկ և առավել հաճախակի գործածվող մի շարք բառերի նշանագրերը, խոսվում է նաև պատվի նշանի և համառոտության մասին և այբբենական հերթականությամբ բերվում են մեծ թվով բառերի օրինակներ՝ համառոտված տարբերակներով հանդերձ, բնականաբար ուսուցողական նպատակով: Քերականության բաժինը հեղինակը եզրափակում է՝ ներկայացնելով թվական խոսքի մասը, որն անվանում է *թիւ* տերմինով:

Միջնադարյան մյուս այբբենարանների համեմատ քննության առարկա ձեռագիրն ունի մի շարք առավելություններ ու նորություններ. առաջինն այն է, որ այստեղ կրոնական բնույթի ընթերցարաններից բացի՝ կան նաև աշխարհիկ բովանդակությամբ նյութեր, երկրորդ, որ փաղառության ուսուցումը հեշտացնելու

⁷⁶ Գասպարյան Մ., 1692 թ. Լվովում գրված հայ այբբենարանը, «Սովետական մանկավարժ», 8, Լուսհրատ, Երևան, 1940, էջ 106:

նախատակով այն բաժանված է որոշակի աստիճանակարգերի, «Այբբենարանի» նորություններից է նաև կետադրական նշանների ուսուցումը⁷⁷: Նշենք, որ ձեռագիրն ունի մի շարք ընդօրինակություններ, որոնք գտնվում են ձեռագրական այլ հավաքածուներում՝ Վիեննայի Մխիթարյանց Մատենադարանում (ձեռ. 488, 516, 520, 530, 968) և Պետերբուրգի հավաքածուներում (ՄԵ, B 76, ձեռ. 313)⁷⁸: Այս ձեռագրից քաղված վեց նորահայտ տերմիններ են:

ՄՄ 2276 ձեռագիրը⁷⁹ տարբեր նյութերի ժողովածու է, գրվել է 1688-1697 թվականներին Ամասիայում, և ձեռագրի 139ա-196բ էջերում կա «Յադագս քերականութեան» վերնագրով նյութ, որը քննության շրջանակներում է: Աշխատությունը առկա է երևանի Մատենադարանի մեկ այլ գրչագիր օրինակում ևս⁸⁰: «Քերականությունը» այս խմբի ձեռագրերի շարքում առանձնանում է իր ծավալով, որտեղ բաժին առ բաժին խոսվում է ամեն մի քերականական երևույթի, խոսքի մասի և, առհասարակ, քերականական և գրչության արվեստների մասին: Առանձնացվում են՝ անուն, դերանուն, բայ, ընդունելություն, հոդ, նախդիր, առբայ, շաղկապ, իսկ շարահյուսության բաժնում քննվում է բայի, ընդունելության, հոդի, առբայի, շաղկապի և նախադրության շարադասությունը: Տերմինների առումով այս քերականությունը աղերսներ ունի լատինաբան գրեթե բոլոր քերականների՝ Կղեմես Գալանոսի, Ոսկան երևանցու, Յովհաննես Յովով Կոստանդնուպոլսեցու և այլոց հետ, նաև որոշակի կառուցվածքային նմանություններ կան Մխիթար Սեբաստացու, Բաղդասար Դպիրի քերականությունների հետ, չնայած Բաղդասար Դպիրի և Մխիթար Սեբաստացու քերականությունները ժամանակային առումով հաջորդում են ձեռագրին: Տարբեր քերականների

⁷⁷ Գասպարյան Մ., Մեսրոպյան այբբենարանները ԺԵ-ԺԸ դարերում, «Էջմիածին», ԺԵ տարի, Ը, Էջմիածին, 1960, էջ 36:

⁷⁸ Mnacakanian P. [Մնացականյան Փ.], Elementarz polskich Ormian [Լեհահայոց այբբենարանը], „Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego w Krakowie” [«Հայ մշակութային ընկերության տեղեկագիր»], N 60/61, Kraków, 2010, s. 11-15, առավել մանրամասն հմմտ. հեղինակի թեկնածուական ատենախոսությունը՝ «Kultura języka ormiańskiego w dawnej Polsce» [«Հայ գրչության մշակույթը և եկական թագավորությունում»] (ձեռագրի մյուս ընդօրինակությունների մասին տեղեկությունը տրամադրել է Մատենադարանի գիտաշխատող Փիրուզ Մնացականյանը, որին հայտնում ենք խորին շնորհակալությամբ):

⁷⁹ Մայրցուցակի հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. Ե, էջ 765-770:

⁸⁰ ՄՄ 2269, 53ա-72բ (ԺԸ դար):

ազդեցությունը հատկապես երևում է հոլովների անվանումների դեպքում (ուղղական՝ Ոսկան Երևանցի, Սիմեոն Ջուղայեցի, Յովհաննես Յուզվ Կոստանդնուպոլսեցի, սեռական, տրական, գործիական՝ Կղեմես Գալանոս, Ոսկան Երևանցի, Սիմեոն Ջուղայեցի, Յովհաննես Յուզվ Կոստանդնուպոլսեցի, հայցական՝ Ոսկան Երևանցի, Սիմեոն Ջուղայեցի, Յովհաննես Յուզվ Կոստանդնուպոլսեցի, կոչական՝ Կղեմես Գալանոս, Սիմեոն Ջուղայեցի, Յովհաննես Յուզվ Կոստանդնուպոլսեցի, կրողական՝ Կղեմես Գալանոս, պատմական՝ Կղեմես Գալանոս, Սիմեոն Ջուղայեցի, Յովհաննես Յուզվ Կոստանդնուպոլսեցի): Այս ձեռագրում կա քսանյոթ նորահայտ տերմին. մեծամասնությունը առաջին անգամ է հանդիպում հայ քերականագիտության մեջ, կան նաև բառակապակցությամբ կազմված տերմիններ:

ՄՄ 2281 ձեռագիրը⁸¹ ժեղարում է գրվել, ավելի ստույգ՝ 1668 թ. առաջ, իսկ գրչության վայրն անհայտ է: Ձեռագրի 257ա-307ա էջերում է քննության նյութը, որը կրում է «Վասն քերականին» վերնագիրը: Այստեղ հարց ու պատասխանի տեսքով շարադրված է ամբողջական քերականական նյութ, որը պարունակում է քերականության, նրա բաղկացուցիչ մասերի և ձևաբանության հատվածները: Քերականությունն ուսումնասիրելիս նմանություններ ենք գտնում Դիոնիսիոս Թրակացու քերականության հետ. հատկապես մակբայի և շաղկապի տեսակները ամբողջությամբ նրանից են, և կարծում ենք, որ սա թարգմանչի քերականության որոշակիորեն կրճատված և հարց ու պատասխանի տեսքով շարադրված տարբերակն է, որոշ հատվածներում էլ ավելի մանրամասն բացատրություններով: Սակայն չենք կարող բացառել նմանությունները այլ քերականների աշխատությունների հետևս: Եվ կրկին շեշտը դնելով տերմինների վրա՝ ասենք, որ աշխատության մեջ կան շատ տերմիններ, որոնք հայտնի են հունաբան և լատինաբան քերականներից. ձեռագրում քերականը առոգանությունը նաև առովասություն է անվանում, որը հատուկ է Ստ. Սյունեցուն⁸². «Առոգանութիւն է առովասութիւն...», կամ միավանկը անվանում է եզավանգ, մակբայը՝ նաև վերնաբայ:

⁸¹ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. Է, էջ 775-782:

⁸² ԼԲ, էջ 29:

խոսելով ձևաբանության մասին՝ առավել ապես շեշտել է անունն ու դերանունը: Դերանունների դեմքի քերականական կարգի մեջ առանձնացնում է առաջին, երկրորդ և երրորդ դեմք, որը հատուկ է Յովհաննես Յուզվ Կոստանդնուպոլսեցուն: Դերանունը նաև անվանում է Դավիթ քերականին հատուկ տերմինով՝ *թերանուն*: Կա նաև Քռնեցուն հատուկ *մակավասար սեռը*: Կառուցվածքային և բովանդակային զգալի նմանություններ կան Յովհաննես Ծործորեցու «Յամառոտ տեսություն քերականի» աշխատության հետ⁸³, իսկ «Արուեստ գրադարձից» հատվածը նույնական է Գևորգ Սկևռացու «Խրատ վասն հանգամանց հեգից»⁸⁴ բնագրի հետ: Այնուամենայնիվ, այսքան նմանություններով հանդերձ Եկան տարբերություններ ևս կան: Այս ձեռագրում ունենք նաև երկու նորահայտ տերմին: Քերականությունն առկա է նաև Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Ղալաթիայի ձեռագրական հավաքածուներում գտնվող գրչագրերում⁸⁵:

ՄՄ 2286 ձեռագիրը⁸⁶ գրվել է 1637 թ. Էջմիածնում: Այն փիլիսոփայական և քերականական երկերից բաղկացած ձեռագիր է, 138ա-157ա էջերում կա մի քերականական ամբողջական նյութ: Քերականական աշխատությունն ունի «Յաղագս քերականութեան» վերնագիրը. այստեղ տրվում է քերականության սահմանումը, այնուհետև՝ սահմանումներով, օրինակներով և առավել ընդգրկուն բացատրություններով խոսվում է գրի, վանկի, բառի, բանի և խոսքի մասերից մի քանիսի մասին: Կառուցվածքային առումով աշխատությունը ընդհանրություններ ունի Դիոնիսիոս Թրակացու և Նրան հաջորդած հունաբան քերականների աշխատությունների

⁸³ Յովհաննես Ծործորեցի, նշվ. աշխ. էջ 109-327:

⁸⁴ Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, էջ 288-296:

⁸⁵ **Ձեռ. 84. Հաւաքումն քերականութեանց (հին թիվ 76), 107ա-138բ** (Լեհաստան, 1613 թ.). տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, գիրք Բ, տպ. Մխիթարեան, Վիեննա, 1895, էջ 343-344, **1340. Իգնատիոս վարդապետ Բ (ձեռ. 1650), 206ա-252ա** (Խազյուղ, 1682 թ.). տե՛ս Մայրցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 617-620, **ձեռ. 3030. Հաւաքածոյ, էջ 239-353.** տե՛ս Մայրցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. իններորդ, տպ. Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1979, էջ 221-223, **ձեռ. 100. Հաւաքածոյ, Յամառոտ տեսութիւն քերականութեան Յովհաննու վարդապետ Երզնկացւոյ, էջ 239-353.** տե՛ս Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի հայոց, տպ. կաթողիկոսութեան հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս - Լիբանան, 1961, էջ 623-632:

⁸⁶ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. Է, էջ 801-808:

հետ: Իսկ տերմինների առումով նմանություններ կան Կղեմես Գալանոսի (գործիական հոլով) և առավելապես Ռսկան Երևանցու քերականություններում գործածվածների հետ: Սակայն Ռսկան Երևանցու քերականության համեմատքնության առարկա ձեռագիրն ավելի շուտ է գրվել, և կարծում ենք, որ Ռսկան Երևանցին իր աշխատությունը գրելիս ծանոթ է եղել վերոհիշյալ քերականական նյութին, որով էլ բացատրում ենք նույն տերմինների գործածությունը: Այս ձեռագրում նորահայտ տերմինները երեսունհինգն են:

ՄՄ 2295 ձեռագիրը⁸⁷ գրվել է 1683 թ. Գաղատիայում (Անկարա): Ուսումնասիրվելիք նյութը վերնագրված է «Քերականութանց գիրք առաջաւոր», գտնվում է ձեռագրի 49ա-107ա էջերում և բաղկացած է երկու գլխից (գրքից): Հայ քերականագիտության պատմության մեջ 2295 ձեռագրի՝ մեզ հետաքրքրող նյութը տարբեր քերականների կողմից տարբեր որակումներ է ստացել. Գ. Ջահուկյանը իր «Գրաբարի քերականության պատմություն» գրքում, խոսելով 2295 ձեռագրի մասին, այն համարում է Ռսկան Երևանցու տպագիր քերականության ձեռագիր մեկնություն, և մեկնողական հատվածը վերագրում հենց Ռսկանին՝ փաստորեն նրան համարելով իր իսկ քերականության մեկնիչ⁸⁸: Իտալացի բանասեր Ալեսանդրո Օրենգոն Ռսկան Երևանցու քերականությանը նվիրված մի շարք հոդվածներում Երևանի Մատենադարանից առանձնացնում է վեց գրչագիր և մեկ գրչագիր օրինակ էլ Տյուրքինգենի Արքայական համալսարանի գրադարանից և այդ յոթ ձեռագրերը համարում Ռսկանի քերականության ձեռագիր օրինակներ և անվանում նրա քերականության ընդարձակ տարբերակ, իսկ տպագիրը՝ համառոտ տարբերակ: Նա ընդարձակ տարբերակի շարքին է դասում նաև 2295 ձեռագիրը՝ նշելով, որ այն կրճատված է և փոքր-ինչ փոփոխված⁸⁹: Այս ուսումնասիրության շրջանակներում

⁸⁷ Նույն տեղում, էջ 827-830:

⁸⁸ Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1974, էջ 65:

⁸⁹ Alessandro Orenco, Oskan Erewantsi traduttore dei Grammaticalia di Tommaso Campanella, «Padus-Araxes, Rassegna Armenisti Italiani», VI, Venezia, 2003, pp. 9-13: Alessandro Orenco, Una Nuova Redazione della Traduzione Armena dei Grammaticalia di Tommaso Campanella, «Bnagirk' Yišatakac' », Bologna, 2004, pp. 317-336: Alessandro Orenco (Pisa), La traduction des nomes propres dans les K' erakanowt' ean Girk' («Livres de Grammaire») de Oskan Erewanc' i, «Il nome nel testo, Rivista

գերծ մնալ ով որոշակի եզրակացություններին՝ ներկայացնենք նաև վերոհիշյալ աշխատության բովանդակությունը և առավելապես տերմինները: Առաջին գիրքը նվիրված է ձևաբանությանը, իսկ երկրորդում քննվում են շարահյուսական առանձնահատկությունները: Քերականության առաջին գիրքը պարունակում է 12, իսկ երկրորդը՝ 3 ենթաբաժին: Առաջին գրքում խոսվում է քերականության, վանկի, բառի և բանի մասին, ինչպես նաև ութ խոսքի մասերի, իսկ երկրորդում՝ նախադասության անդամների համաձայնության մասին: Աշխատության մեջ քերականական բաժինները հիմնականում ունեն մեկնողական հատվածներ: Աշխատությունը բնորոշ նմանություններ ունի Ռսկան երևանցու քերականության հետ, սակայն զգալի թվով տերմիններ ունենք, որոնք հայ քերականագիտության մեջ ավանդված են Ռսկան երևանցուն նախորդած և հաջորդած քերականներից. այսպես՝ քերականը պատկանելության սեռականը կոչում է նաև «ստացական», որը հայ տնի է դեռևս Թրակացուց⁹⁰, «դերանուն» տերմինի փոխարեն առկա է «փոխանուն» տերմինը, որը առաջին անգամ գործածել է Ստեփանոս Սյունեցին⁹¹, իսկ հոլովների շարքում ունենք «կրողական», «կոչական հոլով» տերմինները, որոնք հատուկ են Կղեմես Գալանոսին⁹², կամ քերականը գործածում է «առաջին դեմ» տերմինը, որը քերականության մեջ հայ տնի է Յովհաննես Յովովից⁹³: Այսպիսի նմանություններն ու զուգահեռները առկա են նաև բնագրային հատվածներում: Աշխատությունն ունի նաև ընդօրինակված այլ գրչագրեր Սանկտ-Պետերբուրգի, Երուսաղեմի և Իտալիայի ձեռագրական ֆոնդերում⁹⁴: Այս ձեռագրից դուրս ենք բերել առավելագույն թվով տերմիններ՝ յոթանասունչորս:

internazionale di onomastica letteraria», VIII, Edizioni ETS, 2006, pp. 549-558, որոնք տրամադրել ու համար մեր խորին շնորհակալություն ենք հայտնում իտալացի հայագետին:

⁹⁰ ԼԲ, էջ 277:

⁹¹ Նույն տեղում, էջ 305:

⁹² Կղեմես Գալանոս, Քերականական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, տպ. Ուրբանեան, Յոմ, 1645, էջ 79:

⁹³ Յովհաննես վրդ. Կոստանդինուպոլսեցի, Չտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, տպ. Ուրբանեան, Յոմ, 1674, էջ 109, նաև ԼԲ, էջ 26:

⁹⁴ 194. ИВ, А 81, Сборник, 2а-25а (1688 г.). տե՛ս Православный палестинский сборник, армянские рукописи в петербургских собраниях, каталог, С.-Петербург, 2005, стр. 102, 1266, **Ժողովածոյ, էջ 3-75**. տե՛ս Մայրցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Կ. չորրորդ, տպ. Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1969, էջ 443, **թիւ 72, ms. 1941. Քերականականք և**

ՄՄ 2335 ձեռագիրը⁹⁵ 1476 թ. Երուսաղեմում գրված, մասամբ քերականական նյութերից բաղկացած ժողովածու է, որը ևս ուսումնասիրության այս խմբի ձեռագրերի շարքին է պատկանում: Ձեռագրի 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա էջերում կան քերականական ծառեր, որոնք համարում ենք մեկ ամբողջական քերականական աշխատություն և կատարում է զվարճանական տերմինների քննություն: Քերականական ծառերն ունեն նախորդող քերականական նյութ՝ «Բառք քերականին» բառգիրքը, որը հայերեն գրչագիր օրինակներում գրեթե միշտ կից է Դիոնիսիոս Թրակացու աշխատությանը և վերագրվում է նրան⁹⁶: Սակայն ծառերը նախորդող նյութի տրամաբանական շարունակությունը չեն, «չեն պատկանում» այդ քերականի աշխատությանը, քանի որ ծառերում առկա են ոչ միայն Դիոնիսիոս Թրակացու, այլև Զովհաննես Քնեցու կողմից գործածված տերմիններ:

Քերականական ծառերում թվարկված են խոսքի մասերը իրենց տեսակներով, քերականական կարգերով, օրինակներով: ՄՄ 2335 ձեռագրում կա քերականական 6 ծառ, որոնցից առաջինում (4բ) թվարկված են հայերենի 8 խոսքի մասերը՝ անուն, բայ, ընդունելություն, հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ, այնուհետև նույն ծառում օրինակներով հանդերձ ներկայացված է բայն իր 8 քերականական կարգերով՝ խոնարհմունք, տրամադրություն, տեսակք, ձևք, թիվք, դեմք, ամանակք և լծորդք: Երկրորդում (5ա) անուն խոսքի մասն է իր քերականական կարգերով՝ սեռ, տեսակ, ձև, թիվ, հոլով: Զետաքրքիր է հատկապես երրորդ քերականական ծառը (6բ), որտեղ մեսրոպյան այբուբենի 36 տառերն են՝ Ա-Ք: Տառերը դասակարգված են ըստ ձայնավորների և անձայնների, նրանցից յուրաքանչյուրն էլ՝ իր տարատեսակներով և համապատասխան օրինակներով: Չորրորդ քերականական ծառը (7ա) ներկայացնում է նախադրություն և մակբայ խոսքի մասերը: Ծառի առաջին հատվածում 50 նախադրությունները և 3 հետադրություններն են, իսկ երկրորդում՝ մակբայները՝ ըստ

Խմատախիրականք, Էջ 1r-83v (ԺԷ դար). տե՛ս Catalogo dei manoscritti Armeni delle Biblioteche d' Italia, Istituto poligrafico e zecca dello stato, Libreria dello stato, Roma, 2010, ff. 299-301.

⁹⁵ Մայրցուցակի հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. է, էջ 979-996:

⁹⁶ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ CLXXII:

կազմության պարզ և ջոկադիր (բարդ), ամեն մեկը՝ իր տեսակներով: Հինգերորդ ծառը (8բ) ներկայացնում է դերանունները իրենց ձևաբանական հատկանիշներով՝ դեմք, սեռ, թիվ, հոլով, ձև, տեսակ (համապատասխան օրինակներով): Վերջին՝ վեցերորդ ծառը (9ա) քերականությունն է իր 6 բաժիններով՝ «վերծանութիւն (ենթադատություն, առոգանություն, տրոհություն)», «գրուցատրութիւն», «լեզուաց և հնագետ պատմութեան առձեռն բացատրութիւն», «ստուգաբանութեան գիւտ», «համեմատութեան տեղեկութիւն», «դատումն քերդածաց»: Այս նույն էջում ներկայացված է նաև հոդ խոսքի մասն իր քերականական հատկանիշներով:

2335 ձեռագրի ծառերը ինքնատիպ ու արժեքավոր են ոչ միայն քերականական նյութի ուսումնասիրման առումով, այլև նաև մանրանկարչական արվեստի տեսանկյունից, քանի որ քերականական ծառերը ոչ միայն ուսումնական նկատառումներով դյուրին են դարձնում քերականական նյութի ընկալումը, այլև կարծես թե նյութի թեմատիկ մանրանկարներն են: Բուսական նկարազարդումները, գուռային ներկապնակը ամբողջացնում են ծառերի պատկերը: Այստեղ խոսքի մասերը, նրանց քերականական հատկանիշներն ու օրինակները ներկայացված են տերևների և պտուղների տեսքով: Մանրանկարների ստորին լուսանցներում կան ծաղկողի ձեռքով գրված հիշատակարաններ. «Ըզնըկարող խորանիս յիշեա՛»⁹⁷ մակագրությամբ, որտեղ, ցավոք, յուրատիպ արվեստով աչքի ընկնող այս վարպետն իր անունը չի հիշատակել: Այս ձեռագրից առանձնացրել ենք չորս նորահայտ տերմին, որոնք արդեն հայտնի տերմինների բառակազմական նոր տարբերակներն են:

ՄՄ 2448 ձեռագիրը⁹⁸ 1687-1689 թթ. Ստամբուլում գրված ժողովածու է՝ բաղկացած մի քանի նյութերից: Ձեռագրի 2ա-35բ էջերում Ոսկան Երևանցու «Այբբենարան և քրիստոնեական» աշխատությունն է⁹⁹, որը 1666 թվականին Ամստերդամում քերականը տպագրել է, իսկ ձեռագիրը ընդօրինակված տարբերակն է: Տպագիր

⁹⁷ ՄՄ ձեռ. 2335, 6բ, 7ա, 9ա:

⁹⁸ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. Ը, «Նայիրի» հրատ., Երևան, 2013, էջ 131-138:

⁹⁹ «Այբբենարանը» ամբողջական չէ, մեր ձեռագրում առկա է միայն առաջին գլուխը, երկրորդ գլխից սկսած՝ նյութը թերթերի կորստի հետևանքով կիսատ է:

օրինակը չկա Երևանի Մատենադարանում, իսկ Հայաստանի Ազգային գրադարանում միայն մանրաժապավենն է: Առկա է մի քանի օրինակ, որոնք գտնվում են Վենետիկի, Նոր Զուղայի, Իսպահանի, Կ. Պոլսի, Բուդապեշտի, Լոնդոնի, Ամստերդամի գիտական հաստատություններում¹⁰⁰: Այս ձեռագրում ուսումնասիրության առարկան 2ա-20ա էջերն ընդգրկող քերականական նյութն է, որը տառի, վանկի և բառի և դրանց ուսուցանման անհրաժեշտության մասին է: Այբբենարանը շարադրված է հարց ու պատասխանի ձևով, որն այն ժամանակներում ընդունված էր, հատկապես այն աշխատությունների դեպքում, որոնք ձեռնարկ-դասագրքի բնույթ էին կրում: Ունի հետևյալ տիտղոսաթերթը՝ «Յադագս նորեկ տղայոց և մանկանց անկրթից, նաև արանց դեռևս ոչ ուսեալ է, որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան և ի վարժումն ճահապես ընթերցողութեան. ամեն»:

Առաջին նյութն ունի «Յադագս վարժման մանկանց նորագունից դեռևս եկելոց յուսումն տառակրթութեան» խորագիրը. նյութը սկսվում է հարցով, թե ինչու երեխաներին պետք է կրթել դեռ մանուկ հասակից, անմիջապես հաջորդում է պատասխանը. «պարտ է ուսուցանողին ըստ կարգի և յարմարապես դաստիարակել»՝ հեռու պահելով «թիւր և անճահապես» բաներից, հասցնելով աշակերտին «ի կէտ ուսմանն» (էջ 3ա): Այնուհետև հաջորդ բաժնում խոսվում է տառերի մասին, քանի որ նախ և առաջ ուսուցումը պետք է սկսել տառերից: Քերականը առանձնացնում է հետևյալ «աստիճանները». «Նախկին աստիճան տառից, որք արտաբերին միով հնչմամբ» (էջ 3բ), հետո շարունակում է, որ տառերը պետք է բաժանել միմյանցից և մանուկներին «ծանուցանել, որք լինին ձայնաւորս և ի բաղաձայնս» (էջ 4ա), այնուհետև համապատասխանաբար հաջորդում են հարցերը, թե որոնք են ձայնավորները, որոնք՝ բաղաձայնները: Ձայնավորները յոթն են և այդպես են կոչվում, «վասն զի զձայնս յինքեանց ելուզանեն թարց այլոյ գրոյ» (էջ 4ա), իսկ բաղաձայնները երեսունն են, որոնք նաև շարաձայն են կոչվում, «զի ընդ ձայնավորի շարելով ապայ կարեն ձայնս արձակել... իսկ... առանց

¹⁰⁰ Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Սավալյան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 44:

միաւորութեան... անկարելի է ձայնս արձակել » (Էջ 4բ): Յաջորդիվ վանկի բաժինն է «Յաղագս վանկի» խորագրով: Միջնադարյան մյուս քերականների նման նաևս գտնուում է, որ «վանկ է առաջին շարակալումն գրոյ » (Էջ 4բ), քանի որ գրից հետո պետք է «զվանկն ուսանիլ », որն էլ բառի մասն է: Նա վանկը կոչում է նաև փաղառություն: Քերականը կրկին շարունակում է «աստիճանների» առանձնացումը և ներկայացնում հաջորդ երեք, որոնք վանկերն են. այսպես՝ «երկրորդ աստիճան վանկից, որք լինին միով ձայնաւորաւ և միով շեշտիւ կամ միով բաղաձայնիւ » (Էջ 5ա), «երրորդ... միով ձայնաւորաւ , երկոքումբք բաղաձայնիւք » (Էջ 6ա), «չորրորդ... երկբարբառօքն և միով բաղաձայնիւք » (Էջ 6բ): Յաջորդ բաժնում գրիչը խոսում է բառի մասին և թվարկում երկվանկ և բազմավանկ բառերը՝ «առաջներորդ աստիճան բառից, որք լինին ի միոյ վանկէ», «երկրորդ... յերկուց վանկից», «երրորդ... յերից վանկից», «չորրորդ... ի չորից վանկից», «հինգերորդ... ի հնգից վանկից», «վեցերորդ... ի վեցից վանկից», ի դեպ բոլոր բաժիններում կան օրինակներ այբբենական կարգով, որոնք փոքրիկ բառարանների տեսք ունեն: Եվ «Այբբենարանի» այս բաժինը ավարտում է «Համարողութիւն հայոց և ըստ հռոմայեցոց» խորագիրն ունեցող նյութով, որ հայերեն տառերի թվային համարժեքներն են, նաև հայերեն տառերը ըստ հռոմեական թվերի:

Այս ենթագլխին վերաբերող վերջին ուսումնասիրության նյութը 2մմառի վանքի մատենադարանի թիվ 547 ձեռագիրն է¹⁰¹, որը գրվել է 1653 թ. Նոր Ջուղայում: Այն ևս քերականական նյութերի ժողովածու է, որի 1ա-82ա էջերում է քննության քերականական նյութը: Այն անխորագիր է, սակայն երևանի ձեռագրական հավաքածուում այս նույն քերականական աշխատությունը համառոտ և ընդարձակ տարբերակներով ունի քսանից ավելի գրչագիր այլ օրինակներ¹⁰², որոնցում վերնագրված է՝ «Սահման

¹⁰¹ Ցուցակ հայերեն ձեռագրաց 2մմառի վանքի մատենադարանին, հ. Բ, «Անտոնեան հաւաքածոյ », Մխիթարեան տպարան, Վիեննա, 1971, էջ 155-156:

¹⁰² ՄՄ 833, 96ա-106բ (ԺԷ դար), ՄՄ 841, 120ա-130բ (ԺԸ դար), ՄՄ 1686, 400ա-425բ (1634 թ.), ՄՄ 1782, 99ա-110բ (Կոզլով, 1652-1655 թթ.), ՄՄ 2018, 420ա-430բ (Իլով, Իստամբուլ, 1621 թ.), ՄՄ 2286, 166ա-185ա (Էջմիածին, 1637 թ.), ՄՄ 2292, 5ա-30բ (1624 թ.), ՄՄ 2293, 2ա-14բ (ԺԷ դար), ՄՄ 2295, 25ա-47ա (Գաղատիա, 1683), ՄՄ 2327, 176ա-187բ (ԺԷ դար), ՄՄ 2328, 2ա-15բ (ԺԷ դար), ՄՄ 2330, 216ա-224ա (1633 թ. առաջ), ՄՄ 2358, 4ա-30բ (Իսպահան-Ջուղա, 1659-1662 թթ.), ՄՄ 2363,

քերականութեան», որից ելնելով ել՝ մեզ իրավունք ենք վերապահում Ձմմառի վանքի մատենադարանի թիվ 547 ձեռագրի նյութը վերնագրել նույն կերպ: Նյութը սկսվում է քերականության սահմանամբ, այնուհետև խոսվում է բառագիտության մասին: Մանրամասն քննության են ենթարկված հնչյունաբանությունը և ձևաբանությունը բաժինները: Հնչյունաբանության և բառագիտության քննությունը հատկացված են յաղագս տառի, վանկի, բառի, բանի գլուխները, իսկ մյուսներում քննվում են ութ խոսքի մասերը. նախ տրվում է յուրաքանչյուր խոսքի մասի սահմանումը, այնուհետև քննության են առնվում նրանց քերականական հատկանիշները:

Աշխատությունը կառուցվածքային որոշակի նմանություն ունի գրեթե բոլոր լատինաբան քերականների աշխատությունների հետ, տերմինների առումով ունի մեկ նմանական օրինակ. *դերածայն* տերմինը ձեռագրում գործածվում է կիսածայների համար, իսկ այդ տերմինը վկայված է Կղեմես Գալանոսից: Այս ձեռագրից դուրս ենք բերել քառասունութ նորահայտ տերմին, որոնցից հինգը արդեն հայտնի տերմինների հնչյունական և բառակազմական նոր տարբերակներն են: Չորս տերմին ել ունենք, որոնք Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին, Ռսկան Երևանցին, Մխիթար Սեբաստացին և Մ. Չամչյանը օգտագործել են իրենց քերականական աշխատություններում, և այդ տերմինները բառարաններում արձանագրված են: Վերոհիշյալ քերականները այդ տերմինների առաջին գործածողներն են, իսկ ձեռագրի քերականությունը ժամանակային առումով նախորդում է քերականների աշխատություններին, հետևաբար առկա տերմինները դառնում են վաղ կիրառություններ: Տերմիններից հինգն էլ այլ իմաստով կիրառություններ են. մինչ քննության նյութ ձեռագիրը այդ տերմինները Դավիթ քերականը, Համամ Արևելցին, Կղեմես Գալանոսը գործածել են որևէ քերականական հատկանիշ անվանելու համար,

93ա-113ա (ԺԷ դար), ՄՄ 3193, 2ա-21ա (Ավնդանց գյուղ, ԺԷ դար), ՄՄ 3504, 110ա-121ա (Կաֆա, 1659, 1676, 1692 թթ.), ՄՄ 3657, 1ա-18բ (1677-1690 թթ., Երուսաղեմ), ՄՄ 5911, 8ա-18դ (Սպահան, 1661 թ., Փերիո Ս. Աստվածածին, 1662 թ.), ՄՄ 7121, 122ա-170ա (1733 թ.), ՄՄ 8279, 1ա-22ա (1825 թ.), ՄՄ 8464, 18ա-9բ (ԺԷ դար), ՄՄ 9282, 1ա-38բ (ԺԸ դար):

սակայն ձեռագրում այդ նույն տերմինները արդեն այլ իմաստ են ձեռք բերել:

Այսպիսով, այս ենթաբաժնում քննել ենք ութ ձեռագիր, որոնցից մեկը գրված է 1476 թվականին, իսկ մյուսները՝ 1600-ական թվականների սկզբին և վերջին: Գրեթե բոլոր ձեռագրերում աշխատությունները բաղկացած են ձևաբանությունից և շարահյուսությունից: Բոլոր աշխատություններն էլ թե՛ կառուցվածքային և թե՛ տերմինների առումով ազդված են ոչ միայն հունարան, այլ և լատինարան քերականներից:

3. ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՌԿՆԵՐ

Այս ենթագլխում քննության ենք առել յոթ ձեռագիր, որոնցում կա ուսումնասիրությանն առնչվող շուրջ տասնհինգ հատվածական աշխատություն և քերականական պատառիկ¹⁰³:

Երևանի Մատենադարանի 2018 ձեռագիրը¹⁰⁴ առավել ապետումարական, խրատական, մասամբ նաև քերականական նյութերից ու տաղերից բաղկացած ժողովածու է, գրված 1621 թվականին, մի մասը Լվով քաղաքում, իսկ մյուս հատվածը՝ Ստամբուլում: Այս ձեռագրում մեր ուշադրությունը գրավել է 430բ էջում գտնվող շաղկապին վերաբերող քերականական նյութը, որը ամբողջական հատվածական աշխատություն է: Առանց շաղկապի սահմանումը տալու անմիջապես թվարկվում են շաղկապի տեսակները, որոնք տասնհինգն են, յուրաքանչյուրն էլ իր սահմանումով և օրինակներով հանդերձ: Տասնհինգ տերմիններից ութը նորահայտ է, իսկ մնացյալը նույնական են Դիոնիսիոս Թրակացուց, Կղեմես Գալանոսից ավանդված շաղկապների հետ: Կառուցվածքային առումով նյութը նման է որևէ քերականի աշխատության համապատասխան բաժնին,

¹⁰³ Հատվածական աշխատությունները ամբողջական ենք համարում, քանի որ ծաղկաքաղ են արված ավելի ընդարձակ նյութերից ըստ պատեհի կամ նպատակի, իսկ քերականական պատառիկները անավարտ նյութերի և ձեռագրի թերթերի կորստի հետևանքով առաջացած քերականական աշխատություններ են, որի համար էլ թերի ենք համարում:

¹⁰⁴ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. 2, «Նայիրի» հրատ., Երևան, 2012, էջ 1043-1058:

սակայն տերմինների գործածության տեսանկյունից ազդված է հույն և լատին վերոհիշյալ քերականներից:

ՄՄ 2274 ձեռագիրը¹⁰⁵ փիլիսոփայական երկերի ժողովածու է՝ գրված Ուշի վանքում (Աշտարակ, Կարբի գյուղ) 1658-1667 թվականներին: Քննության նյութը հավելագրության ներքին բաժնում է՝ 72բ-73բ էջերում, և ներկայացնում է երեք տարբեր հատվածական աշխատություն: Առաջինը *Նախադրության* վերաբերյալ է, երկրորդը՝ *մակբայի*, իսկ երրորդը՝ *առոգանության*: Երկու խոսքի մասերի՝ *Նախադրության* և *մակբայի* զուտ տեսակների թվարկումն է՝ առանց սահմանման, նյութերը ամբողջական աշխատություններ են: Իսկ *առոգանության* վերաբերողը ներկայացված է համեմատաբար ավելի մանրամասն. սկզբում խոսվում է առոգանության երեք տեսակի մասին՝ *ոլորակ*, *ամանակ*, *նշանակ*, այնուհետև մանրամասն ներկայացվում են ամեն մի տեսակին պատկանող առոգանության նշանները, թվարկելուց բացի տրվում են նաև որոշակի բացատրություններ: Առոգանության նյութը, ի տարբերություն Նախորդ երկուսի, անավարտ է, թերթերի կորստի հետևանքով վերածվել է քերականական պատառիկի: Այս ձեռագրում ունենք ընդամենը երկու նորահայտ տերմին, որից մեկն էլ գործածված է Կղեմես Գալանոսի քերականության մեջ, սակայն ձեռագիրը ժամանակային առումով նախորդում է հեղինակի քերականությանը, այդ իսկ պատճառով վաղ վկայություն ենք համարում ձեռագրում արձանագրվածը: Կառուցվածքային առումով նման չէ որևէ քերականի աշխատության նշված բաժիններին, քանի որ նյութը ծաղկաքաղ է արված արդեն հայտնի քերականությունների համապատասխան բաժիններից, իսկ գործածված տերմինները նույնական են թարգմանչի տերմինների հետ:

Հաջորդ ձեռագիրը ՄՄ 2279 թվահամարն է կրում¹⁰⁶, գրվել է Ժեդարում, տեղը՝ անհայտ: Ձեռագիրն ամբողջությամբ Կղեմես Գալանոսի «Թերթողութիւն քերականութեան» աշխատությունն է: Սակայն ձեռագրի վերջում ծաղկաքաղ արված հավելյալ մեկ նյութ ևս կա, որը զբաղեցնում է 101բ-102բ էջերը: Այն ունի «Համառօտ

¹⁰⁵ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. է, էջ 757-762:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 773-774:

կանոնք բոլորոյ քերականութեան» խորագիրը, և ամբողջական հատվածական աշխատութիւնն է: Այս փոքրիկ նյութը հոլովների վերաբերյալ է, ինչը մեր ուսումնասիրութեան շրջանակներում է: Նյութը բաղկացած է երկու արակից (գլխից): Առաջին արակում թվարկվում են հինգ հոլովները իրենց վերջավորութիւններով, և օրինակներով ցույց է տրվում, թե այս կամ այն բառը եզակի և հոգնակի թվի դեպքում ինչ վերջավորութիւնն է ստանում: Ապա հաջորդ արակում խոսվում է այլ հոլովների մասին, որոնք բխում են ուղղականից և սեռականից: Ունենք ընդամենը երկու նորահայտ տերմին, որից մեկը հետագայում օգտագործել է նաև Բաղդասար Դպիրը, և ձեռագրում փաստորեն այդ տերմինի վաղ կիրառութիւնն է: Նյութը նման չէ որևէ քերականի աշխատութեանը, քանի որ հավանաբար որոշակի նպատակի համար ծաղկաքաղ արված աշխատութիւնն է: Նյութի մեջ կան մի քանի տերմին, որոնք էլ նույնական են թարգմանչից ավանդվածների հետ:

ՄՄ 2307 թվահամարը կրող ձեռագիրը¹⁰⁷ ըստ բովանդակութեան երկու տարբեր ձեռագրերից բաղկացած առավել ապես քերականական երկերի ժողովածու է՝ գրված ԺԵ դարում, գրչութեան վայրն՝ անհայտ: Ուսումնասիրութեան քերականական նյութը ժողովածուի առաջին ձեռագրում է՝ մասնավորապես 83բ-86ա էջերում, և պարունակում է երեք տարբեր քերականական պատառիկներ: Երկու բնագրերը քերականական վերլուծութիւնն են՝ հարց ու պատասխանի ձևով, իսկ երրորդը քերականական տերմինների թվարկում է՝ իմաստից բխող ձևակերպումներով:

Առաջին բնագրում քերականական վերլուծութեան է ենթարկվում Գրիգոր բառը, իսկ երկրորդ՝ «Եղանակ վարդապետութեան» խորագրով նյութի մեջ խոսվում է քերականութեան, նրա հիմնական բաղկացուցիչ մասերի, *ձայնավորների* և *բաղաձայնների* մասին, ինչը ևս հարց ու պատասխանի միջոցով է շարադրված: Իսկ 85բ-86ա էջերում գտնվող քերականական նյութն ունի «Բառք քերականութեան» խորագիրը: Այս երրորդ նյութի մեջ էլ խոսվում է քերականական տերմինների մասին, սակայն այլ աբանական համեմատութեամբ՝ համեմատելով

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 849-852:

տրամաբանական հասկացությունների հետ: «Գրիգոր» բառը քերականական վերլուծության է ենթարկում. «Հարց. Գրիգոր ըստ քերականութեան զի՞նչ է: Պատասխանի. Գրիգոր ըստ քերականութեան ի կիրառնլիս և կիրառութիւնս: Կիրառնելիք են չորք՝ գիր, վանգ, բառ և մասն բանի. ըստգրոցն ձայնաւոր և բաղաձայն...» (Էջ 83բ):

Աշխատության հեղինակը «Գրիգոր» բառը քննում է որպէս «կիրառելիք» և «կիրառություն»: Այս առիթով նշենք, որ հայ քերականներից Սիմեոն Ջուղայեցին էր, որն իր ուսումնասիրության առարկա քերականական նյութը բաժանում է երկու մասի՝ կիրառելիքի և կիրառության քննության¹⁰⁸: Եվ կարելի է կարծել, որ ուսումնասիրության առարկա նյութի հեղինակը քաջատեղյակ է եղել Սիմեոն Ջուղայեցու քերականությանը, քանի որ իր քննությունը կատարել է նրա քերականության հետևողությամբ: «Գրիգոր» բառի քերականական քննությունը սկսվում է գրից: Քերականը Դիոնիսիոս Թրակացու, Հովհաննես Քննեցու, Գևորգ Սկնռացու և մյուս քերականների պես նույնացնում է *տառ* և *գիր* հասկացությունները: *Գիրը*՝ որպէս պարզ (արմատական) եզր, գուտ հայկական է, այսինքն՝ գալիս է դասական հայերենից և բաժանվում ձայնավորների ու բաղաձայնների: Նշենք, որ քերականը աշխատության մեջ խոսում է միայն «Գրիգոր» բառին վերաբերող քերականական հատկանիշների մասին, այդ իսկ պատճառով հանդիպում են սահմանափակ թվով քերականական եզրեր: Խոսվում է բառի մեջ առկա երկու ձայնավորների մասին՝ «ի» և «ո»՝ ըստ իրենց հատկանիշների՝ «ի - երկար, երկամասակ, առաջադիր և ստորադաս, ո - սուղ և առաջադիր» (Էջ 83բ), նույն կերպ ներկայացվում են նաև բաղաձայնները. «գ - միջակ և անձայն, ր - լերկ, կիսաձայն և նայ» (Էջ 83բ): Շեշտենք, որ ինչպէս գրեթե բոլոր ձեռագիր աղբյուրներում, այստեղ ևս քերականը ըստ արտասանության տևողության ու ձևի գատել է ձայնավորների ու բաղաձայնների տեսակներ ու ենթատեսակներ, ինչը հայերենին հատուկ չէ, այլ կատարվում է միայն հունարենի հետևողությամբ: Այնուհետև «ըստ վանգի Գրիգոր Բ. վանգ է՝ գրի», որը «երկար է

¹⁰⁸ Սիմեոն Ջուղայեցի, Գիրք որ կոչի քերականութիւն, տպ. Մարտիրոս դպրի, Կ. Պոլիս, 1725, էջ 16:

դրու թեամբ ըստ տրականին, գոր՝ երկար է բնութեամբ ըստ ձգտումն... ըստ բառին մի բառ է, ըստ բաժանմանն սահմանական է, ըստ սահմանին՝ սահման անուն է, ըստ բանին՝ մասն բանի, ըստ մասանցն՝ անուն է, ըստ անունան՝ մակադրական...» (Էջ 83բ-84ա): Հեղինակը բառը ըստ բաժանման համարում է սահմանական, ըստ սահմանի՝ սահման անուն, որն էլ մեզ առիթ է տալիս ենթադրելու, որ նա հավանաբար, սահման անունն ասելով, ըստ երևույթին նկատի ունի, որ այս բառը ելակետային, ուղիղ ձև է, այսինքն՝ գոյական անուն, քանի որ սահմանականը բայերին բնորոշ քերականական եզր է, մինչդեռ «Գրիգոր» բառը գոյական է կամ ըստ անվան հեղինակը այն կոչում է մակադրական, մինչդեռ թրակացին մակադրական է անվանում հատուկ կամ հասարակ անունների վրա դրվողները (անուն), այսինքն՝ ածականը¹⁰⁹: Հեղինակը ցանկացել է բառը նաև ըստ բանակի ներկայացնել, սակայն նյութն այլևս շարունակություն չունի: Հետևաբար նյութը համարում ենք քերականական պատառիկ, քանի որ թերի է, անավարտ:

Երկրորդ նյութի մեջ թվարկվում են վարդապետության եղանակները, որոնք են «սահմանական, բաժանական, ասցցուցական (այսպես), վերլուծական: Հարց. 2ի՞նչ է սահման քերականութեան, քերականութիւն է գիտութիւն տառից և ասութեանց և կիրառութեանց սոցին ըստ շարագրութեան քերթողաց...» (Էջ 84ա): Հեղինակը քերականությունը սահմանում է որպես գիտություն՝ տառերի, բառերի և գրողների ստեղծագործություններում նրանց կիրառությունների մասին, որոնք նախորդ նյութի պես կրկին բաժանում է «ի կիրառելիս» և «ի կիրառութիւն»: Քերականը շարունակում է հարցերն ու պատասխանները՝ խոսելով գիտության չորս հասկացությունների մասին. «գիտութիւն ի քանի՞ բաժանի, Դ.՝ հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ, մակացութիւն...» (Էջ 84ա): Խոսելով տառի մասին՝ քերականն այն համարում է «առաջին դուռն գրոց», այնուհետև շարունակում. «դրունք ի քանի՞ս բաժանին, Է.՝ առաջին՝ տառ, Բ.՝ գիր, Գ.՝ հեգ, Դ.՝ վանգ, Ե.՝ բառ, Զ.՝ բան, Է.՝ զօրութիւն բանի...» (Էջ 84աբ): Հետո հարց է տրվում, թե քանիսն են տառերը, որի պատասխանն է. «ըստ թարքմանչացն՝ ԼԶ., ըստ յամբակագունիցն՝ ԼԸ., ըստ նորագունիցն՝ Խ.» (Էջ 84բ): Եվ շարունակում է խոսել մյուս

¹⁰⁹ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 18:

քերականական կարգերի մասին. «Յարց. 2ի^o նչ է սահման գրոցն. գիր է, որով ձևանաձայն և այլն... 2ի^o նչ է սահման բառին. բառ է ձայն յօդաւոր նշանակող առանց շարամանութեան... 2ի^o նչ է սահման անուն. անուն է մասն բանի հոլովական թարց և այլն» (Էջ 85ա): Ակնհայտ է, որ սահմանումները լրիվ չեն, այլ ամբողջական քերականությունից կատեխիզիսների հարցերի դուրսբերումն է քաղվածքների տեսքով, և, հավանաբար, ուսումնասիրողների ձեռքի տակ եղել է քերականությունը, որին էլ հղվում է: Սահմանվածական աշխատությունն է:

Ձեռագրի երրորդ քերականական նյութը ունի «Բառք քերականութեան» խորագիրը. շատ հակիրճ տրվում են քերականական կարգերի բնորոշումները. «Բայ՝ բան կամ մասն բանի, ընդունելութիւն՝ կցորդութիւն, դերանուն՝ փոխկամ կէս..., մակբայ՝ ի վերայ բանի բանս, շաղկապ՝ միաւոր կամ գութ, քանակ՝ չափկամ թիւ, սեռք՝ աճումն, ձևք՝ օրինակ կամ կերպ... բաղդատական՝ իսկական կամ համեմատութիւն, գերադրական՝ առաւելադրական...» (Էջ 85բ): Այնուհետև խոսվում է անուն, բայ, ընդունելություն, դերանուն և հոդ խոսքի մասերի և հոլովման ու խոնարհման ցուցիչների մասին. «Եւ գաղափարք անուան են տասն, որոց վեցն են հասարակաց, են այսոքիկ՝ ան, եան, ին, եղ, եր և օր, երեք են հասարակաց և յատկից, որք են ի, ոյ և ու, և մեկն է յատուկ, որ է այ: Բայ ի գաղափարն է այս՝ ամ, եմ, իմ, ում..., ընդունելութեան գաղափարք են այսոքիկ՝ օղ, իչ, եալ, լի, լոց, դերանուն գաղափարք են այսոքիկ՝ ես, դու, սա, դա, նա և ածանցական՝ իմ, քո, սովալ, դովալ, նովալ, յօդի գաղափարն այս՝ ս, դ, ն, որգոն՝ այս, այդ, այն...» (Էջ 86ա): Նկատենք, որ այս հատվածում քերականը խոսքի մասերի տեսակները՝ հատկանիշները (վերջավորություններ, ածանցներ, լծորդություններ) չի առանձնացնում ըստ անվանումների, համեմայն դեպս ինքը չի անվանում, և փաստորեն ստացվում է, որ այս վերջավորությունների անվանումները տերմինի արժեք ունեն կամ հենց քերականական տերմիններ են, քանի որ տեսնում ենք, որ այստեղ կավերացարկման պակաս, իսկ յուրաքանչյուր տերմին վերացարկման արդյունք է: Երրորդ նյութը ևս հատվածական աշխատություն է՝ նախորդ երկուսի պես ծաղկաքաղ արված ըստ պատեհի: Եվ այս երեք հատվածական

աշխատությանը ունենք ընդամենը քերականական մեկ նորահայտ տերմին:

Երևանի Մատենադարանի 2366 ձեռագիրը¹¹⁰ բացառապես քերականական աշխատությանը ունենք բաղկացած ժողովածու է, որտեղ Դիոնիսիոս Թրակացու, Յովհաննես Երզնկացու, Յովհաննես Ծործորեցու աշխատությանը ունենք կողքին է նաև խնդրո առարկա քերականական նյութը՝ շարադրված հարց ու պատասխանի տեսքով: Ձեռագիրը գրված է ԺԴ-ԺԵ դարերում, իսկ գրչության վայրի մասին տեղեկությունները բացակայում են: Ուսումնասիրության նյութն ունի «Հարցմունք և պատասխանիք» խորագիրը և ձեռագրի 13բ-14բ էջերում է: Բնագրին անդրադարձ չկատարելով՝ նշենք, որ այս քերականական նյութի ընդօրինակությունը կա Երևանի Մատենադարանի մեկ այլ ձեռագրում ևս¹¹¹: ՄՄ 2366 ձեռագրի ընտրությունը մյուսի համեմատ պայմանավորված է ավելի վաղ և կատարյալ օրինակ լինելու հանգամանքով: Բնագիրը քերականության վեց բաժինների, ինչպես նաև հնչյունաբանությանը և ձևաբանությանը վերաբերող հարցերի քննությունն է:

Նյութը սկսվում է «2ի° նչ է քերականութիւն» հարցով, որն էլ շարունակվում է պատասխանների և դրանցից ծագող հարցերի միջոցով. «Պատասխանի. Քերթածաց և շարագրածաց ասացուածոց հմտանալ: Հարցումն. Քանի° են մասունք քերականութեան: Պատասխանի. Վեցոյք են՝ վերծանութիւն, գրուցատրութիւն, գիտել զլեզուս և զհնագէտ պատմութիւնս, ստուգանաբանութիւն, համեմատութիւն, դատումն քերդածաց...» (էջ 13բ): Այստեղ թվարկվում են քերականության վեց բաժինները, սակայն նշվում է միայն վերծանության, նրա եղանակների և դրանցից բխող քերականական կարգերի մասին: Քերականը այնուհետև խոսում է տառի մասին, բայց նա միջնադարյան մյուս քերականների պես չի նույնացնում տառն ու գիրը. առանձնացնում է ձայնավորները, բաղաձայնները և երկբարբառները: Այս առիթով հիշենք Դավիթ փիլիսոփայի մի հետաքրքիր նկատառում. նա տառը նմանեցնում է մարդկային մտքին,

¹¹⁰ Մայրցուցակ հայերեն ձեռագրաց ՄՄ, հ. է, էջ 1091-1094:

¹¹¹ ՄՄ 7995, 89բ-90բ (Ըստամբուլ, 1632-1633 թթ.):

ծայ նավորները՝ զգայ արաններին, իսկ բաղաձայ ները՝ մարմնի այլ անդամներին¹¹²: Այնուհետև քերականը տալիս է փաղառության սահմանում: Սովորաբար աղբյուրներում «վանկ» և «փաղառություն» տերմինները միասին են հանդիպում, սակայն այս ձեռագրում խոսվում է միայն փաղառության մասին՝ չհիշատակելով վանկը:

Հաջորդիվ ներկայացվում են առոգանության չորս տեսակները, խոսքի մասերը: Նյութն ավարտվում է բայի քննությամբ, սակայն ամբողջական քննություն չէ, այլ կիսատ է մնում, որի հետևանքով էլ մենք այն համարում ենք քերականական պատառիկ: Այս ձեռագրում ունենք նորահայտ երկու տերմին: Սա ևս, ըստ որոշակի նպատակի, ծաղկաքաղ արված նյութ է՝ շարադրված հարց ու պատասխանի տեսքով և հիմնականում ազդված Դիոնիսիոս Թրակացու քերականությունից:

Հաջորդ ձեռագիրը, որն ուսումնասիրել ենք, կրում է ՄՄ 4149 թվահամարը¹¹³. գրվել է 1304-1305 թթ. Երզնկայում: Ուսումնասիրության ձեռագրերի շարքում հնագույնն է, բովանդակությամբ աստվածաբանական, փիլիսոփայական, ճարտասանական երկերի ժողովածու է, որոնցից բացի կան նաև քերականական մի քանի հատվածական աշխատություններ, բառարանագրական նյութեր: Դրանցից մեկն էլ մեր քննության առարկան է՝ ձեռագրի 397բ-400ա էջերում, բաղկացած չորս փոքր քերականական նյութերից՝ տարբեր պատառիկներ հետևյալ վերնագրերով՝ «Այլ ուստ», «Համաբարբառք ըստ քերականության տաղիցն եւ Արիստոտելի մասանցն եւ այլ նշանից խրատականաց», «Եւ արտաքնոցն նշանից խրատականաց նշանք եւ», «Հանգամանք ոլորակացի գրոց խորագրերով»: Առաջին նյութի մեջ խոսվում է խոսքի մասերի մասին, իսկ «Այլ ուստ» է վերնագրված, հավանաբար տարբեր քերականական նյութերից ծաղկաքաղ անելու պատճառով:

Երկրորդ պատառիկը գուտ լեզվաբանական տերմինների թվարկում է: Այստեղ հատկապես հետաքրքրական են երրորդ և չորրորդ նյութերը: Երրորդի մեջ, որն ունի «Եւ արտաքնոցն նշանից խրատականաց նշանք եւ» խորագիրը, առանձնացվում են հինգ կետադրական նշան, ամեն մեկը մի սիմվոլով ներկայացված՝ «աստղ,

¹¹² Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 95:

¹¹³ Ցուցակ ձեռագրաց ՄՄ, հ. Ա, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965, էջ 1158:

որ է կրկնաբանութեան նշան..., աստղոբել, որ է կէս գրոյ առ ի շեղունեւոյ ի ներքոյստիք, որ է յաւելման նշան առ յառաջորդութիւն բանի...», իսկ «Հանգամանք ոլորակաց ի գրոց» պատառիկ բնագրում տրոհութեան նշանները ներկայացված են յուրօրինակ մոտեցմամբ, այլաբանորեն՝ «... բոլթն՝ ճանաչել զիմաստութիւն... ստորատ՝ սէր, խնդութիւն եւ...» և այլն:

Չորսն էլ քերականական փոքրիկ պատառիկներ են: Այս ձեռագրում նորահայտ քերականական որևէ տերմին չունենք: Վերոհիշյալ նյութերը ևս այս ենթախմբում ներառված բոլոր նյութերի պէս ծաղկաքաղ են արված ըստ նպատակի և պատեհի, իսկ տերմինների առումով նույնն են, ինչ թարգմանչինը:

Հաջորդը ուսումնասիրել ենք ՄՄ 5619 ձեռագիրը¹¹⁴, որը տարբեր նյութերի ժողովածու է՝ բաղկացած մի քանի ձեռագրերից. հիմնական մասը գրվել է 1176 թ., մյուսները՝ XIV, XV դարերում, իսկ մեզ հետաքրքրող ծառը պարզապէս XVII դարի հավելագրութեան է, այդ իսկ պատճառով խնդրո առարկա բնագրի այս ձեռագրում առկա օրինակը ներկայացնում ենք որպէս XVII դարի գործ, տեղն՝ անհայտ: Ձեռագիրը պարունակում է քերականական ծառ, որը ձեռագրի 5րէջում է և ներկայացնում է, լեզվաբանական հասկացութեան ներքին դասակարգում, սակայն ծառին զուգահեռ քերականական նյութը բացակայում է՝ հավանաբար ձեռագրի թերթերի կորստի հետևանքով, քանի որ հազիվ թէ առանց համապատասխան նյութի ծառ լինելու կամ էլ ծառը պիտի ամբողջական լիներ՝ ոչ հատվածական, ուստի նյութը վերածվել է քերականական պատառիկի¹¹⁵: Այս ձեռագրում ծառն այնքան էլ ծառի տեսք չունի, ավելի շատ ձևային նկարագրութեան գծապատկերներ է հիշեցնում, որոնք պայմանականորեն ծառ ենք անվանում, պատկերված են մի քանի խոսքի մասեր իրենց տեսակներով: Ի դեպ, քերականական բնույթի ծառից բացի կան նաև փիլիսոփայական, տրամաբանական ծառեր: Այդուհանդերձ, պարունակած քերականական տերմինների տեսանկյունից այս

¹¹⁴ Ցուցակ ձեռագրաց ՄՄ, հ. Բ, Հայկական ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 148-149:

¹¹⁵ Այս մասին մանրամասն տե՛ս Մանուկյան Տ., Միջնադարյան հայկական քերականութեան ներքին մեջ լեզվաբանական հասկացութեան ներքին և հատկանիշների դասակարգումը ծառերի տեսքով, էջ 389-392:

ծեռագիրը ևս արժեքավոր է. ունենք հինգ նորահայտ քերականական տերմին:

Այսպիսով, աղբյուրների քննության այս բաժնում ներկայացնում ենք յոթ ծեռագիր մատյան՝ թվագրված ԺԴ-ԺԵ դարերով, որոնց քերականական նյութերի մի մասը հատվածական աշխատություններ են, մյուսներն էլ՝ քերականական պատառիկներ:

Հատվածական աշխատությունների դեպքում հատկանշական է այն, որ դրանք ինքնանպատակ ծաղկաքաղ արված նյութեր չէին, այլ հավանաբար ուսումնական նկատառումներով:

Վերոհիշյալ ծեռագրերի ուսումնասիրությամբ մեկ անգամ ևս շեշտում ենք քերականությունների՝ դարեր շարունակ ձեռնարկ-դասագիրք ծառայած լինելու փաստը, ավելին՝ փորձում ենք վերհանել ու ներկայացնել դեռևս անտիպ, չուսումնասիրված աշխատությունների ևս մեկ խումբ՝ լրացնելով մինչև այժմ ուսումնասիրված կամ հրատարակված քերականական աշխատությունների ցանկը:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԼԵԶԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱԽՄԱՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում կատարում ենք տերմինների ձևափաստային քննություն, ինչպես նաև դրանք քննում ըստ հայ տնիության աստիճանի¹¹⁶:

Այս դասակարգումը հետաքրքիր է աղբյուրագիտական և տերմինների կիրառման ժամանակագրության տեսանկյունից:

Ըստ հայ տնիության աստիճանի՝ տերմինները բաժանել ենք հետևյալ խմբերի.

ա. նորահայտ տերմիններ,

բ. հայ տնի տերմինների վաղ կիրառություններ,

գ. հայ տնի տերմինների՝ այլ իմաստով կիրառություններ,

¹¹⁶ Այստեղ քննվող տերմինների մի մասը տալիս ենք լատիներեն նախատիպերով հանդերձ, որոնք ճշտված են թովմափաղացում քերականության հիման վրա: Կարելի է ենթադրել, որ այդ գործը հայերեն որոշ ծեռագիր քերականությունների համար նախատիպ է ծառայել. Tutte le Opere di Tommaso Campanella, Italy, Arnoldo Mondadori editore, 1954, pp.434-713:

դ. հայ տնի տերմինների հնչյունական և բառակազմական նոր տարբերակներ:

Ձեռագրերում տերմինները ներկայացված են տարբեր կերպ՝ ա. տերմիններ՝ սահմանումով և օրինակներով, բ. տերմիններ՝ առանց սահմանման, միայն օրինակներով, գ. տերմիններ՝ առանց սահմանման և առանց օրինակի, պարզապես տերմինի անվան հիշատակությամբ¹¹⁷:

Ի դեպ, նշենք, որ այս դասակարգումը չի բացառում, որ միևնույն տերմինը կարող է պատկանել նաև մյուս խմբերին¹¹⁸:

¹¹⁷ Յուրաքանչյուր տերմինի դիմաց տալիս ենք բացատրությունը՝ ըստ տվյալ տերմինի բնագրային սահմանման և օրինակների, եթե կան, իսկ վերջիններիս բացակայության դեպքում տալիս ենք միայն տերմինը՝ գերծմնալով որևէ բացատրություն-ենթադրությունից: Աշխատության մեջ տերմինների նման ներկայացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջնադարում խոսքի մասերի սահմանազատումը դեռևս հստակ չէր, և հաճախ նույն բառը կարող էր տարբեր խոսքի մասերի վերագրվել, որը և տեսնում ենք ձեռագրերում, ինչպես նաև ժամանակի ընթացքում տեղի է ունեցել խոսքի մասային փոխանցումներ, այսինքն՝ անցյալում բառը մի խոսքի մասի էր պատկանում, ներկայումս՝ մեկ այլ. այդ իսկ պատճառով յուրաքանչյուր տերմինի բացատրությունը տրվում է միայն տվյալ ձեռագրում եղած բնագրային նյութի, առանց հարաբերակցելու ժամանակակից որևէ խոսքի մասի:

¹¹⁸ Նույն տերմինի մասին երկրորդ անգամ հիշատակելիս այլևս բնագրից մեջբերում չենք անում, ինչպես նաև չենք նշում ձեռագրի համարն ու էջահամարը և ԼԲ-ի հղումը:

1. ՆՈՐԱՅԱՅՏ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Նորահայտ ասելով՝ նկատի ունենք բոլոր այն տերմինները, որոնք գիտական շրջանակներին են ներկայացվում առաջին անգամ, դրանք արձանագրված չեն հատկապես տերմինաբանական և լեզվաբանական բառարանում տերմինային արժեքով¹¹⁹:

Ածական [ածառոր] (լատ. *accidentale adiectivum*) - որակական ածական. «ածառոր երկու է... միևսն ածական, որ ձայնիւ և իրօք, է ածառոր, որպէս՝ չար, սպիտակ, ժամանակաւոր, որգոն ասելով՝ հոգի է չար, մարմին է սպիտակ, է ժամանակաւոր» (ՄՄ 2295, 55ա):

*Աղանդական [գաղափար]*¹²⁰ - վերաբերության, պատկանելության իմաստարտահայտող ածանց. «գաղափարք այսոքիկ եան և կան... երբեմն ասին աղանդական ի տեսակի, որգոն՝ արիոսական, եւ տիքական, մակեդոնեան, քրիստոնեան..., գաղափարս այս ցի... երբեմն ասի աղանդական ի տեսակի, որգոն՝ մանիքեցի, փարիսեցի..., գաղափարս այս նոս ասի աղանդական ի տեսակի, որգոն՝ Յերովդիանոս, Արիանոս..., գաղափարս այս եայ... երբեմն ասի աղանդական ի սեռի, որգոն՝ քրիստոնեայ » (ՄՄ 2284, 44ա):

**[Աճեցուցանող առբայ]*¹²¹ (լատ. *intensivum adverbium*) - ձևի մակբայ. «որպիսութեան առբայք ի գործին կողմանէն զգործին մայլ ու թիւն կամ այլ այլ ու թիւն նշանակեն, սոցին ոմանք զգործն աճեցուցանեն,

¹¹⁹ Տերմինների նորահայտ լինելու հանգամանքը ստուգելու համար առաջ նորոգվել ենք հետևյալ հրատարակությունների տվյալներով՝ Լեզվաբանական բառարան (Երևան, 1975), ՆՅԲ, հ. Ա-Բ (Վենետիկ, 1836, 1837), Բարսեղյան Յ., Յայերեն ուղղագրական-ուղղափոսական տերմինաբանական բառարան (Երևան, 1973), Յովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան (Նոր Յայկաջյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010), Առաքել Սիւնեցի, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, «Բառարան», էջ 227-229 (Լոս Անճելոս, 1982), Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, «Բառացանկ քերականական տերմինների և դժվարիմաց բառերի», էջ 193-202 (Երևան, 1966), Յովհաննէս Երզնկացի, Յաւաքումն մեկնութեան քերականի, «Բառարան», էջ 371-380 (Լոս Անճելոս, 1983), Յովհաննէս Ծործորեցի, Յամառատ տեսութիւն քերականին, «Բառացանկ քերականական տերմինների և դժվարիմաց բառերի», էջ 363-374 (Լոս Անճելոս, 1984), Յովհաննէս Քնեցի, Յաղագս քերականի, «Երկում վկայված քերականական տերմինների ցանկ», էջ 222-226 (Երևան, 1977), Մուրադյան Ա., Յունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, «Տերմինների այբբենական ցանկ (հայերեն-հունարեն)», էջ 351-354 (Երևան, 1971), Ն. Ադոնց, Երկեր, հ. Գ., «Տանկք անուանց և բառից», էջ 289-302 (Երևան, 2008):

¹²⁰ Ուղղանկյուն փակագծով տալիս ենք այն ընդհանուր տերմինները, որոնք ձեռագրում բուն տերմինին կից չեն տրված:

¹²¹ *Աճեցուցանող առբայ* տերմինը այս ձևով չի վկայված ձեռագրում, բայց բացատրությունից ելնելով՝ ենթադրում ենք, որ կարող էր ունենալ այս անվանումը (հմմտ. նաև *նուստացուցանող առբայ*):

որգոն՝ աւել, առաւել, առաւելագոյն, յոյժ, ուժգին, սաստկապէս, բազում, բնաւ, ամենևին, ամենայնիւ» (ՄՄ 2295, 79ա):

Ամանակական [անուն] - ժամանակի իմաստ արտահայտող ածանցավոր անուն. «ամանակական է, որ յանունն է և կամ առբայ է ածանցի եւ գաղափարք են երկու՝ ային, եան, հիկէն՝ ամառնային, գիշերային, երիկեան, սերկեան, վաղուեան» (ՄՄ 2276, 146ա):

Ամանակաւ որ [բան] - երկրորդական նախադասության տեսակ, որի ստորոգյալն արտահայտված է դիմավոր բայով, քանի որ սահմանում և օրինակներ չունի, կարծում ենք, որ խոսքը դիմավոր նախադասության մասին է. «Բանն բաժանի ի յերկուս՝ ի կատարեալն և յանկատարն..., իսկ անկատարն բաժանի յերկուս՝ յամանակաւ որս և յանամանակս» (BzAn 547, 63բ):

Այ ապու սական [առբայ] – տե՛ս *ապու սական առբայ* :

Անամանակ [բան] - անվանական միակազմ նախադասություն. «Բանն բաժանի ի յերկուս՝ ի կատարեալն և յանկատարն..., իսկ անկատարն բաժանի յերկուս՝ յամանակաւ որս և յանամանակս» (BzAn 547, 63բ):

Անեզրական բան - անդեմ նախադասություն. «բանն անեզրական ունի յինքեան զանորոշութիւն իմն դիմի, որգոն՝ բարի է յուսալ ի Տէր» (ՄՄ 2284, 41բ):

Անեզրական [եղանակ] - հարկադրական եղանակ. «անեզրական, որգոն՝ սիրել պարտիմք զմիմիանս վասն Աստուծոյ» (ՄՄ 2284, 47բ):

Անիծողի [անյայտ բան] (լատ. *imprecantis oratio confusa*) - կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություն. «անիծողի, որպէս՝ մեռի՛ր, վա՛ր չեզ» (ՄՄ 2295, 84ա):

Անհատ[փոխանուն] (լատ. *singulare pronomen*) - ցուցական դերանուն. «անհատ է, զմիմիայն նշանակէ, հիբար՝ այս մարդ, այդ, այն, միմարդ» (ՄՄ 2295, 62բ):

Անհատական [հասարակ անուն] (լատ. *singularia commune nomen*) – ցուցականության իմաստով արտահայտված հասարակ անուն. «անուն ևս ի փոխանունաց հասարակք եղանին... և անհատականք, որգոն՝ այս մարդ...» (ՄՄ 2295, 56ա):

*Անհատական [փոխանուն]*¹²² (լատ. *singulare pronomen*) - ցուցական դերանուն. «անհատական է, որ զմին անձն միայն, հիբար՝ այս մարդս, սա, դա, նա, մին և այլն» (ՄՄ 2286, 146բ):

Անյայտ [բան] (լատ. *distincta oratio*) - ձայնարկությամբ արտահայտված նախադասություն, սակարելի է անվանել նաև բառ-նախադասություն. «անյայտ է մեկ բառ, որ անպարզապես բառից շարադրութիւն ունի, որպէս՝ վա՛ր և ձայն ծիծաղական և լալական և նշանք առանց խաւսից և այլ բան են անյայտ, բայց մտաւք այսպէս իմանամք՝ ես ցաւիմ, ես ծիծաղիմ, ես լամ և այլն» (ՄՄ 2286, 139ա), «անյայտն եղանի կամ առանց բառից, բայց նշանիւք միայն, կամ բառիւ միով, որք հոգոյ զկրմունս, զծանուցմունս և զմայլութիւնս ցուցանեն, վասն որոյ ի քերթողաց մասն բանի կոչի և միջադրութիւն, վասն զի բայն ի մասանց մէջ դնին... բան են անյայտ, զի մտք իմանամք, եթէ ես ծիծաղիմ, ես լամ, ես ցաւիմ, ես զարմանամ» (ՄՄ 2295, 52ա):

Անյայտ բան (լատ. *oratio confusa*) - նույնն է՝ ձայնարկություն. «անյայտ բան է ցուցումն, որ ոչ ի բառս անջատի, այլ անկատար ձայնիւք և ոչ լաւ առբերածովքն, զհոգոյ կրմունս, զիմացմունս և զմայլութիւնս նշանակէ» (ՄՄ 2295, 83ա):

Անորոշելի [էակ անուն] – անվան տեսակ, վերացական իմաստ արտահայտող գոյական. «էակ երեք՝ զգալի, իմանալի և անորոշելի... անորոշելի, որգոն՝ սուրբ» (BzAn 547, 5ա):

Անտիտական [առբայ] - մակբայի տեսակ, սահմանված չէ, օրինակներ չկան (BzAn 547, 29ա):

Անցուցական [առբայ] – ժամանակի մակբայ. «եւ ոմանք անցուցականք որզան՝ միշտ, հասապազ, ցանգ, յար, յաւէժ» (BzAn 547, 30ա):

Անուղղական [առբայ] - ձևի մակբայ. «անուղղական՝ տարապարհակ, տարապարտուց, վայրապար, վարկապարագի, ընդ վայր, զուր» (BzAn 547, 32բ):

¹²² Հետագայում տերմինը այլ իմաստներ է ձեռք բերել՝ *անհատական լեզու*, *անհատական սեռ*, տե՛ս ԼԲ, էջ 15:

Ապրւ սական [առքայ] - բացասման, հրաժարման մակբայ, որի մեջ են մտնում *բացասական, փոխերդմական և հրաժարական մակբայ ներք* (BzAn 547, 31ա):

Ապրւ սահետական [շաղկապ] - ժխտման հարաբերություն և արտահայտող ներհակական համադասական շաղկապ. «ապրւ սահետական է, որ միշտ զկնի բացբարձականացն դնի և է՛այլ, որպակ՝ ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ, որ յիս» (ՄՄ 2018, 430բ), «ապրւ սահետական է, որ միշտ զկնի բացբարձականացն դնի եւ է՛այդ, որպակ՝ ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ, որ յիս» (BzAn 547, 35ա):

Առաձգական [անուկ] - նույնն է՝ ածական. «Առաձգական է, որ զբազում ինչ թէ ներգործութեամբ, թէ զօրութեամբ անյատկապէս նշանակէ, որգոն՝ առողջ» (ՄՄ 2284, 41բ):

Առանուկ (լատ. *adnomen*) - նույնն է՝ նախդիր, նախադրություն. «վասն որոյ առքայ ընդբայի միաւորի, իսկ նախդիր ընդանունան, ապա ուրեմն ուղղապէս կոչեցցի առանուն, քան նախդիր, զի նախդրիլն է ամենայն իրաց, որք յառաջադրին կա՛մ ի բնութեան, կա՛մ ի բառից, բայց առյանունան նախդնելն յատկութիւնն է այսմասինս բանի, զոր յայսմանէ նախդիր կոչեցին» (ՄՄ 2286, 156ա), «առքայ ընդբայիւ միաբանի, իսկ նախդիր ընդանունան, ուստի ևս ուղղագունաբար առանուն ասիւր, քան զնախդիր, զի նախդրիլն է ամենայն իրաց, որք յառաջադրին, թէ՛ ի բնութիւն, թէ՛ ի բառս, բայց անունան նախդրիլն յատկութիւնն է բանի մասիս այսու, զոր յայսմանէ կոչեմք զնախդիր, իսկ լաւագոյն առանուն» (ՄՄ 2295, 74բ):

Առաջաւոր [անուկ] (լատ. *primitivum nomen*) - նույնն է՝ պարզ, արմատական կամ նախագաղափար անուն. «անունաց ոմն յառաջաւոր... առաջաւոր է, որ ոչ ումեքէ է քերականաբար, որպէս՝ մարդկային՝ ի մարդէն և լեռանական՝ ի լեռնէն... առաջաւոր՝ գոյաւոր» (ՄՄ 2295, 56բ):

Առքայական [բան] - մակբայով (հարաբերական դերանունով) կապված երկրորդական նախադասություն. «յառքայական է առքայականն, որգոն՝ իբրև զարթեալ բանտապետն և ետես զդրունս բանտի» (BzAn 547, 82ա):

*Առինչ գոյոյ [փոխանու ն]*¹²³ (լատ. *essentiae relativum pronomen*) - անձ, էությունն ցույց տվող «առնչական» դերանունն. «առնչական փոխանունն երկու է՝ ոմն գոյոյ... առնչական գոյոյ է, որ իրի զբնութիւնն առբերէ և ցուցանէ որպէս գոլովն կամ որպէս արտակալովն, որգոն՝ մարդ ճանաչէ զԱստուած, որ Արարիչ է, այ ժմ որ զԱստուած առբերէ» (ՄՄ 2286, 147բ):

Առինչ գոյոյ այլ այլ ութեան [փոխանու ն] (լատ. *diversitatis relativum substantiae pronomen*) - զանազանությունն ցույց տվող «առնչական» դերանունն. «առինչ գոյոյ երկու է... ոմն այլ այլ ութեան... առինչ այլ այլ ութեան գոյոյ առբերէ զայլ այլ եալ յառաջասացելոցն, հիբար՝ այլ որպէս ասելով, ես տեսանեմ զՊետրոս և այլ զմարդս...» (ՄՄ 2286, 147բ):

Առինչ գոյոյ նոյնութեան [փոխանու ն] (լատ. *identitatis relativum substantiae pronomen*) - նույնությունն ցույց տվող «առնչական» դերանունն. «առինչ գոյոյ երկու է, ոմն նոյնութեան... առինչ նոյնութեան է, որ զնոյն ամենեւին, որ առաջասացեալ է, նշանակէ, որգոն՝ որ, նոյն, ինքն, նա, իւր, որպէս՝ մարդ, որ է շնչաւոր, զգայուն, և մարդ է շնչաւոր և նոյն զգայաւոր, որ և զնոյն զասացեալ մարդ, զնոյն ամենեւին նշանակէ գոյաբար» (ՄՄ 2286, 147բ):

Առնլիք - խոսքի մասեր, որոնք կապակցվում են առդրությամբ. «իսկ առնլիք են, որք առնանին պատկապէս և ոչ հարկաւորաբար, որզան՝ յոյժ սիրեմ զքեզ, արդ զքեզն սիրեմ բային հարկաւոր է, իսկ յոյժն առնլի..., առնլի՝ ընդունելութիւն, դերանուն, յօդ և նախադրութիւն» (BzAn 547, 48բ, 50ա):

Արարողականք - անորոշ դերբայի հոլովված ձևեր. ներառում է միայն երեք հոլովածն, քանի որ անորոշ դերբայի հարացույցը պակասավոր է, կոչել են նաև պակասական ընդունելությունն. «արարողականք երեք՝ բառնալոյ, ի բառնալ, բառնալով, և արարողականք ասին, վասն զի ի ներգործելոյ կամ ի սպասաւորելոյ իրին ունի նշանակութիւնն առանց զանազանութեան ամանակի, որով զինազժամանակ կամ զսպասաւորութիւն ցուցանէ, տինառչ ունելով թիւ ինչ, որպէս նայն եւ գաղափարք են սորաԳ.՝ նախ՝ լոյ, երկրորդ՝

¹²³ Հետագայում Ոսկան Երևանցին բառակազմական այլ տարբերակ է գործածել նույն հասկացության համար՝ *գոյացական դերանուն*, տե՛ս ԼԲ, էջ 75:

ալ կամ ել կամ ուլ, երրորդ՝ լ ով... բայց ոմանք կամին գսա պակասական ընդունելութիւն գոլ, վասն զի միայն երից հոլովոց ցուցութիւն ունի» (ՄՄ 2276, 160ա), սրան համարժեք Կղեմես Գալանոսն ունի *գործակալ* տերմինը¹²⁴:

Արգել օղի [անյայտ բան] (լատ. *prohibentis oratio confusa*) – ժխտում արտահայտող ձայնարկություն. «արգել օղի, որպես՝ մի, քաւ լիցի» (ՄՄ 2295, 83բ):

Արտաքարշեալ [անուշ] - անվան տեսակ, վերացական իմաստ արտահայտող գոյական. «ոմն է արտաքարշեալ, որգոն՝ սրբութիւն» (ՄՄ 2284, 42ա):

*Բաղադրեալ մականու*¹²⁵ - բաղադրյալ ածական (ՄՄ 5619, 5բ):

Բաղդասական [մակբայ] - ձևի մակբայ. «նոյնպէս և բաղդասական ի հեշտականացն է, որ ասէ բէք, ջէք, իբր թէ բէք այնպէս գեղեցիկ էր սկիզբն, բէք այնպէս պայծառ է արեգակն, իսկ ջէքն խրախճանագոյն ըսի կամ զօրագուարճ...» (ՄՄ 2281, 302բ), նույնանում է թարգմանչի *բաքասական մակբայ* ներքի հետ¹²⁶:

Բայ աւարտական [շաղկապ] - պայմանի հարաբերություն արտահայտող ստորադասական շաղկապ. «բայ աւարտական է, որ առաւել յաւարտումն բայի դնի և է՝ թէ, որգոն՝ ասացի, թէ Աստուածք իցէք» (ՄՄ 2018, 430բ), «բայ աւարտական է, որ առաւել յաւարտումն բայի դնի եւ է՝ թէ, որգոն՝ ասացի, թէ Աստուածք իցէք» (BzAn 547, 35ա):

Բանաւոր շաղկապ (լատ. *rationalis coniunctio*) - պատճառի, հիմունքի հարաբերություն արտահայտող ստորադասական շաղկապ. «բանաւոր շաղկապ է, որ զասացեալ ընդ պատճառիւ ասացելոյն միացուցանէ. որգոն՝ դու իմաստուն ես, քանզի զփիլիսոփայութիւն կարդացեր [ես], և ես բանաւորքն՝ զի, քանզի, վասն որոյ, վասն այսորիկ» (ՄՄ 2295, 81բ):

Բարկացողի [անյայտ բան] (լատ. *irascentis oratio confusa*) - բարկություն արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 83բ):

¹²⁴ ԼԲ, Էջ 75:

¹²⁵ Հետագայում տերմինը այլ իմաստներով է կիրառվել՝ *բաղադրյալ բայ*, *բաղադրյալ բառ*, *բաղադրյալ բան*, *բաղադրյալ դերանուն*, *բաղադրյալ ժամանակ*, *բաղադրյալ խնդիր*, *բաղադրյալ հիմք*, *բաղադրյալ ձայնավոր*, *բաղադրյալ մակբայ*, *բաղադրյալ շաղկապ*, *բաղադրյալ նախադասություն* և այլն, տե՛ս ԼԲ, Էջ 45:

¹²⁶ Ն. Ադունց, նշվ. աշխ., Էջ 33:

Բացական [առքայ] - տեղի մակբայ . «բացականք՝ հեռի, տար» (BzAn 547, 30ա):

Բացայ այ տական [առքայ] – բացահայ տման մակբայ . «բացայ այ տական՝ այս է, այդ է, որբար, որգոն, որգան, հիկէն, հիբար, հիգան, հիպէս, որպակ, հիպակ և այլք» (ՄՄ 2276, 173ա):

Բացասողի [անյայտ բան] (լատ. *negantis oratio confusa*) - ժխտում արտահայտող ձայնարկություն . «բացասողի, որպէս՝ ոչ» (ՄՄ 2295, 84ա):

Գաղտական [մակբայ] - ձևի մակբայ . «գաղտական՝ ի թաքստեան, ի գաղտնիս, գաղտ, ծածուկ» (ՄՄ 2284, 15ա), նույնական է Յովհաննես Յուզովի *Ծածկական մակբայի* հետ¹²⁷:

Գոյական [ածաւոր] (լատ. *substantiale adiectivum*) - փոխանվանական կիրառությունամբ գոյականի վերածված ածական, հարաբերական ածական . «ածաւոր երկու է. մինն գոյական, որ ձայնիւ միայն ածաւոր է, որգոն՝ բանական, մարդկային, որ է հոգոյ, որպէս՝ յորժամ ասեմ հոգի բանական կամ մարդկային» (ՄՄ 2295, 55ա):

*Գոյական բայ*¹²⁸ (լատ. *substantiale verbum*) - նույնն է՝ էական, գոյություն ունենալու իմաստ արտահայտող բայ . «բայ էական կամ գոյական լինի, որգոն՝ մարդ է բանական, այժմ է եռութեանն հոսումն յոյժնուրբ նշանակէ...» (ՄՄ 2286, 150ա):

Գոյաւոր [ածական] (լատ. *substantiale adiectivum*) - էական հատկանիշներ նշող ածական . «բայց ածական կրկին է, ոմն գոյաւոր, որ ձայնիւ միայն է ածական, որպէս՝ բանական, աստուածային, մարդկային, որպէս ասելով՝ բանական հոգի, աստուածային անձն, մարդկային բնութիւն և այլն, այժմ բանական, աստուածային, մարդկային գոյաւորք են, զի գոյացութիւն և եռութիւն իրաց են ըստ նշանակեալ իրի, բայց ըստ անուան և ըստ կերպի նշանակելոյն միայն ածական են և որպէս պատահումն երեւին» (ՄՄ 2286, 140ա):

Գուժարական [մակբայ] - ընդհանրական իմաստ արտահայտող մակբայ . «գուժարական՝ ի միասին, համանգամայն, միանգամայն, միահաղոյն, առհասարակ, ընթիանրապէս, համօրէն, համակապէս,

¹²⁷ ԼԲ, Էջ 144:

¹²⁸ Յետագայում տերմինը հայտնի է նաև հետևյալ իմաստներով՝ Յովհաննես Յուզովի *Կոստանդնուպոլսեցի գործածել է գոյական ածանցական անունն*, Մ. Սալլանթյանը՝ *գոյական դերանունն*, Ա. Այտընյանը՝ *գոյական դերբայ*, Մ. Աբեղյանը՝ *գոյական խոսք*, կան նաև *գոյական անունն*, *գոյական վերադիր*, *գոյական որոշիչ* տերմիններ, տե՛ս ԼԲ, Էջ 74-75:

բովանդակ, բնաւ » (ՄՄ 2284, 15ա), նույնական են Յովհաննես Յովովի *Ժողովական մակբայի* հետ¹²⁹:

Դերդերանուն - դիմորոշ հոդ. «ոմանք են դիմաւորիչք, որք են այսոքիկ՝ ս, դ, ն, որգոն՝ բանս, բանդ, բանն, բայց սոքա են մանաւանդ դերդերանունք, քան դերանունք» (ՄՄ 2284, 46ա), նույնական է Յովհաննես Յովով Կոստանդնուպոլսեցու *դիմորոշական դերանուն* նի հետ¹³⁰:

Եղանակագրութիւն - քերականության բաժիններից, որն ուսումնասիրում է գիրը, տառը իր տարատեսակներով. «յաղագսյ եղանակաց գրութեան. կերպագրութեան է, բացայայտող զձև և ուղիղ գրելոյ, որ տառիւք եղանի» (ՄՄ 2276, 139ա):

Երեքկնաբարդ - եռաբաղադրիչ հարաբարդ անուն. «Երեքկնաբարդ, որգոն՝ բարեպաշտասիրապահ» (ՄՄ 2284, 43ա):

Երկիւղածի [անյայտ բան] (լատ. *timentis oratio confusa*) – վախ, երկյուղ արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 83բ):

Երկմտական [շաղկապ] – սահմանափակման իմաստ արտահայտող շաղկապ. «Երկմտականք՝ գէթ, գոնէ, փաթար, գոնեայ» (ՄՄ 2284, 16ա), նույնական է թարգմանչի *վարանական շաղկապի* հետ¹³¹:

Երկմտելոյ [առբայ] (լատ. *dubitandi adverbium*) - երմտանքի մակբայ. «Երկմտելոյ են՝ գուցէ» (ՄՄ 2295, 78բ):

Երկմտողի [անյայտ բան] (լատ. *dubitantis oratio confusa*) – երկմտանք, երկբայություն արտահայտող ձայնարկություն. «Երկմտողի, որպէս՝ միթէ, գուցէ» (ՄՄ 2295, 84ա):

Երկրորդական [առբայ] - ձևի մակբայ. «Երկրորդական՝ միւսանգամ, երկրորդ անգամ, դարձեալ, վերըստին, և ևս և այլք» (ՄՄ 2276, 173ա):

Երկրորդաընտրական [շաղկապ] - սահմանափակման իմաստ արտահայտող շաղկապ. «Երկրորդաընտրականք (*այսպէս*) են, որք յառաջնոյն վրիպեալք գերկրորդն ընտրել հարկաւորին, որք են այսք՝ գէթ, գոնէ, փաթար, հիզան՝ եթէ ինձ ոչ հաւատայք, գոնէ վասն

¹²⁹ ԼԲ, Էջ 115:

¹³⁰ ԼԲ, Էջ 84:

¹³¹ ԼԲ, Էջ 283:

գործոյն հաւատացէք» (ՄՄ 2276, 175ա), նույնանում են թարգմանչի վարանական շաղկապի հետ¹³²:

Երկրորդախնդրական [շաղկապ] - ստորադասական գիշական շաղկապ. «Երկրորդախնդրական է, որ գկնի իւր բանին այլ ևս բան պահանջէ և է՝ թեպէտ, որզան՝ թեպէտ որդի է, ուսաւ ի չարչարանաց անդի գհնազանդութիւն» (ՄՄ 2018, 430բ), «Երկրորդախնդրական է, որ գկնի իւր բանին, այլ ևս բան պահանջէ եւ է՝ թեպէտ, որզան՝ թեպէտ որդի է, ուսաւ ի չարչարանաց անդի գհնազանդութիւն» (BzAn 547, 35բ):

Չարդ [նախադրութիւն] – նույնն է՝ նախաճանց. «Եւ ոմանք զարդք միայն, որպէս՝ ներ, արտ, ատր, որզան՝ ներընդունակ, արտորոց, ատրասայց» (BzAn 547, 28ա):

Չարդ և հարկաւ որ [նախադրութիւն] – անուն խոսքի մասին կամ բային կցվող նախդիր. «իսկ ոմանք և զարդք և հարկաւ որք, որք են այսքան՝ արդ, տի, ըստ, ըզ, ցը, ըն, յ, ի, առ, ընդ, որզան՝ արդասա՛ ինձ, տի միանգամայն, ըստայնմ...» (BzAn 547, 28ա):

Չգալի [էակ անուն] - անվան տեսակ, նյութական իմաստ արտահայտող գոյական. «էակք երեք՝ զգալի, իմանալի և անորոշելի, զգալի, որզան՝ քար» (BzAn 547, 5ա):

Ընդդիմահարցական [շաղկապ] - երկբայական-հարցական վերաբերմունք արտահայտող շաղկապ. «ընդդիմահարցականք են, որք երբեմն ընդ հարցումն և պատասխանին յայտնեն և են այսք՝ արդե՞օք, մի՞թէ, հիբար՝ որք ննջեցինք ի Քրիստոս, կորեան արդե՞լք» (ՄՄ 2018, 430բ), «ընդդիմահարցականք են, որք երբեմն ընդ հարցման և զպատուիրանիս յայտնեն եւ են այսք՝ արդե՞օք, մի՞թէ՞, հիբար՝ որք ննջեցին ի Քրիստոս, կորեան արդե՞օք» (BzAn 547, 35ա):

Ընդունակ (լատ. participium) - նույնն է՝ ընդունելութիւն, դերբայ. «վասն ընդունակի, զոր ընդունելութիւն կոչեն. ընդունակ է մասն բանի հոլովական, որ գեութիւն ի միասին ընդ իւրում գործողութեան կամ զգործողութիւն ընդ եութեամբն, որում է գործողութիւն, նշանակէ..., ընդունակ կոչեցինք և ոչ ընդունելութիւն, զի ընդունելութիւն վերացեալ անուն է, որ ոչ զառնօղ, այլ զառնումն նշանակէ... ընդունակ ասի, վասն զի զանուն

¹³² Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 37:

և գբայ ի նշանակութիւն ընդունի, որ է եռութիւն և զգործողութիւն...» (ՄՄ 2295, 72բ-73ա):

Ընդունել ական [բան] - դերբայ ական դարձված. «յ ընդունել ական է առ ընդունել ական, որգոն՝ իմացեալ զխորհուրդս նոցա և տեսեալ, թէ ոչ» (BzAn 547, 81բ):

*Ընթանրական [անուն]*¹³³ - անվան տեսակ, ընդհանրական նշանակությամբ դերանուն. «ոմն է ընթանրական, որգոն՝ ամենայն, ոչ ոք, որինչ, ոչ ինչ, բնաւ, համայն, հանուր» (ՄՄ 2284, 42ա):

Ըշտապական [մակբայ] – հապճեպության մակբայ. «ըշտապական՝ փութով, շուտ, փոյթ, փոյթ ընդ փոյթ, ըստեպ, վաղվաղակի, փութանակի, արագապես, կանխապես» (ՄՄ 2284, 15բ), նույնական է Կղեմես Գալանոսի *երագական մակբայ* ի հետ¹³⁴:

Թագիկ - թագի պատկեր ունեցող տրոհության նշան, դրվում է տրական հոլովի վերջնականի վրա սեռականից տարբերելու համար. «թագիկն դնի ի վերայ տրականաց վերջահոլովից առ ի գատել ի սեռականաց, որգոն՝ շնորհեաց Պետրոսի՝» (ՄՄ 2284, 52բ):

Թիւրականք (լատ. *casus obliquus*) - թեք հոլովներ. «բայց այլք հոլովքն ոչ ուղղականքն, այլ թիւրականք են, վասն զի ոչ եռթեանց համար դրածք են, բայց վասն շրջակայութեանցն և այլ իրացն, որք եռթեանց պատահին» (ՄՄ 2295, 53բ):

Թիւր [անկ] (լատ. *casus obliquus*) - թեք հոլով. «յ անկից ոմն ուղիղ... ոմն թիւր, որ ոչ է վասն իրի անուանման, այլ վասն այնորիկ, որ ի վերայ իրի լինի և վեց են՝ սեռական, տրական, կրաւորական, կոչական, գործիական, առողական» (ՄՄ 2286, 143բ):

Իմանալ ի [էակ անուն] – անվան տեսակ, մտածական իմաստ արտահայտող գոյական. «էակ երեք՝ զգալի, իմանալի և անորոշելի... իմանալի, որպակ՝ խրատ» (BzAn 547, 5ա):

Ինքնածական [բան] - երկրորդական նախադասություն. «իսկ ինքնածական է, որ ոչ իբրև գիարցումն յայլ մե խնդրե պատախանի, զի կատարեսցի, այլ ինքն բերե ի վերայ զկատարելութիւն բանին..., իսկ

¹³³ Հետագայում կան նաև *ընդհանրական դիմալոր նախադասություն*, *ընդհանրական լեզու*, *ընդհանրական հնչյուն նախադասություն*, *ընդհանրական մակբայ* տերմինները, տե՛ս ԼԲ, էջ 104:

¹³⁴ ԼԲ, էջ 91:

ինքնաճականքն լինին ընդունելու թեամբն, առբայիւն, շաղկապաւն և դերանունամբն» (BzAn 547, 64բ):

Իսկական [փաղառություն] - վանկի տեսակ, սահմանված չէ. «հարցումն. Ի քանի՞ս բաժանի փաղառութիւն: Պատասխան. Յերկեկս՝ յիսկական և ի տաճ» (ՄՄ 2366, 14ա):

Լացողի [անյայտ բան] (լատ. *lugentis oratio confusa*) - զգացում արտահայտող ձայնարկությունն. «լացողի, որպէս՝ վա՛րջ» (ՄՄ 2295, 84ա):

Լուծական [շաղկապ] (լատ. *expositiva coniunctio*) – բացահայտման ստորադասական շաղկապ. «լուծական է, որ անյայտ իրին զյայտնութիւն միացուցանէ, հիզան՝ մարդ է ծիծաղական, այսինքն է՝ ծիծաղել կարող է, յորժամ կամենայ, եւնլուծականքն՝ այսինքն է, որ այսպէս է գրութիւն» (ՄՄ 2295, 82ա):

Խտտորումն (լատ. *declinatio*) - նույնն է՝ հոլովումն. «խտտորումն է յանկից անուանց հոլովումն հասարակաբար» (ՄՄ 2286, 144բ), «խտտորումն է անուանց անկից հոլովումն հասարակաբար» (ՄՄ 2295, 59ա):

Խտտորումն (լատ. *declinatio*), *խտտորումն բայի* (լատ. *declinatio verborum*) - բայի խոնարհում. «բայից պատահի յանկ և խտտորումն, զի յամենայն դեմբառի զվերջն փոփոխէ, որգոն՝ սիրեմ, սիրես, սիրէ» (ՄՄ 2286, 151ա), «բայից խտտորմունք փոխին, որպէս և անուանց և ճանաչին յառաջին անձնէ, յառաջին խտտորումն ունի զյառաջին դեմամ և զաներևոյթն՝ ալ, որգոն՝ կարդամ, դաս, դայ ...» (ՄՄ 2295, 68ա):

Խորհրդաւոր [կրկնաւոր բայ] (լատ. *meditativum derivativum verbum*) – մտածելու, խորհելու ընդհանուր գաղափար արտահայտող ածանցավոր բայ. «բայից կրկնաւորացայլ է սկզբնաւոր և այլ է խորհրդաւոր, այլ յաճախաւոր և այլ պակասաւոր, որոց օրինակ ոչ ունիմ, զի ոչ գտի» (ՄՄ 2295, 70ա), նույնն է՝ մտածական բայ¹³⁵:

Ծանուցանելոյ [առբայ] (լատ. *demonstrandi adverbium*) – բացատրող-մեկնող մակբայ. «ծանուցանելոյ եւն՝ ահա, ահաւասիկ, այսինքն է» (ՄՄ 2295, 78բ):

Ծառայական [բայ] (լատ. *servile verbum*) - օժանդակ բայ. «բայից այլ դիմաւոր, այլ անդեմ, այլ ծառայական... ծառայականք դիմաւորացն և անդիմացն ծառայ եւն և ընդդիմաւորօք դիմաւորականք եւն, որպէս դու

¹³⁵ ԼԲ, Էջ 221:

պարտիս զապաշխարանս քաշել և ընդ անդիմօք անդեմք դառնան, որգոն՝ սիրել պարտե» (ՄՄ 2295, 67բ):

Ծիծաղօղի [անյայտ բան] (լատ. *ridentis oratio confusa*) – ուրախություն, հրճվանք արտահայտող ձայնարկություն. «ծիծաղօղի, որպէս՝ հա, հա-հա» (ՄՄ 2295, 84ա):

Կապաւոր շաղկապ (լատ. *copulativa coniunctio*) - համադասական միաւորիչ շաղկապ. «կապաւոր շաղկապ է, որ զիրս ի մի գործ կամ զիրս և զգործս ամենեւին միաւորե և են կապաւորքն՝ և, ևս» (ՄՄ 2295, 80բ):

Կատարելական [շաղկապ] - շաղկապի տեսակ, բացատրված չէ, օրինակներ չկան (ՄՄ 2276, 174բ):

Կատարունական [բայ] - բայի տեսակ, չեզոք սեռի բայեր. «կատարունականք այն ասին, որք զիմացումն կատարեալ ցուցանեն, թարց առադրելոյ հոլովմանց, որպակ՝ կամ, նստիմ, յառնեմ, կանգնիմ, գոյանամք և այլք» (ՄՄ 2276, 154բ):

Կարգաւորական [մակբայ] - կարգային իմաստ արտահայտող մակբայ. «կարգաւորական՝ առաջ, յառաջոյ, նախ, երրորդ, յետոյ, յայսմի վայր, այսուհետև, միըստմիջէ» (ՄՄ 2284, 15բ), նույնական է թարգմանչի դասական մակբայների հետ¹³⁶:

Կարգի առբայ (լատ. *ordinis adverbium*) - կարգային իմաստ արտահայտող մակբայ. «այլք են առբայք կարգի, որգոն՝ յառաջնապէս, երկրորդաբար, յետոյ, այսուհետև և այլն» (ՄՄ 2295, 78ա):

Կարգի և դրութեան [առբայ] (լատ. *ordinis et dispositionis adverbium*) - ընդհանրական իմաստ արտահայտող մակբայ. «այլք կարգի և դրութեան ի միասին, զի զգործողութիւնս կամ ժողովեն կամ տարածեն, ժողովելոյ առբայք են՝ հանդերձ, ի միասին, միատեղ, միապէս, միաբան, հասարակապէս, հանուրք, ընդհանուր, միաւորաբար և այլն, տարածելոյ են՝ առանձին, առանձնակի, որոշապէս, մէկ-մէկ, տեսակապէս, երկատ, երկուտակ, միըստմիջէ» (ՄՄ 2295, 78ա):

Կերպափոխական [շաղկապ] - հակասման հարաբերություն արտահայտող ներհակական համադասական շաղկապ. «կերպափոխականք են, որ զհետագայ բանն ընդ անցելոյն զանազանեն և են այսք՝ բայց, իսկ, այլ, սակայն, որգոն՝ դու բարեոք գոհանաս, այլ ընկերն ոչ

¹³⁶ ԼԲ, Էջ 80:

շինի» (ՄՄ 2018, 430բ), «կերպափոխականք են, որք զհետագայ բանն ընդ անցելոյն զանազանեն եւ են այսք՝ բայց, իսկ, այդ, սակայն, որգոն՝ դու բարունք գոհանաս, այդ ընկերն ոչ շինի» (BzAn 547, 34բ):

Կիտաստորատ - կետի տեսակներից, տրոհության նշան. «կետն բաժանի ի վերջակետ, միջնակետ, կիտաստորատ, ստորատ» (ՄՄ 12, 7բ), նույն կետն ստորակետ¹³⁷:

*Կոչօղի [անյայտ բան]*¹³⁸ (լատ. *vocantis oratio confusa*) – կոչական ձայնարկություն. «կոչօղի, որաքս՝ օ, ով, որք և պատասխանողի» (ՄՄ 2295, 84ա):

Կրկնաւ որ [անուկ] (լատ. *derivativum nomen*) - նույնն է՝ ածանցավոր անուն. «անուանց ոմն նախկնաւ որ, ոմն կրկնաւ որ... կրկնաւ որ է, որ յայլմէ է, որաքս՝ մարդկային, երկնային, երկրային, զի ի մարդոյ, ի յերկնէ և յերկրէ են» (ՄՄ 2286, 141բ):

Հաճախաւ որ [կրկնաւ որ բայ] (լատ. *frequentativum derivativum verbum*) – սաստկացուցիչ իմաստ արտահայտող ածանցավոր բայ. «բայից կրկնաւորաց այլ է սկսգբնաւոր և այլ է խորհրդաւոր, այլ յաճախաւոր և այլ պակասաւոր, որոց օրինակ ոչ ունիմ, զի ոչ գտի» (ՄՄ 2295, 70ա), նույնն է՝ սաստկական ածանցական բայ¹³⁹:

Համաժողովական [անուկ] - անվան տեսակ, հավաքական գոյական. «ոմն է համաժողովական, որգոն՝ տոհմ, պար, խումբ, ջոկ, երամ, զօրք, ժողովուրդ, ամբոխ» (ՄՄ 2284, 42ա), նույնական է թրակացու բաղձական անուկի հետ¹⁴⁰:

Համաձայն (լատ. *consonante*) - նույնն է՝ բաղաձայն. «զի ոչ յամենայն գրէ վանգլինի, բայց միայն ի ձայնաւորէ, որ զհնչումն ունի և ոչ ի համաձայնէ, որ ոչ ունի...» (ՄՄ 2295, 50ա):

Համամածեալ [անուկ] - անվան տեսակ, վերացական իմաստ արտահայտող գոյական. «ոմն է համամածեալ, որգոն՝ սուրբ» (ՄՄ 2284, 42ա):

¹³⁷ Հետագայում սակայն այս տրոհության նշանը այլ տերմիններով կիրառում է Խ. Աբովյանը՝ *կետընդ ստորակետի, կետ-ստորակետ*, տե՛ս ԼԲ, էջ 151:

¹³⁸ Հետագայում Մ. Չամչյանը գործածել է *կոչական միջարկություն* տերմինը, տե՛ս ԼԲ, էջ 156:

¹³⁹ ԼԲ, էջ 270:

¹⁴⁰ ԼԲ, էջ 44:

*Համեմատաւոր շաղկապ*¹⁴¹ (լատ. *comparativa coniunctio*) - համեմատության իմաստ արտահայտող շաղկապ. «համեմատաւոր շաղկապ է, որ ընդ նմանութեամբ զիրս պարզաբար կամ ընդ գործողութիւնս ի միասին առ յինքեանս միացուցանէ հաւասարելով կամ աւելցուցանելով, որգոն՝ որպէս Պետրոս է իմաստուն, այնպէս Պօղոս է անիմաստ, կամ Պետրոս է իմաստուն որպէս սուրբ, կամ այնքան իմաստուն է, որքան սուրբ, կամ առաւել իմաստուն է, քան զսուրբ, կամ առաւել իմաստուն է, քան զՊօղոս, են համեմատաւորքն՝ որպէս, այսպէս, այնպէս, առաւել քանզ, փոքր քանզ, այնքան, որքան, այնչափ, որչափ, յոյժքան» (ՄՄ 2295, 81ա):

Հասարակ դէմ - սահմանված չէ, կան միայն օրինակներ, նոյն, ինքն դերանունները հոլովելիս այս երկուսը կոչում է «դիմի հասարակ» (ՄՄ 2284, 9ա):

Հարկաւորք - խոսքի մասեր, որոնք կապակցվում են պարտադիր խնդրառությամբ. «հարկաւորք են, որք ի շարադրութեան առանց միմեանց անկարէ իմանալ զնոսա, որգոն՝ սիրեմ զքեզ, քանզի եթէ ոք ասիցէ սիրեմ, հարկ է զի կամ յառաջ ասացեալ իցէ հայցական հոլով ինչ կամ զկնի ասացէ» (BzAn 547, 48ա):

Հարցողի [անյայտ բան] (լատ. *interrogantis oratio confusa*) - հարցման ձայնարկություն. «հարցողի, որպէս՝ Է՞ր, ընդԷ՞ր, վասն Է՞ր» (ՄՄ 2295, 84ա):

*Հաւանական [շաղկապ]*¹⁴² - ստորադասական մակաբերական շաղկապ. «հաւանականք են, որք զկնի ճառելոյն ընդ եզրակացութեանն յարառոցին և են այսք՝ ուրեմն, ապա ուրեմն, ապաքէն, ապաքէն ցապաք, ապա, որգոն՝ ամենայն կենդանի գոյացութիւն է, ամենայն մարդ կենդանի է, ապա ուրեմն ամենայն մարդ գոյացութիւն է» (ՄՄ 2018, 430բ), «հաւանական կամ հաւաքադրականք են, որովք ի յառաջ ասացեալ պառճառաց իրք ժողովին, որք են այսք՝ ապա, ապաքէն, ուրեմն, ապա ուրեմն, ապաքէն ցապաք, հիկէն՝ ամենայն կենդանի գոյացութիւն է, ամենայն մարդ կենդանի է, ապա ուրեմն ամենայն մարդ գոյացութիւն է» (ՄՄ 2276, 175բ), «հաւանականք են, որք զկնի

¹⁴¹ Հետազայում Մ. Չամչյանն ունի *համեմատական շաղկապ* տերմինը, տե՛ս ԼԲ, էջ 167:

¹⁴² Հետազայում Բաղդասար Դպիրը գործածել է *հավանական միջարկություն*, իսկ Յ. Աճառյանը՝ *հավանական բայ* տերմինները, տե՛ս ԼԲ, էջ 172:

ճառելոյն ընդ եզրակացութեանն յարառոցին եւ եւնայսք՝ ուրեմն, ապա ուրեմն, ապաքէն, ապաքէն ցապաք, ապա, որգոն՝ ամենայն կենդանի գոյացութիւն է, ամենայն մարդ կենդանի է, ապա ուրեմն ամենայն մարդ գոյացութիւն է» (BzAn 547, 34ա), նույնանում է թարգմանչի տարակուսականք շաղկապների հետ¹⁴³:

Հպատական [գաղափար] - ենթարկման իմաստ արտահայտող ածանց. «գաղափարս այս եայ... երբեմն ասի հպատական ի տեսակի, որգոն՝ պաշտօնեայ» (ՄՄ 2284, 44բ):

Հրամայօղի [անյայտ բան] (լատ. *imperantis oratio confusa*) - հրաման արտահայտող ձայնարկութիւնն (ՄՄ 2295, 83բ):

Մեծութեան առբայ (լատ. *magnitudinis adverbium*) - չափութեանակի մակբայ. «այլք առբայք մեծութեան, հիբար՝ այնքան, որքան, այնչափ, որչափ, փոքր, փոքրագոյն, բազում, շատ, յոյժ, սակաւ, սակաւիկ մի, սակաւագոյն, առաւել, առաւելագոյն, աւել» (ՄՄ 2295, 78ա):

*Մօտական [առբայ]*¹⁴⁴ - տեղի մակբայ. «մօտականք՝ մերձ, հուպ, մօտ, յանդիման, հանդերձ» (BzAn 547, 30ա):

Յայտնական [բան] (լատ. *confusa oratio*) - նախադասութեան տեսակ, որի միտքը արտահայտված է լիիմաստ բառերով. «բանն երկու է՝ յայտնական և անյայտ, յայտնական է, որ պարզաբար զբառից բազմութեանց է ընդունող...» (ՄՄ 2286, 139ա), «բանն Բ. է... յայտնական բանն կատարեալ բան է, որ պարզաբար նշանակէ և բառիւք, զոր ինչ միտծանուցանել կամեսցի» (ՄՄ 2295, 52բ):

Յայտնողական [շաղկապ] - պատճառի և հիմունքի ստորադասական շաղկապ. «յայտնողական է, որ զանկատարութիւն բանին բացայայտելով կատարէ և է՝ զի, որգոն՝ կամիմ, զի արք կացցեն յաղօթս յամենայն տեղիս» (ՄՄ 2018, 430բ), «յայտնողական է, որզան կատարութիւն բանին բացայայտելով կատարէ եւ է՝ զի, որգոն՝ կամիմ, զի արք կացցեն յաղօթսն ամենայն տեղիս» (BzAn 547, 35բ):

Յոգնաբարդ - նույնն է՝ հարաբարդ, բարդ ածանցավոր. «ծելք երեք՝ պարզ, բարդ, յոգնաբարդ... յոգնաբարդ, որգոն՝ բարեպաշտասիրող» (ՄՄ 2284, 50ա):

¹⁴³ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 36:

¹⁴⁴ Լեզվաբանական բառարանում կա *մոտական հոլով* տերմինը վրացերեն, հունգարերեն և այլ լեզուների քերականական տերմինաբանութեան մեջ, տե՛ս ԼԲ, էջ 220:

Յոգնաստորոգական [առքայ] - միասնականության մակբայ . «Եւ յոգնաստորոգականացն՝ հանրական, համուռ, միահաղոյն, համանգամայն, բնաւ, ամենայն, առհասարակ, ամէն, բովանդակ, համակ, բնաւ ին, ամենևին, բոլորովին...» (BzAn 547, 31բ):

Յուսացողի [անյայտ բան] (լատ. *audentis oratio confusa*) - հոլյս արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 83բ):

Նախկնաւոր [անուկ] (լատ. *primitivum nomen*) - պարզ, արմատական անուն, նույնն է՝ թարգմանչի *Նախագաղափարը*. «անունաց ոմն նախկնաւոր, ոմն կրկնաւոր, նախկնաւոր է, որ ոչ յուկմեքէ է քերականաբար, որպէս՝ մարդ, երկին, երկիր» (ՄՄ 2286, 141բ):

Նախկնաւոր [փոխանուկ] (լատ. *primitivum pronomen*) - պարզ, արմատական դերանուն. «փոխանուկնց ոմանք նախկնաւորք են, որպէս՝ ես, դու, մեք, դուք, իւր, նա, այս, այդ, ինքն, այն, այլ » (ՄՄ 2295, 63ա):

Նանտրական [մակբայ] - ձևի մակբայ . «նանտրական՝ տարապարհակ, տարապարտուց, վայրաբար, վարկաբարզի, ընդունայն, ընդվայր, իննանիր» (ՄՄ 2284, 15բ), նույնական է Բաղդասար Դպիրի *իզուրական*¹⁴⁵ և Մ. Տեր-Յարությունյանի *Նանտրական*¹⁴⁶ մակբայ ների հետ:

Ներկայական հոլով - նույն *Ներգոյական հոլովը*. «ամենայն բայք, որ նշանակեն զդրութիւն կամ դադարումն ի տեղւոջ կամ կալումն կամ կայութիւն զներկայական հոլով առնուն, որպէս՝ Պետրոս է ի տան, Աստուած ի տաճարի իւրում յայտնի...» (ՄՄ 2276, 188բ):

*Նշանակ*¹⁴⁷ - առգանություն տեսակ, որի մեջ են մտնում թավ, մակակետ, ենթամնա տրոհության նշանները. «առգանութենէ... և բաժանի յերիս՝ յոլորակս, յամանակս, ի նշանակս... իսկ նշանակք երեք՝ թաւ, մակակետ և ենթամնայ...» (ՄՄ 2274, 73բ):

**[Նուստացուցանող առքայ]*¹⁴⁸ (լատ. *remissivum adverbium*) - ձևի մակբայ . «որպիսութեան առքայք ի գործին կողմանէն զգործին մայլութիւն կամ այլայլութիւն նշանակեն... ոմանք

¹⁴⁵ ԼԲ, Էջ 117:

¹⁴⁶ ԼԲ, Էջ 228:

¹⁴⁷ Կա նաև տվյալ տերմինի հետագա գործածությունն այլ իմաստով՝ *իմաստույթ*, տե՛ս ԼԲ, Էջ 235:

¹⁴⁸ *Նուստացուցանող առքայ* տերմինը այս ձևով չի վկայված ձեռագրում, բայց բացատրությունից ելնելով՝ ենթադրում ենք, որ կարող էր ունենալ այս անվանումը (հմմտ. նաև *աճեցուցանող առքայ*):

նու աստացու ցան են զգործողութիւնն, հի հան՝ կամաց-կամաց, փոքր, սակաւ, սակաւ իկ մի, սուղ» (ՄՄ 2295, 79ա):

Շաղկապաւ որ բան - բարդ նախադասութեան տեսակ, որի բաղադրիչները կապակցվում են շաղկապով (BzAn 547, 72ա):

Շարամանական [շաղկապ] - բուն միավորիչ հարաբերությունն արտահայտող համադասական շաղկապ. «շարամանական է, որ ոչ միայն զբառսն, այլ և զիրսն և զիրակութիւնն ընդ միադարեւ (այսպէս), որ է՝ և, որգոն՝ ես և դու գնացուք» (ՄՄ 2018, 430բ), «շարամանական է, որ ոչ միայն զբառսն, այլ և զիրսն և զիրակութիւնն ընդ միառարեւ, որ է՝ և, որգոն՝ ես և դու գնացուք» (BzAn 547, 33բ):

Շարամանելի իք - անուն խոսքի մասին կամ բային կցվող նախդիր. «շարամանելի ք են, որք միշտ են բաղադրեցեալք նարտադրութեան, ընդ անուն կամ ընդ բայի, որախիք են այսոքիկ՝ ան, տը, ըն, ապ, արտ, տրամ, որգոն՝ անարգեմ, անարգութիւն, տկարանամ, տկարութիւն, ընծեմեմ, ընծեմութիւն, ապաշնորհեմ, ապաշնորհ, տրամադրեմ, տրամադրութիւն...» (ՄՄ 2284, 50բ):

Շարունական [առքայ] - կարգային իմաստ արտահայտող մակբայ. «եւ ի դասականացն շարունականք՝ նախ, վաղ, յառաջ, յառաջոյ, զհետ, զկնի, ի միասին, միըստմիոջէ, այսուհետև» (BzAn 547, 30ա):

Շրջադրական [հոլով] - նույն բակառական հոլովը. «բակառականն՝ շրջադրական» (ՄՄ 2276, 149ա):

Որական [բան] - շաղկապով կապված երկրորդական նախադասություն. «յորական է առ որական, որգան՝ որ հաւատայ ինծ և առնէ զբանս իմ» (BzAn 547, 82ա):

Որոշական [անուկ] - անվան տեսակ, նյութական նշանակությամբ գոյական. «ոմն է որոշական, որգոն՝ մարդ, քար, կենդանի» (ՄՄ 2284, 42ա):

Որոշաւ որ [շաղկապ] (լատ. *exceptiva coniunctio*) - պայմանական-ներհակական համադասական շաղկապ. «որոշաւ որ է, որ յասացելոյ զիր ինչ որոշելով զորոշեցեալն ընդ նմին, յորմէ որոշեցաւ, միաւորէ, որպէս՝ ամենայն մարդ է սուտ, եթէ ոչ Յիսուս Քրիստոս, են որոշաւ որքն՝ եթէ ոչ, բայց ոչ, այլ ոչ, բայց միայն» (ՄՄ 2295, 82ա):

*Որոշեալ բայ*¹⁴⁹ - բայի տեսակ, *դիմավոր բայ* (ՄՄ 5619, 5բ):

*Որոշեալ մականուն*¹⁵⁰ - պարզ մականվան տեսակ, որոշյալ առումով փոխանվանական գործածությամբ ածական, հավանաբար նկատի ունի սպիտակը տիպի կազմությամբ ունեները (ՄՄ 5619, 5բ):

Չորեքկնաբարդ - քառաբաղադրիչ հարաբարդ անուն. «չորեքկնաբարդ, որգոն՝ բարեպաշտասիրապահածին» (ՄՄ 2284, 43ա):

Պակասաւոր [կրկնաւոր բայ] (լատ. *diminutivum derivativum verbum*) – ոչ լիովին որևէ բան անելու գաղափար արտահայտող ածանցավոր բայ. «բայից կրկնաւորաց այլ է սկսգբնաւոր և այլ է խորհրդաւոր, այլ յաճախաւոր և այլ պակասաւոր, որոց օրինակ ոչ ունիմ, զի ոչ գտի» (ՄՄ 2295, 70ա), նույնն է՝ *փաղաքշակ ան ածանցակ ան բայ*¹⁵¹:

Պատահական [ածական] (լատ. *accidentale adiectivum*) - իրադրական հատկանիշ նշող ածական. «բայց ածական կրկին է... ոմն պատահական ձայնիւ և իրաւք, որաբն՝ քանակական, երկայնական, կարճական, որակական, ժամանակական և այլք, որք ըստ անուանցն և նշանակութեանցն պատահումն են» (ՄՄ 2286, 140բ):

Պատահական բայ - բայի տեսակ, բացի էական (գոյություն ունենալու իմաստ արտահայտող) և կոչական (ասացական) բայերից մյուս բոլոր բայերը. «եւ է բայ եռակի՝ էական, կոչական և պատահական... էականք են այսք..., եւ կոչական այսոքիկ..., իսկ այլքն ամենայնք պատահականք են» (ՄՄ 2276, 154բ):

Պատասխանողի [անյայտ բան] (լատ. *respondentis oratio confusa*) - տե՛ս *կոչողի անյայտ բան*:

Պատկական [առբայ] - ձևի մակբայ. «պատկական՝ եւս, դարձեալ, վերստին, միւսանգամ եւ ևս» (BzAn 547, 32ա):

Պատկանական [գաղափար] - պատկանելությունն ցույց տվող ածանց. «գաղափարս այս այիկն երբեմն ասի պատկանականի տեսակի, մինչ նշանակէ զիր ինչ, որ առ այլ իմն պատշաճի, որգոն՝ աստուածային հուր, մարդկային միտ..., գաղափարք այսոքիկ եան և

¹⁴⁹ Հետագայում տերմինը ձեռք է բերել այլ իմաստներ ևս՝ *որոշյալ առում, որոշյալ դերանուն, որոշյալ դիմավոր նախադասություն, որոշյալ եղանակ, որոշյալ կերպ, որոշյալ հոդ* և այլն, տե՛ս ԼԲ, էջ 248:

¹⁵⁰ Հետագայում տերմինը ձեռք է բերել այլ իմաստներ ևս՝ *որոշյալ առում, որոշյալ դերանուն, որոշյալ դիմավոր նախադասություն, որոշյալ եղանակ, որոշյալ կերպ, որոշյալ հոդ* և այլն, տե՛ս ԼԲ, էջ 248:

¹⁵¹ ԼԲ, էջ 303:

կան... երբեմն ասի պատկանական ի տեսակի, որգոն՝ քահանայական զգեստ, արշակունեան զօր, ղևեան բանակ» (ՄՄ 2284, 44ա):

Պատկանական [դերանուն] - նույնն է՝ *ստացական դերանուն*. «ոմանք են ստացականք կամ պատկանականք, որք են այսոքիկ՝ իմ, քո, նորա, որոյն, իւր, մեր, ձեր, որգոն՝ հայր իմ, զգեստ քո...» (ՄՄ 2284, 46ա):

*Պարզ մականուն*¹⁵² - պարզ կազմութեամբ հատկանիշ ցույց տվող բառ՝ ածական (ՄՄ 5619, 5բ):

Սկզբնաւոր կրկնաւոր բայ (լատ. *inchoativum derivativum verbum*) – գործողութեանը սկսելու գաղափար արտահայտող ածանցավոր բայ. «բայից կրկնաւորաց այլ է սկզբնաւոր և այլ է խորհրդաւոր, այլ յաճախաւոր և այլ պակասաւոր, որոց օրինակ ոչ ունիմ, զի ոչ գտի» (ՄՄ 2295, 70ա), նույնն է՝ *սկսական ածանցական բայ*, որը վերջանում է ուղանեմ-ով¹⁵³:

Ստորասողի [անյայտբան] (լատ. *asserentis oratio confusa*) - ցուցական ձայնարկութեան. «ստորասողի, որպէս՝ այսպէս, այնպէս» (ՄՄ 2295, 83բ):

Ստորոգական [բան] - անդեմ նախադասութեան. «ստորոգական, հիկէն՝ սպիտակ մարդ, Ստեփաննոս այր լիշնորհօք, եւ ստորոգական ասի և անամանակ, քանզի սպիտակն զմարդոյն ստորոգի, թարց ամանակաւոր բայի...» (BzAn 547, 64ա):

Վաղվաղական [առբայ] - ձևի մակբայ. «վաղվաղական՝ վաղվաղակի, վաղվաղ, փուլթանակի, փոյթ ընդ փոյթ, փուլթով, շոյտ, շուտով, արագ, արագ-արագ, հապա, ճեպով, ստիպով...» (ՄՄ 2276, 172բ):

Վարկական [առբայ] - ձևի մակբայ. «վարկական՝ գրեթէ, համարեա թէ» (BzAn 547, 32բ):

Տաժ [փաղառութիւն] - վանկի տեսակ, սահմանված է. «հարցումն. Ի քանի՞ սբաժանի փաղառութիւն: Պատասխան. Յերկէկս՝ յիսկական և ի տաժ» (ՄՄ 2366, 14ա):

¹⁵² Հետագայում տերմինը այլ իմաստներ է ձեռք բերել՝ *պարզ արմատ, պարզ բաղաձայն, պարզ բայ, պարզ բան, պարզ բառ, պարզ ժամանակ, պարզ կերպ, պարզ նախադասութեան, պարզ հոլով, պարզ ձայնաւոր, պարզ մակդիր* և այլն, տե՛ս ԼԲ, էջ 259:

¹⁵³ ԼԲ, էջ 275:

Տաղաւ արական [շաղկապ] (լատ. *localis coniunctio*) - տեղի իմաստ արտահայտող շաղկապ. «տաղաւ արական է, որ զգործողութիւնս կամ զիրս որպէս ի մի տեղ միացեալ սն նշանակէ, որգոն՝ ուր գտանիցեմ զքեզ, անտև դատիցեմ, են տաղաւ արականքն՝ ուր, ուստի, յ ուր, մինչ ուր և այլք, որք միացուցանել կարօղ են» (ՄՄ 2295, 82ա):

Տաղաւ որական առբայ (լատ. *locale adverbium*) - տեղի մակբայ. «այլք առբայք տաղաւ որականք, որք զգործի տեղւոջ նշանակեն, որպէս՝ ուր, աստ, անդ, ներս, արտաքս, ուր ուրեք, ոչ ուստէք, ոչ ուրուք և այլն» (ՄՄ 2295, 77բ), նույնական են Քռնեցու տեղական մակբայ ների հետ¹⁵⁴:

Տարաշարամանելիք - հոլովված խոսքի մաս պահանջող նախդիր, «տարաշարամանելիք են, որք միշտ են զարտադրեցեալք նարտադրութեան և խնդրեն զհոլով իմն անուան, որպիսիք են՝ առաջի, ընդդէմ, քան, ընդ, հանդերձ, շուրջ, որգոն՝ առաջի Մովսէսի, ընդդէմ Մովսէսի, քան զՄովսէս, ընդ յաջմէ Մովսէսի, հանդերձ Մովսէսիւ, շուրջ զՄովսէսիւ» (ՄՄ 2284, 51ա):

Տարորոշական [առբայ] - անջատման մակբայ. «եւ տարորոշականք՝ բաց, զատ, առանձին, ևեթ» (BzAn 547, 30ա):

Տարր - նույնն է՝ վանկ. «յաղագս վանգի կամ փաղառութեան, որ և տարր ասի» (ՄՄ 12, 7ա):

Տեղաւ որ [շաղկապ] (լատ. *localis coniunctio*) - տե՛ս *տաղաւ արական շաղկապ*:

Տոհմական [դերանուն] - ստացական դերանուն. «ոմանք են տոհմականք, որք են այսոքիկ՝ իմային, ինքնային, նոյնային, ոյրային, մերային, ձերային, իւրեանցային, որգոն՝ մերային քատակեալ, ոչ են աստիմայինք, այսինքն՝ ազգականք...» (ՄՄ 2284, 46ա):

Տրամադրական [բայ] - բուն գործողությունն ցույց տվող բայ. «տրամադրականք են, որք զիրականութիւն իրին ցուցանեն և ոչ զեն, որբար՝ սիրեմ, սիրես, սիրե» (BzAn 547, 13ա):

Ցանկանալ ոյ [առբայ] (լատ. *optandi adverbium*) – ցանկությունն արտահայտող մակբայ. «ցանկանալ ոյ են՝ օ, օշթէ, օթէ» (ՄՄ 2295, 78բ):

Ցանկացողի [անյայտ բան] (լատ. *desiderantis oratio confusa*) – ցանկությունն արտահայտող ձայնարկություն. «ցանկացողի, որպէս՝ օթէ» (ՄՄ 2295, 84ա):

¹⁵⁴ Յովհաննէս Քռնեցի, նշվ. աշխ., էջ 182:

Ցաւ ոտաւ որի [անյայտ բան] (լատ. *dolentis oratio confusa*) – ցավ արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 84ա):

Ցուցանողի [անյայտ բան] (լատ. *demonstrantis oratio confusa*) – ցուցականություն արտահայտող ձայնարկություն. «ցուցանողի, որպէս՝ ահա, ահալասիկ» (ՄՄ 2295, 84ա):

Ուրախացողի [անյայտ բան] (լատ. *gaudentis oratio confusa*) – ուրախություն, հրճվանք արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 84ա):

Փաստադրական [շաղկապ] - պատճառի և հիմունքի ստորադասական շաղկապ. «փաստադրականք են, որովք պատճառք իրաց առադրին, որք են այսք՝ զի, քանզի, վասն զի, հիբար՝ եթէ աւետարանեմ, ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկի վերայ կայ» (ՄՄ 2276, 175բ), նույնն է՝ թարգմանչի տարբադմատ շաղկապը¹⁵⁵:

Փոփոխական [բայ] - կրկնասեռ, ներգործական և կրավորական սեռի բայերը. «փոփոխականք են, որք առանց հոլովմանց յարադրելոյ զիմացումն կատարեալ ոչ նշանակեն, հիզան՝ սիրեմ, խնդրեմ, ողորմիմ և այլք» (ՄՄ 2276, 155ա):

Փոքրավանգ - սակավական կբառ կամ արմատ (ՄՄ 2279, 101բ):

Օթական [գաղափար] - տեղցույց տվող ածանց. «գաղափարս այս այիլն... երբեմն ասի տեղականի կամ օթականի տեսակի, մինչ նշանակե զիրինչ, որի տեղւոջ իմիք յատկապէս բնակի կամ զետեղի, որգոն՝ երկնային գօրն, երկնային աստեղք, երկրային ստեղծուածք, ծովայինք լողակք, օդայինք թռչունք..., գաղափարք այսոքիկ ստան, արան երբեմն ասին օթականի կամ տեղականի տեսակի, որգոն՝ Յայաստան, Ֆռանկստան, կուսարան, ժողովարան...» (ՄՄ 2284, 44ա):

2. ՀԱՅՏՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՂ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ենթախմբում բերվում են այն տերմինները, որոնք բերականագիտության մեջ արդեն այս կամ այն բերականի կողմից գործածված են, սակայն քննության նյութ ձեռագրերը ժամանակային առումով նախորդում են տվյալ բերականների

¹⁵⁵ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 36:

աշխատություններին և, բնականաբար, տերմիններն էլ դառնում են վաղ կիրառություններ¹⁵⁶:

Ածական [փոխանուն] (լատ. *adiectivum pronomen*) - ածականի հետ ձևափոխատային, կիրառական առնչակցություն ունեցող դերանուն. «ածական ասի, զի ոչ անձն ուղղաբար որպես ինքեամբ գոլով, այլ որպես առյայլս ածեալ նշանակէ, զի ասեմք անձն իմ, այսինքն՝ որպես գոլն իմ...» (ՄՄ 2286, 146բ), ձեռագրում վաղ կիրառությունն է, վկայված է Ռսկան Երևանցու քերականության մեջ¹⁵⁷:

Անդեմ [բայ] (լատ. *impersonale verbum*) - բայ, որի դեմքը հստակորեն արտահայտված չէ. «բայից ոմն դիմաւոր, ոմն անդեմ... անդեմն զերրորդն միայն ունի, որպես՝ հրամայիւր, բժշկիւր» (ՄՄ 2286, 150բ), ձեռագրում առկա տերմինը վաղ կիրառությունն է, ավելի ուշ գործածել է Ռսկան Երևանցին իր քերականության մեջ¹⁵⁸:

Անդրադարձական դերանուն - ստացական դերանուն. «յաղագս անդրադարձական դերանուանց, որք են՝ իւր և իւրեան, քանզի անդրադարձականք ասացեալ են, զի անդրադառնան առնոյն երրորդ դեմն, որյառաջեաց, որզան՝ ամենայն ծառայ հնազանդ լիցի իւր տեառն, իւրն անդրադառնայ առ ծառայն..., անդրադարձական դերանուանք միշտ երրորդ դիմին շարադասին, իսկ ընդ առաջնոյն և ընդ երկրորդին ոչ երբեք...» (ՄՄ 2276, 182ա), այս դերանունը ձեռագրում վաղ կիրառությունն է, քանի որ հետագայում այն գործածել է Թ. Աստվածատրյանը, իսկ *անդրադարձ դերանուն* տարբերակով էլ՝ Խ. Աբովյանը¹⁵⁹:

Անեզական [գոյական] - եզակի թիվ չունեցող գոյական. «փառք, զօրք, աչք, մեղք և այլ՝ անեզական...» (ՄՄ 2279, 101բ), տերմինը վաղ կիրառությունն է, հետագայում գործածել է Բաղդասար Դպիրը¹⁶⁰:

¹⁵⁶ Չերծմնալու համար ամեն անգամ քերականների ապրած դարաշրջանները նշելու կրկնությունից՝ հավելվածների բաժնում բերում ենք աշխատության մեջ հիշատակվող քերականների ապրած դարաշրջանների աղյուսակ, իսկ աշխատության մեջ միայն տվյալ քերականի անունն ենք հիշատակում: Նույն կերպ ենք վարվում նաև ձեռագրերի թվագրման դեպքում՝ միայն թվահամարը տալով, քանի որ ձեռագրերի մասին էլ մանրամասն խոսում ենք առաջին գլխում:

¹⁵⁷ ԼԲ, էջ 4:

¹⁵⁸ ԼԲ, էջ 12: Հետագայում կան նաև *անդեմ դերանուն*, *անդեմ խոսք*, *անդեմ ձև*, *անդեմ նախադասություն* տերմինները, իսկ Վ. Չալըխյանն ունի *անդեմ եղանակ*, *անդեմ բայ անուն* տերմինները, տե՛ս նույն տեղում:

¹⁵⁹ ԼԲ, էջ 12 և 13:

¹⁶⁰ ԼԲ, էջ 13:

Անկ (լատ. *casus*) - նույնն է՝ հոլով. «անկ է անուան հոլովումն ի նոյն թիւ, որգոն՝ մարդ-մարդոյ» (ՄՄ 2286, 143բ), տերմինը վաղ կիրառությունն է, քանի որ ըստ բառարանային վկայության այն առաջինը գործածել է Ռսկան Երևանցին¹⁶¹:

Անհոլովական [մասունք բանի] (լատ. *indeclinabiles partes orationis*) - չթեքվող խոսքի մասեր. «բանի մասանցն ոմանք են հոլովականք... ոմանք անհոլովականք, որպէս՝ նախդիր, առբայ և շաղկապ» (ՄՄ 2286, 139բ), սա հետագայում Ռսկան Երևանցու քերականության մեջ գործածված՝ նույնիմաստ *անհոլով մասունք բանի* տերմինի ավելի վաղ՝ տարբերակային կիրառությունն է¹⁶²:

Անուանաւ որ [անկ] (լատ. *casus nominativus*) - ուղղական հոլով. «յանկից ոմն ուղիղ, որ անուանաւոր կոչի, քանզի ամենայն իրի առաջին անուանումն ուղղապէս ի նալինի... անուանաւոր անկ ասի, ոչ քանզի յումեքէ անկնի, բայց քանզի ի վերջին ընկնումն էութեան զայլ ունի, քան զայլք» (ՄՄ 2286, 143բ), վկայված է Ռսկան Երևանցու աշխատության մեջ¹⁶³. վկայության համեմատ տերմինը դառնում է ավելի վաղ կիրառություն:

Առբայ (լատ. *adverbium*) - մակբայ. «առբայ զշրջակայութիւնս և զառինչս գործողութեանցն նշանակէ և առաւել զորպիսութիւնս և զքանակութիւնս, զժամանակութիւնս, զտաղաւարութիւնս և զայլս բազումս ստորագականս» (ՄՄ 2286, 156բ), տերմինը վաղ կիրառությունն է, ավելի ուշ վկայված է Ռսկան Երևանցու քերականության մեջ¹⁶⁴:

Առինչ պատահման [փոխանուն] (լատ. *accidentis relativum pronomen*) – քանակական հատկանիշ ցույց տվող «առնչական» դերանուն. «առինչ պատահման է, որ զիր ոմն առբերէ, որ է էութեան պատահմամբք անձնացելոյն... պատահման առինչք շատ են... ի հայերէն չորս միայն գտի, այսինքն՝ որպէս, որչափ, որքան և քանի-քանի...» (ՄՄ 2286, 148ա), տերմինը վաղ կիրառությունն է, հետագայում իր քերականության մեջ գործածել է Ռսկան Երևանցին¹⁶⁵:

¹⁶¹ ԼԲ, էջ 14:

¹⁶² ԼԲ, էջ 15:

¹⁶³ ԼԲ, էջ 21:

¹⁶⁴ ԼԲ, էջ 28:

¹⁶⁵ Ռսկան Երևանցի, Քերականութեան գիրք համառօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութեան ի տառս մատենից և ի գիտութիւնս

Առնչական [փոխանուկ] (լատ. *relativa pronomen*) - ցուցական դերանուն. «իսկ ի սոցա ասացելոցն ոմանք են առնչականք, զի յառաջասացեալ զիրն ցոյց տան, հիբար՝ նա, այս, այդ, այն, նոյն, սոյն, դոյն, որ» (ՄՄ 2286, 147բ), տերմինը վաղ կիրառությունն է, ավելի ուշ գործածել է Ռսկան Երևանցին¹⁶⁶:

Արտագործական բայ (լատ. *operativum sive actificum verbum*) - ներգործական սեռի բայ. «եւ եթէ հոսմունս այս առայլ անցանէ, բայ արտագործական լինի, որգոն՝ ցրտացուցանեմ, այրեմ, կոտորեմ և այլն» (ՄՄ 2286, 150ա), տերմինը վաղ կիրառությունն է, ավելի ուշ հայտնի էր Ռսկան Երևանցու քերականության վկայությամբ¹⁶⁷:

Գոյական փոխանուկ (լատ. *substantivum pronomen*) - գոյականին հարաբերակից դերանուն, անձնական դերանուն. «փոխանուկ գոյական ասի, զի զարտակայութիւն կամ զանձն որպէս ինքեամբ գոլով ուղղապէս նշանակէ, որպէս՝ ես, դու և այլն» (ՄՄ 2286, 146բ), «փոխանուկնց ոմն գոյական, որպէս՝ ես, դու, մեք, դուք, իւր, այս, այդ, այն... ասի փոխանուկ գոյական, որ նշանակէ զարտակայութիւն կամ զանձն իբրև ըստինքեան և ինքեամբ գոլով, որպէս՝ ես, դու և այլն» (ՄՄ 2295, 62ա), տերմինի վաղ կիրառությունն է ձեռագրում, հետագայում Խ. Աբովյանը գործածել է *դերանուկ գոյական*, իսկ Մ. Սալլանյանը *գոյական դերանուկ* տերմինները¹⁶⁸:

Գործիական [հոլով] (լատ. *casus actiuus*) - գործիական հոլով. «գործիական ասացաք, զի զգործիք, որով գործեմք ի նա դնեմք, որգոն՝ գրչով գրեմ» (ՄՄ 2286, 144ա), այս տերմինը գործածել է Կղեմես Գալանոսը¹⁶⁹, նրա քերականության մեջ գործածածի համեմատ ձեռագրում առկա տերմինը վաղ կիրառությունն է:

Դիմաւոր բայ - դիմային նշանակությամբ բայ. «բայից ոմն դիմաւոր... բայ դիմաւոր զերեք անձինս ունի՝ զառաջինն, զերկրորդն, զերրորդն՝ փոխանուկնցն ծառայիչս, որգոն՝ ես սիրեմ,

մասանց բանի ըստ քերթութեան արհեստի, տպ. Սբ. Էջմիածնի և սբ. Սարգսի, Ամստերդամ, 1666, էջ 17:

¹⁶⁶ ԼԲ, էջ 28: Հետագայում կա առնչական բայ տերմինը Մ. Բժշկյանի կողմից գործածված, տե՛ս նույն տեղում:

¹⁶⁷ ԼԲ, էջ 38: Հետագայում Ռսկան Երևանցին գործածել է նաև *արտագործական ձայն*, *արտագործական սեռ* տերմինները, տե՛ս նույն տեղում:

¹⁶⁸ ԼԲ, էջ 82:

¹⁶⁹ ԼԲ, էջ 76:

դու սիրես, նասիրէ» (ՄՄ 2286, 150բ), վաղ կիրառությունն է, վկայված է եղել Ոսկան Երևանցու քերականությունից¹⁷⁰:

Եզական [փոխանուն] (լատ. *particulare pronomen*) - անորոշ դերանուն. «եզական է, որ զանձինս ոմանս միայն, որգոն՝ ոմն մարդ, ոմանք մարդիկք, այլ մարդ» (ՄՄ 2286, 146բ), վաղ կիրառությունն է, հետագայում տերմինը վկայված է եղել Ոսկան Երևանցու քերականության մեջ¹⁷¹:

Ենթակայ ական բայ - նույնն է՝ օժանդակ բայ. «եմ, գոմ, լինիմ, եղանիմ» (ՄՄ 2284, 11ա), ձեռագրում գործածված տերմինը վաղ կիրառությունն է, հետագայում այն գործածել է եղել Մ. Աբեղյանը¹⁷²:

Չարմացական [նշան] - առգանության ոլորակ խմբի նշան, բացականչական նշան. «զարմացական, որ և երկար ասի» (ՄՄ 12, 7բ), *զարմացական կետ* տերմինը գործածել է Խ. Աբովյանը, նրա գործածածի համեմատ ձեռագրինը ավելի վաղ կիրառությունն է¹⁷³:

Էական բայ (լատ. *existentiale verbum*) - գոյություն ունենալու իմաստ արտահայտող բայ. «բայ էական կամ գոյական լինի, որգոն՝ մարդ է բանական, այժմ է եռթեանն հոսումն յոյժ նուրբ նշանակե...» (ՄՄ 2286, 150ա), «էականք ասին այնք, որք զեռթիւն իրին ցուցանեն, որգոն՝ ես եմ, դու ես, նա է, էի, էիր, էր, եղեց, եղիցիս, եղիցի» (BzAn 547, 13ա), այս տերմինը ձեռագրում վաղ կիրառությունն է, քանի որ դրա առաջին վկայությունը հայտնի էր Ոսկան Երևանցու քերականության մեջ¹⁷⁴:

Կայ ական բայ - լինելության ընդհանուր իմաստ արտահայտող բայ. «եռթեանն հոսումն զեռթիւնն առ ի տեղի, յենթակայ ոչ, ի ժամանակի արտաբերելով նշանակե, զեռթիւնն առ ի կայութիւն քարշելով թանձրացուցանե և յայնժամ բայ կայական լինի, որպէս ասելով՝ մարդ ի տնանէ, գոյն ի մարմին, օր ի ժամանակի» (ՄՄ 2286,

¹⁷⁰ ԼԲ, Էջ 84:

¹⁷¹ ԼԲ, Էջ 87:

¹⁷² ԼԲ, Էջ 89:

¹⁷³ ԼԲ, Էջ 97:

¹⁷⁴ ԼԲ, Էջ 100:

150ա), տերմինը վաղ կիրառությունն է՝ վկայված է Ռսկան Երևանցու աշխատության մեջ¹⁷⁵:

Կրկնաբարդ - կրկնաբարդադրիչ հարաբարդ անուն. «կրկնաբարդ, որգոն՝ բարեպաշտասեր» (ՄՄ 2284, 43ա), նույն իմաստով գործածությունը վկայված է Բաղդասար Դպիր քերականությունից¹⁷⁶, տերմինի ձեռագրային գործածությունը ավելի վաղ է:

Կրկնածական [անուն] - կրկնակի ածանցված անուն. «կրկնածականացն գաղափարք են վեց՝ որ, ուն, որդ, կից, ունի, ութիւն, հիբար՝ փառաւոր, իմաստուն, առաջնորդ, ընկերակից, տերունի, սրբութիւն... եւ կրկնածականք ասին, զի ածանցեալքս ևս կարեն ածանցիլ, որպակ՝ փառաւորական, իմաստնական, առաջնորդական, ընկերակցական, տերունական, սրբութեանական» (BzAn 547, 7ա), ձեռագրում գործածված տերմինը Մխիթար Սեբաստացու քերականության *կրկնածանցական անուն* տերմինի վաղ կիրառությունն է¹⁷⁷:

Կրողական [բայ] (լատ. *passivum verbum*) - կրավորական սեռի բայ. «եւ ի սմայիւր ենթակայոջն կրումն լինի, զոր բայ կրողական նշանակէ, որպէս՝ այրիմ, բժշկիմ, ցրտանամ, իմաստնանամ» (ՄՄ 2286, 150ա), ձեռագրում տերմինը վաղ կիրառությունն է, մինչ սա վկայված է եղել Ռսկան Երևանցու քերականության մեջ¹⁷⁸:

Հաստատական [շաղկապ] - տե՛ս *կատարել ական շաղկապ*, ձեռագրում գործածված տերմինը Բաղդասար Դպիրի քերականության մեջ գործածված նույն տերմինի վաղ կիրառությունն է¹⁷⁹:

Հարցական [նշան] - առոգանության ոլորակ տեսակի նշան. «պարոյկ, որ և հարցական ասի» (ՄՄ 12, 7բ), *հարցական կետ* կամ *հարցական նշան* տարբերակով վկայված է Գ. Ավետիքյանի աշխատության մեջ, որի համեմատ ձեռագրում գործածված տերմինը վաղ կիրառությունն է¹⁸⁰:

¹⁷⁵ ԼԲ, էջ 145:

¹⁷⁶ ԼԲ, էջ 158:

¹⁷⁷ ԼԲ, էջ 158:

¹⁷⁸ ԼԲ, էջ 160: Հետագայում Կղեմես Գալանոսն ունի *կրողական հոլով* տերմինը, տե՛ս նույն տեղում:

¹⁷⁹ ԼԲ, էջ 172:

¹⁸⁰ ԼԲ, էջ 178:

Մակակետ - առոգանություն նշան. «մակակետն դնի ի վերայ նախդիր (*այ սպես*), Ե նոցաորոգուն՝ ի առնեն...» (ՄՄ 2274, 73բ), ձեռագրում ավելի վաղ կիրառությունն է, քանի որ ավելի ուշ իր քերականության մեջ գործածել է Կղեմես Գալանոսը¹⁸¹:

Փառենթագիս - առոգանության կիրք տեսակի նշան, բացահայտության նշան. «կիրք են Բ.՝ ենթամնայ, փառենթագիս» (ՄՄ 12, 8ա), այ ժմյան փակագիծ, *փարենթագիս*, *փարիթագիս* տառադարձության մեջ վկայվում է Մ. Սեբաստացու քերականության մեջ¹⁸², որի համեմատ ձեռագրի տերմինը ավելի վաղ կիրառությունն է:

3. ՀԱՅՏՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՅԼ ԻՄԱՏՆԵՐՈՎ ԿԻՐԱՌՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվական միավորների իմաստի փոփոխությունը պատմական երևույթ է, որը հայերենի զարգացման ընթացքում տարբեր դրսևորումներ ունի: Լեզվաբանական տերմինների առավել բնորոշ է բառիմաստի նորացումը կամ վերափոխատավորումը, երբ նախկին իմաստների փոխարեն տերմինը ձեռք է բերում նոր իմաստներ: Ընդ որում նորի ձեռքբերումը չի ուղեկցվում հնի վերացմամբ: Լեզվաբանական տերմինների դեպքում նոր իմաստների ձեռքբերումը պայմանավորված է տարբեր քերականների կողմից դրանց գործածումով:

*Անորիշ մականուն*¹⁸³ - բաղադրյալ ածականի տեսակ, սահմանում չունի, օրինակներ չկան (ՄՄ 5619, 5բ), այս տերմինը ձեռագրում այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ թարգմանիչը գործածել է *անորիշ բայ*, *անորիշ անուն* տերմինները¹⁸⁴:

Աշխատական [առբայ] - զարմանք ցույց տվող մակբայ. «աշխատական՝ յ էք, ջ էք» (ՄՄ 2276, 174ա), «աշխատական՝ յ էք, ջ էք» (BzAn 547, 31բ), նույնն է թարգմանչի բաբասական մակբայների հետ¹⁸⁵, այս տերմինը այլ իմաստով է գործածված, քանի որ Կղեմես Գալանոսն

¹⁸¹ ԼԲ, Էջ 207:

¹⁸² ԼԲ, Էջ 303:

¹⁸³ Հետագայում այս տերմինը այլ իմաստներ ևս ձեռք է բերել՝ Արսեն Բագրատունին գործածել է *անորիշ դերբայ*, *անորիշ հայ ցական*, տե՛ս ԼԲ, Էջ 18:

¹⁸⁴ ԼԲ, Էջ 18:

¹⁸⁵ Ն. Ադոնց, նշվ. աշխ., Էջ 33:

արդեն գործածել է տերմինն ուրիշ իմաստով՝ *աշխատական միջարկություն*¹⁸⁶:

Առադրական [անուն] - անվան տեսակ, նույնն է՝ պատահական անուն, ածական. «սապատահական անունս առադրական կոչի» (ՄՄ 2276, 144ա), Ոսկան Երևանցին օգտագործել է *առադրական շաղկապ*, տերմինը ձեռագրում այլ իմաստով է գործածված¹⁸⁷:

Բացասական [անուն] - անվան տեսակ, ժխտված ածական. «ոմն է բացասական, որգոն՝ ո՛չ արդար, ո՛չ ջերմ» (ՄՄ 2284, 42ա), տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ մինչ այս կար Կղեմես Գալանոսի կողմից վկայված *բացասական մակբայ* տերմինը¹⁸⁸:

Եզական [անուն] (*particulare nomen*) - նույնն է՝ հատուկ անուն. «անուն յատուկ է, որ զմի նշանակե, որպես՝ Յոնովմ, Պետրոս և վասն այսորիկ եզական և անձնական կոչի...» (ՄՄ 2295, 55բ), տերմինը այլ իմաստով է արտահայտված ձեռագրում, քանի որ այլ ուր կա *եզական թիվ* իմաստով¹⁸⁹:

Եզական [փոխանուն] (լատ. *particulare pronomen*) - անորոշ դերանուն. «եզական է, որ զանձինս ոմանս միայն, որգոն՝ ոմն մարդ, ոմանք մարդիկք, այլ մարդ» (ՄՄ 2286, 146բ), տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ թարգմանչից այն հայտնի է որպես թվի քերականական կարգի եզր, իսկ ձեռագրում այն արդեն դերանվան տեսակ է¹⁹⁰:

Զանազանական [շաղկապ] - ներհակական համադասական շաղկապ. «զանազանական, ընդդիմացուցական և ներհակական է, որով յառաջադրեալ իրին այլ իր հակակայ յարադրի, որք են այսք՝ այլ, բայց, իսկ, նա[եւ], սակայն, այլ սակայն, բայց սակայն, թեպետև այլք, որզան՝ զի և ինձ պատրաստեալ է, բայց ով իցե, որ ինձ հակառակ կայցե, եւ այսմ մասին հետևին, մերձաւորք են» (ՄՄ 2276, 175ա),

¹⁸⁶ ԼԲ, Էջ 24:

¹⁸⁷ ԼԲ, Էջ 25:

¹⁸⁸ ԼԲ, Էջ 64: Հետագայում Մ. Բժշկյան ունի *բացասական բայեր*, Գ. Ավետիքյան՝ *բացասական մասնիկներ* տերմիններ, կան նաև *բացասական բառածև*, *բացասական խոնարհում*, *բացասական խոսք*, *բացասական նախածանց*, *բացասական վերջավորություն* տերմինները, տե՛ս նույն տեղում:

¹⁸⁹ ԼԲ, Էջ 87:

¹⁹⁰ ԼԲ, Էջ 87:

ծեռագրում այլ իմաստ ունի, քանի որ Սիմեոն Ջուղայեցին գործածել է *զանազանական մակբայ* տերմինը¹⁹¹:

Թիւ - թվական. «թուոց տեսակք են երեք՝ գլխաւոր, դասական, զատական» (ՄՄ 12, 12բ), տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ հայ տնի է որպէս թվի քերականական կարգի անվանում¹⁹²:

Կոչական [բայ] - բայի տեսակ, նույնն է՝ ասացական բայ. «եւ է բայ եռակի՝ էական, կոչական և պատահական... եւ կոչական այսոքիկ, հիբար՝ յորջորջիմ, անուանիմ, ասիմ, կոչիմ, ձայնիմ» (ՄՄ 2276, 154բ), հայ տնի են *կոչական հոլով*՝ Դավիթ քերականից, *կոչական շաղկապ*՝ Յամամ Արևելցուց¹⁹³, տերմինը ձեռագրում այլ իմաստով է հանդիպում:

Կոչական [բան] - անդամ երկրորդական նախադասություն. «կոչական, որգոն՝ ո՛վ Տէր» (BzAn 547, 64ա), տերմինը ձեռագրում այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ Դավիթ քերականը օգտագործել է *կոչական հոլով*, Յամամ Արևելցին՝ *կոչական շաղկապ*¹⁹⁴:

Կրաւորական [հոլով] (լատ. *casus accusativus*) - հայցական հոլով. «կրաւորական ի կրելոյ աստցաք, զի զկրօղ դնեմք ի նմայ, որգոն՝ զքեզ ծեծեմ..., թեպէտ ի հայերէն լեզու կրաւորական նոյն է, որ ուղղական, միայն զայ առաջադրելով» (ՄՄ 2286, 144ա), այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ թարգմանչից հայ տնի է *կրավորական բայ*, Ոսկանից՝ *կրավորական ձայն*, տերմինն ունի նաև *կրավորական ածանց*, *կրավորական խոնարհում*, *կրավորական նախադասություն* գործածությունները¹⁹⁵:

Կրկնական [գաղափար] – ածականակերտ ածանց, որը, դրվելով բայարմատի վրա, կազմում է ածական. «գաղափարս այս ած ասի կրկնական ի տեսակի, որգոն՝ երկիւղած, ստեղծուած, հանած, ծաղկած» (ՄՄ 2284, 45ա), տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ Կղեմես

¹⁹¹ ԼԲ, Էջ 97:

¹⁹² ԼԲ, Էջ 109:

¹⁹³ ԼԲ, Էջ 156:

¹⁹⁴ ԼԲ, Էջ 156: Յետագայում Մ. Չամչյանը գործածել է *կոչական միջարկություն* տերմինը, տե՛ս նույն տեղում:

¹⁹⁵ ԼԲ, Էջ 157-158: Տերմինը հետագայում Մ. Աբեղյանի կողմից այլ իմաստ է ձեռք բերել՝ *կրավորական միջածանց*, տե՛ս նույն տեղում:

Գալ անոսն ունի *կրկնական մակբայ*, Յովհաննես Յուզվը՝ *կրկնական անու և ածական թվո* տերմինները¹⁹⁶:

Կրկնաւ որ [անու և] (լատ. *derivativum nomen*) - ածանցական, ածանցավոր անուն. «անուանց ոմն յառաջաւ որ, ոմն կրկնաւ որ... կրկնաւ որ միշտ ածաւ որ է... իսկ որք ի նոցունց որպէս առու ի յաղբերէ կրկնին, կրկնաւ որք ասին և բազում կերպիւ շինին, որգոն՝ աստուած, աստուածային, աստուածեղէն, աստուածական... եղանի ևս ի կրկնմանէն այլ կրկնումն, որպէս՝ ի յերկնաւ որէն - երկնաւ որական... պատիւ - պատուաւ որ - պատուաւ որական... իսկ զկրկնաւ որ ոչ գտանես, որ ածական կամ բայական ոչ իցէ, զի ի բժշկէ - բժշկական և բժշկել կրկնի» (ՄՄ 2295, 56բ), տերմինն այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ կրկնավոր նշանակում է կրկնակի՝ արմատի կրկնությամբ¹⁹⁷:

Յասարակ փոխանու և (լատ. *universale pronomen*) - որոշյալ դերանուն. «փոխանուն հասարակ է, որ զանձն ամենայն նշանակէ, որպէս՝ ամենայն մարդ» (ՄՄ 2286, 146բ), «փոխանուն հասարակ է, որ զամենայն անձինս ի միասին նշանակէ, որպէս ամենայն մարդ» (ՄՄ 2295, 62բ), տերմինը այլ իմաստով է արտահայտված, քանի որ թարգմանիչն ունի *հասարակ շաղաշար, հասարակ վանկ, Դավիթ քերականը՝ հասարակ անու և, Յովհաննես Յուզվը՝ հասարակ բայ, հասարակ գոյական, հասարակ հոլովում, հասարակ տառ* տերմինները¹⁹⁸:

Յոլովմունք - բայի եղանակի քերականական կարգի նշանակությամբ. «հոլովմունք հինգ՝ սահմանական, աներևոյթ, հրամայական, ըղծական, ստորադասական» (BzAn 547, 11ա), ձեռագրում տերմինը այլ իմաստով է կիրառվել, քանի որ հոլովում տերմինը գործածվել է անուն խոսքի մասի թեքումը արտահայտելու համար¹⁹⁹:

¹⁹⁶ ԼԲ, Էջ 159: Յետագայում Մ. Չամչյանը գործածել է *կրկնական թվական*, իսկ Բաղդասար Դաիրը՝ *կրկնական շաղկապ* տերմինները, տե՛ս նույն տեղում:

¹⁹⁷ ԼԲ, Էջ 160: Կա *կրկնավոր բաղաձայն, կրկնավոր բայ, կրկնավոր բարդ բառ* տերմինները, տե՛ս նույն տեղում:

¹⁹⁸ ԼԲ, Էջ 170-171: Յետագայում ևս տերմինը այլ իմաստներ է ձեռք բերել, Յովհաննես Յուզվը գործածել է *հասարակ բայ, հասարակ գոյական, հասարակ հոլովում*, Գ. Ավետիքյանը՝ *հասարակ բարդություն* իմաստներով, տե՛ս նույն տեղում:

¹⁹⁹ ԼԲ, Էջ 194:

*Պակասական [բայ] - նույնն է՝ պակասավոր բայ . «պակասականք են, որք ոչ ընդունին զամենայն ամանակս խոնարհմանց, որպէս՝ եմ, լինիմ, եղանիմ, գոմ» (ՄՄ 2276, 168ա), տերմինն այս ձեռագրում այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ Կղեմես Գալանոսը օգտագործել է *պակասական անուն*, Սիմեոն Ջուղայեցին՝ *պակասական ածանցական անուն*, իսկ հետագայում Մխիթար Սեբաստացին, Մ. Տեր-Յարուբյունյանը *պակասական մասնիկներ*, *պակասական ածանցակերտ մասնիկներ* տերմիններն են գործածում²⁰⁰:*

Պակասական ընդունելու թիւն - տե՛ս արարողականք, տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ Կղեմես Գալանոսը գործածել է *պակասական անուն*, Սիմեոն Ջուղայեցին՝ *պակասական ածանցական անուն*, հետագայում Մխիթար Սեբաստացին, Մ. Տեր-Յարուբյունյանը *պակասական մասնիկներ*, *պակասական ածանցակերտ մասնիկներ* տերմինն են գործածում²⁰¹:

Սահմանական [բան] - կատարյալ նախադասության տեսակ՝ պատմողական նախադասություն. «սահմանական է տրամաբանականն, զոր գաղափար եղաք կատարեալ բանին, զկնի որոյ հանգչին այոյնն ոչն, հիկէն՝ բուսանի ծառ կենաց, կարելի է ասել այո կամ ոչ» (BzAn 547, 63ա), այս տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ Կղեմես Գալանոսը գործածել է *սահմանական եղանակ* իմաստով²⁰²:

Ստորակցական բան - պայմանի երկրորդական նախադասություն. «բանն ստորակցական ունի յինքեան զանկատարութիւն իմն դիտաւորութեան, որգոն՝ եթէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ» (ՄՄ 2284, 41բ), այս տերմինը այլ իմաստ է ձեռք բերել, մինչ այդ Յովհաննես Յովովից հայտնի էր *ստորակցական եղանակ* տերմին²⁰³:

4. ՀԱՅՏՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱՉՄԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

²⁰⁰ ԼԲ, էջ 253:

²⁰¹ ԼԲ, էջ 253:

²⁰² ԼԲ, էջ 267:

²⁰³ ԼԲ, էջ 279:

Հաճախ քերականության մեջ նոր տերմիններ առաջանում են արդեն հայտնի տերմինների բառակազմական կառուցվածքի կամ հնչյունական կազմի որոշակի փոփոխմամբ: Այս ենթախմբում ներառված են բոլոր այն տերմինները, որոնք քերականական ձեռագրերում նմանատիպ փոփոխություններ են կրել: Այսպես՝

Ածաւոր անուն (լատ. *adiectivum nomen*) - անվան տեսակ, ածական. «անուն ածաւոր է, որ իբրև այլում վերայ կալով նշանակէ, հիգան՝ սալիտակ, մարդկային, ծիծաղական և այլն» (ՄՄ 2295, 54բ), Ոսկան Երևանցու *ածական անուն*²⁰⁴, Կղեմես Գալանոսի *ածական անուն* ն տերմինների բառակազմական նոր տարբերակն է²⁰⁵:

Ամանակական [առբայ] – ժամանակի մակբայ. «ամանակականքն եռակի նշանակութեամբ ասին ըստ ներկայի, ըստ անցելոյ և ըստ ապառնելոյ, որպէս՝ արդ, այժմ, այսօր, երեկ, եռանդյառաջ, կանխաւ, վաղիւ...» (ՄՄ 2276, 172բ), սահմանում և օրինակներ չկան (BzAn 547, 29ա), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *ամանակի* և Յովհաննես Յովովի *ժամանակական մակբայ ների*²⁰⁶:

Անկ (լատ. *casus*) - նույնն է՝ հոլովում. «անկ է անունն հոլովումն ի նոյն թիւ, որգոն՝ մարդ-մարդոյ» (ՄՄ 2286, 143բ), տերմինը Յովհաննես Քննեցու *անգումն* տերմինի բառակազմական նոր տարբերակն է²⁰⁷:

Անջատաւոր [շաղկապ] (լատ. *disiunctiva coniunctio*) - համադասական տրոհական շաղկապ. «անջատաւոր է, որ զբառս և ոչ զիրս կապէ կամ ըստ ձայնի միաւորէ և ըստ իրի բաժանէ և են՝ կամ, կամ թէ, որպէս՝ դու ես կա՛մ մարդ, կա՛մ անասուն, և կա՛մ կարդայ, կա՛մ աշխատիր, և կա՛մ ես չար եմ, կա՛մ դու չար ես...» (ՄՄ 2295, 81ա), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *անջատական շաղկապի*²⁰⁸:

Առինչ գոյոյ [փոխանուն] (լատ. *essentiae relativum pronomen*) - անձ, էություն ցույց տվող «առնչական» դերանուն. «առինչ երկատ է՝ մինն գոյոյ ... գոյոյ առինչ է, որ զիրի բնութիւն առբերէ և ցուցանէ կամ իբրև գոլով կամ իբրև արտակալով» (ՄՄ 2295, 64ա), սա

²⁰⁴ Ոսկան Երևանցի, նշվ. աշխ., էջ 7:

²⁰⁵ Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., էջ 67:

²⁰⁶ ԼԲ, էջ 8 և 112:

²⁰⁷ Յովհաննես Քննեցի, նշվ. աշխ., էջ 171:

²⁰⁸ ԼԲ, էջ 19:

բառակազմական նոր տարբերակն է Ոսկան Երևանցու *առնչական գոյացական դերանուններ*²⁰⁹:

Առնչ գոյոյ այլ այլ ութեան [փոխանուն] (լատ. *diversitatis relativum substantiae pronomem*) - զանազանությունն ցույց տվող «առնչական» դերանունն. «գոյոյ առնչ Բ. է... և միւսն այլ այլ ութեան... կրողութեան [իմա՝ այլ այլ ութեան] առնչ է, որ գորիշ և զայլ ի յառաջին ասացելոյն առբերէ, որպէս՝ այլ, որգոն՝ ես տեսանեմ զՊետրոս և զայլ մարդս...» (ՄՄ 2295, 64բ), ի դեպ Ոսկան Երևանցին այս նույն տերմինն անվանում է *առնչական վերբերական զանազանության դերանուն* և, որի բառակազմական նոր տարբերակն է ձեռագրում գործածվածը²¹⁰:

Առնչ պատահման [փոխանուն] (լատ. *accidentis relativum pronomem*) – քանակ ցույց «առնչական» դերանունն. «պատահման առնչ է, որ զիրինչ առբերէ, որ է էութեան իբրև պատահմամբ անձնացելոյն թիւ և թուոյ բաւականութիւն, պատահման առնչք են հինգ ի հայերէն լեզու, այսինքն՝ որպէս, որչափ, որքան, որտեղ և որքան-որքան, վասն զի էութիւն առ յարտակալն գալով հազնի և անձնանայ որպիսութեամբ, քանակութեամբ, թուով, թուական կարգով և ի թիւ կարգաորեցելոցն ժողովմամբ...» (ՄՄ 2295, 64բ), սա բառակազմական նոր տարբերակն է Ոսկան Երևանցու *առնչական պատահական դերանուններ*²¹¹:

Արուական սեր - նույնն է՝ արական սեռ (ՄՄ 2335, 5ա), որի հնչյունական նոր տարբերակն է²¹²:

Բազմաւ որակի [թիւ] (լատ. *pluralis numerus*) - նույնն է հոգնակի թիվ. «փոխանունաց ոմն եզակի..., ոմն բազմաւ որակի, հիզան՝ մեք, դուք» (ՄՄ 2286, 147ա), «ոմն բազմաւ որակի՝ որպէս մարդիկք..., իսկ մարդիկք բազմաւ որակի է, զի բազմաւ որականաբար առբերի, և այսոսիկ յամենայն լեզու նմանապէս» (ՄՄ 2295, 56ա), սա բառակազմական նոր տարբերակ է, քանի որ հոգնակի թիվը Կյուրեղ Ալեքսանդրացին

²⁰⁹ ԼԲ, էջ 28:

²¹⁰ ԼԲ, էջ 28:

²¹¹ ԼԲ, էջ 28:

²¹² ԼԲ, էջ 33:

անվանում էր *բազմաւ որ*, եզնիկ Կողբացի՝ *բազմաբար*, թարգմանիչը՝ *բազմաւ որական*, իսկ Անանուհը՝ *բազմաւ որաբար*²¹³:

Բացասելոյ [առբայ] (լատ. *negandi adverbium*) - ժխտման մակբայ . «բացասելոյ են առբայք՝ ոչ, չէ, չ, մի, ոչ ուրեք» (ՄՄ 2295, 78բ), բառակազմական նոր տարբերակն է Կղեմես Գալանոսի *բացասական մակբայի*²¹⁴:

Գոյաւ որ անուհ (լատ. *substantivum nomen*) - նույնն է՝ գոյական . «անուհ գոյաւոր է, որ իբրև ինքեամբ գոլով նշանակէ, որգոն՝ մարդ...» (ՄՄ 2295, 54բ), նույնն է՝ Ոսկան Երևանցու *գոյացական կամ ենթակայական անուհ*²¹⁵, տերմինը Կղեմես Գալանոսի *գոյական անուհ* ն տերմինի բառակազմական նոր տարբերակն է²¹⁶:

Դիմաւ որիչ [դերանուհ] - դիմորոշ հոդ. «ոմանք են դիմաւ որիչք, որք են այսոքիկ՝ ս, դ, ն, բանս, բանդ, բանն, բայց սոքա են մանաւանդ դերդերանուհք, քան դերանուհք» (ՄՄ 2284, 46ա), նույնական է Զովհաննես Զոլովի *դիմորոշական դերանուհի* հետ, նաև որի բառակազմական նոր տարբերակն է²¹⁷:

Զարմացողի [անյայտբան] (լատ. *admirantis oratio confusa*) – զարմանք արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 84ա), բառակազմական նոր տարբերակն է Կղեմես Գալանոսի *զարմացական միջարկություն* ն տերմինի²¹⁸:

Ընդդիմաւ որ [շաղկապ] (լատ. *adversativa coniunctio*) - հակասման հարաբերություն արտահայտող ներհակական համադասական շաղկապ. «ընդդիմաւոր է, որ զիրս կամ զգործս միացուցանէ, բայց ընդ այլ այլ ութեամբ, որգոն՝ դուլաւ ես, բայց ոչ յամենայնի, և Պետրոս իմաստուն, այլ Յոհաննեսն անիմաստ, ընդդիմաւորքն են՝ բայց, այլ, իսկ, արդ, սակայն, թեպետև ամենեքին, որք հակառակելով միաւորեն» (ՄՄ 2295, 81ա), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *ընդդիմակ* և Կղեմես Գալանոսի *ընդդիմական շաղկապներ*²¹⁹:

²¹³ ԼԲ, Էջ 41 և 43:

²¹⁴ ԼԲ, Էջ 64:

²¹⁵ Ոսկան Երևանցի, նշվ. աշխ., էջ 7:

²¹⁶ Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., էջ 67:

²¹⁷ ԼԲ, Էջ 84: Զետագայում Բաղդասար Դափրը դիմավորիչ տերմինը գործածել է դիմային վերջավորություններ հասկացություններն անվանելու համար, տե՛ս նույն տեղում:

²¹⁸ ԼԲ, Էջ 97:

²¹⁹ ԼԲ, Էջ 104:

Ընդդիմացուցական [շաղկապ] – տե՛ս զանազանական շաղկապ, տերմինը նույնն է թարգմանչի *ընդդիմակ շաղկապի* հետ, վերջինիս բառակազմական նոր տարբերակն է²²⁰:

Ժամանակաւ որ շաղկապ (լատ. *temporalis coniunctio*) - ժամանակի իմաստ արտահայտող շաղկապ. «Ժամանակաւ որ շաղկապէ, որ զիրս և զգործս ի մի ժամանակ միացուցանէ, որպէս՝ յորժամ վարդապետ ուսուցանէ, աշակերտք զունկնդրեն: Են ժամանակաւ որքն՝ յորժամ, երբ, երբ որ, յայնժամ, յետոյ, մինչև, մինչդեռ, նոյն ժամայն» (ՄՄ 2295, 82ա), բառակազմական նոր տարբերակն է Ռսկան Երևանցու *Ժամանակական շաղկապի*²²¹:

Կրկնածական [անուն] - կրկնակի ածանցված անուն. «կրկնածականացն գաղափարք են վեց՝ որ, ուն, որդ, կից, ունի, թիւն, հիբար՝ փառաւոր, իմաստուն, առաջնորդ, ընկերակից, տերունի, սրբութիւն... Եւ կրկնածականք ասին, զի ածանցեալքս ևս կարեն ածանցիլ, որպակ՝ փառաւորական, իմաստական, առաջնորդական, ընկերակցական, տերունական, սրբութեանական» (BzAn 547, 7ա), տերմինը Կղեմես Գալանոսից վկայված *կրկնածանց անուն* տերմինի բառակազմական նոր տարբերակն է²²²:

Հայրական [գաղափար] - հայրանուն կերտող ածանց. «գաղափարքս այսոքիկ եան և կան... Երբեմն ասի հայրական ի տեսակի, որգոն՝ Սիմոն Յոնանեան, Սաւուղ Կիսեան, Աքար Չամբեան» (ՄՄ 2284, 44բ), Կղեմես Գալանոսի *հայրանունական ածանցի* բառակազմական նոր տարբերակն է²²³:

Հայրանունակ [անուն] - անվան տեսակ, ծագում, պատկանելություն, ազգականություն ցույց տվող գոյական. «հայրանունակ է, որ ի հատուկ անունանէ հօրն և կամ ի նախնեաց ձևացեալ է, եւ գաղափարք են սորաերկու՝ արականացն՝ եան, հիզան՝ Աղէքսանդր Փիլիպպեան, Համազասպեան Էմանուէլ, եւ իգականացն՝ ուհի, հիկէն՝ Վարդուհի» (ՄՄ 2276, 145ա), նույն տերմինը առանց որևէ սահմանման (ՄՄ 2335, 5ա), տերմինը թարգմանչի նույն

²²⁰ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 37:

²²¹ ԼԲ էջ 112-113, կան նաև *Ժամանակի շաղկապ, Ժամանակային շաղկապ* տերմիններ միևնույն իմաստի համար:

²²² ԼԲ, էջ 158:

²²³ Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., էջ 25:

հայրանու նական ածանցական անուն տերմինի բառակազմական նոր տարբերակն է²²⁴:

Հարցանելոյ [առբայ] (լատ. *interrogandi adverbium*) – հարցում արտահայտող մակբայ. «հարցանելոյ են՝ է՞ր, ընդէ՞ր, զի՞, զիա՞րդ, վասն է՞ր» (ՄՄ 2295, 78բ), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *հարցական մակբայի* և Ռսկան Երևանցու *հարցական առբայի*²²⁵:

Հենգնական [առբայ] - հեգնանքի մակբայ. «հեգնական՝ ի՞շ, վա՛հ, ա՛հ, ե՛հ» (BzAn 547, 31ա), նույնն է՝ *հեգնական մակբայ*, որի հնչյունական նոր տարբերակն է²²⁶:

Հոմանու նական [անու] - անվան տեսակ, որակական ածական. «ոմն է հոմանու նական, որգոն՝ առողջ, գուարթ» (ՄՄ 2284, 42ա), թարգմանչի *հոմանու ն* տերմինի բառակազմական նոր տարբերակն է²²⁷:

Ճերու նդիայ - սահմանում չունի, այս տերմինի տակ թվարկվել են բայերի աներևույթ եղանակի հոլոված ձևերը՝ «լինելոյ, լինելով, ի լինիլ» (ՄՄ 2284, 11բ), նույն տերմինը Ռսկան Երևանցին անվանում է *ջերու նդիա*, որի հնչյունական (ուղղագրական) նոր տարբերակն է տերմինը²²⁸:

Մարդական [գաղափար] - սերող հիմքի հատկանիշ ունեցող ածանց. «գաղափարս այս նտ ասի մարդական ի տեսակի, որգոն՝ ձիթոտ, իւղոտ, մսոտ» (ՄՄ 2284, 45ա), Կղեմես Գալանոսի *մակրդական ածանցի* հնչյունական նոր տարբերակն է²²⁹:

Յորդորողի [անյայտ բան] (լատ. *hortantis oratio confusa*) – հորդոր, հրաման արտահայտող ձայնարկություն (ՄՄ 2295, 83բ), բառակազմական նոր տարբերակն է Հովհաննես Հոլովի *հորդորական միջարկություն* ն տերմինի²³⁰:

Նախկնական [գաղափար] - հայրանուն կամ տոհմանուն ցույց տվող ածանց. «գաղափարք այսոքիկ՝ գէն, էճ, իթ, ալ, ուշ, ուհի, ոգ և այլք բազումք ասին հայրանունական ի կամ նախկնական ի տեսակի,

²²⁴ ԼԲ, Էջ 168:

²²⁵ ԼԲ, Էջ 177-178:

²²⁶ ԼԲ, Էջ 207:

²²⁷ ԼԲ, Էջ 195:

²²⁸ ԼԲ, Էջ 264:

²²⁹ Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., Էջ 75:

²³⁰ ԼԲ, Էջ 196:

որգոն՝ Բաբգէն, ի Բաբայ, Մանիթ կամ, Մանէճ, ի Մանեայ, Արտակ, յ Արտայ ...» (ՄՄ 2284, 44ա), Սիմեոն Ջուղայեցին ունի *նախնական ածանցական անու*²³¹, որի բառակազմական նոր տարբերակն է տերմինը:

Նմանութեան [առբայ] (լատ. *similitudinis adverbium*) - ձևի մակբայ. «այլ քե՛ն նմանութեան, որպէս՝ հիզան, հիբար, որպակ, որբար, որկէն, որզան, որգոն, հիկէն, որպէս, որգունակ, որք ևս հարցականք լինին» (ՄՄ 2295, 78ա), Կղեմես Գալանոսի *նմանական մակբայ* ի բառակազմական նոր տարբերակն է²³²:

Պակասական [բայ] - նույնն է՝ պակասավոր բայեր. «պակասականք են, որք ոչ ընդունին զամենայն ամանակս խոնարհմանց, որպէս՝ եմ, լինիմ, եղանիմ, գոմ» (ՄՄ 2276, 168ա), Յովհաննես Յովոզն ունի *պակասավոր բայեր* տերմինը²³³, ձեռագրում առկա տերմինը բառակազմական նոր տարբերակ է:

Սպառական [առբայ] - սաստում, կշտամբանք, բարկություն և արտահայտող մակբայ. «սպառական՝ իշտ, տի, օն և օն լիցի» (BzAn 547, 31ա), նույնն է՝ թարգմանչի *սպառնական* և *խրոխտական մակբայ ների* հետ²³⁴, *սպառնականի* հնչյունական նոր տարբերակն է:

Ստորակ - առոգանության նշան, նույնն է՝ ստորատ (ՄՄ 2281, 257բ), *ստորատի* հնչյունական նոր տարբերակն է և հավանաբար առաջացել է ստորատ և ստորակետ տերմինների համադրմամբ²³⁵:

Ստորասելոյ [առբայ] (լատ. *affirmandi adverbium*) - հավանության, հաստատման մակբայ. «ստորասելոյ առբայք են՝ հա, հրամայեալ ես, այսպէս հէնց, ճշմարիտ, հաւաստեալ և այլն, իրաւ, ստուգիւ» (ՄՄ 2295, 78բ), բառակազմական նոր տարբերակն է Կղեմես Գալանոսի *ստորասական մակբայ* ի²³⁶:

Վերացելոյ [գաղափար] - վերացական, ընդհանուր հասկացություն, երևույթ, հարաբերություն արտահայտող ածանց. «գաղափարս այս թիւն ասի վերացելոյ տեսակի, որգոն՝ սրբութիւն,

²³¹ ԼԲ, Էջ 227:

²³² ԼԲ, Էջ 234:

²³³ ԼԲ, Էջ 253:

²³⁴ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 32:

²³⁵ ԼԲ, Էջ 279:

²³⁶ ԼԲ, Էջ 279:

մաքրութիւն» (ՄՄ 2284, 45ա), Կղեմես Գալանոսի *վերացյալ ածանցի* բառակազմական նոր տարբերակն է²³⁷:

Տարակուսաւ որ [շաղկապ] (լատ. *conditionalis coniunctio*) - պայմանի ստորադասական շաղկապ. «տարակուսաւ որ է, որ զմիաւորութիւնն իւրի ներդրութենէ գործէ, որպէս՝ եթէ արեգակն է ի վերայ երկրի, ցերեկ է, և եւն տարակուսաւ որքն՝ եթէ, եթէ ոչ» (ՄՄ 2295, 81ա), թարգմանիչն ունի *տարակուսական շաղկապ*²³⁸, որի համեմատ ձեռագրի տերմինը բառակազմական նոր տարբերակ է:

Տիրական հոլով - նույնն է՝ տրական հոլով (ՄՄ 2335, 5ա), որի հնչյունական նոր տարբերակն է²³⁹:

Փոխերդմնական [առքայ] - երդմամբ ժխտում, բացասում արտահայտող մակբայ. «փոխերդմնականք՝ տա, քաւ» (BzAn 547, 31ա), նույնն է թարգմանչի *ապերդմնական մակբայի* հետ, որի բառակազմական նոր տարբերակն է²⁴⁰:

²³⁷ Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., էջ 75:

²³⁸ ԼԲ, էջ 290:

²³⁹ ԼԲ, էջ 294:

²⁴⁰ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 34:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒ Մ ԿԻՐԱՌՎԱԾ Լ ԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒ Մ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հոլևաբան դպրոցի ներկայացուցիչները մեծապես հարստացրել են հայերենի բառակազմական հնարավորությունները՝ կերտելով բազմաթիվ նախածանցներ, որոնք ավելի են հեշտացրել քերականական տերմինների ստեղծումը: Հոլևաբան դպրոցի կերտած տերմինների համար օգտագործվել են բառապաշարի հարստացման թե՛ ներքին միջոցները՝ հայերենի բառային կազմն ու բառակազմական հնարավորությունները և թե՛ արտաքին միջոցները՝ պատճենելով հոլևաբեն տերմինների իմաստն ու կազմությունը²⁴¹:

Կառուցվածքային տեսանկյունից տերմինները համագործածական բառերի պես ունեն նույն բնույթը²⁴²: Ելնելով այն հանգամանքից, որ տերմինները ևս մտնում են լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ՝ դրանց վերլուծությունը կատարվում է ընդհանուր բառակազմական վերլուծությանը հատուկ միջոցներով և եղանակներով՝ բնականաբար հաշվի առնելով գիտության տվյալ բնագավառի տերմինաբանության յուրահատկությունները:

Այս գլխում տերմինները ներկայացնում ենք երկու բաժնով. առաջին բաժնում պարզաբանվում է տերմինի պատկանելությունը քերականության որոշակի բաժինների՝ հնչյունաբանական- ուղղագրական, բառագիտական-բառակազմական, ձևաբանական, շարահյուսական, կետադրական-առոգական, իսկ երկրորդում դրանք քննվում են ըստ կազմության: Ըստ կազմության քննելիս առանձնացնում ենք տերմինների երկու մեծ խմբեր՝ համադրական կամ միաբառ և բառակապակցական:

Առաջինին են պատկանում արմատական, ածանցավոր, բարդ կառույց ունեցող տերմինները, իսկ բառակապակցականին՝ երկանդամ և բազմանդամ տերմինային կապակցությունները:

²⁴¹ Մուրադյան Ա., Հայ քերականական տերմինաբանության կազմավորումը, ՊԲՀ, 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 126:

²⁴² Ղազանչյան Լ., Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, ԼՈՂ, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, 270:

1. ԼԵԶԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ

Հայ երենի քերականական համակարգված տերմինաբանությունն առաջին անգամ ստեղծվել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայ երեն թարգմանությունն առիթով. պատահական չէ, որ այն համարվում է «հայ քերականության պատմության առաջին փաստաթուղթը, որ ներկայացնում է հայ երենի քերականության սիստեմատիկ շարադրանքը՝ ժամանակի ըմբռնմամբ»²⁴³: «Քերականական արվեստը» բաղկացած է քսանմեկ գլխից, մեծ մասը նվիրված է բուն քերականական նյութի ուսումնասիրությանը: Թրակացու աշխատության մեջ շարահյուսությանն անդրադարձ չկա, և քերականության այս բնագավառն առավել մանրամասն քննել են մասնավորապես լատինաբան քերականները:

Այս ենթագլխում տերմինները դասակարգել ենք ըստ քերականության բաժինների՝ առանձնացնելով հետևյալ խմբերը՝ հնչյունաբանական, բառագիտական-բառակազմական, ձևաբանական, շարահյուսական և կետադրական-առոգական տերմիններ:

Ա ՀԻՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ-ՈՒ ԴՂԱԳՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Միջնադարյան մի քանի քերական անդրադարձել են գրչության արվեստին իրենց արժեքավոր աշխատություններում: Դրանցից են՝ Արիստակես Գրչի «Վերլուծությունը բացերեւապես բազմազան բառից և բայից յոգնախումբ շարագրութեամբ արարեալ գսա Առիստակիսի Գրչի ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեան», Գևորգ Սկևռացու «Խրատ վասն հանգամանաց հեգից», «Խրատք վասն առոգանութեանց»²⁴⁴, «Խրատ գրչութեան» երկերը²⁴⁵: Եթե Արիստակես Գրչին իր աշխատության մեջ հիմնականում քննում է հայ երենի

²⁴³ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Էջ 44:

²⁴⁴ Միջնադարում առոգանությունը ևս ուներ իր կարևորությունը, քանի որ գրչության արվեստը պահանջում էր նաև տիրապետել բառերի ուղիղ արտասանությանը:

²⁴⁵ Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Էջք 227-286, 288-307, 308-320:

ուղղագրության կանոնները, ապա Գևորգ Սկևռացին առաջ է քաշում նոր հարցեր՝ ամբողջական ուսմունք ստեղծելով վանկատման, տողադարձի, կետադրության և մասամբ առոգանության վերաբերյալ:

Այս բաժնում կա *եղանակագրութիւն* նորահայտ տերմին: Սրանով անվանվող բաժինը ուսումնասիրում է գիրն ու իր տարատեսակները:

Հնչյունաբանական տերմինը *համաձայն* է, որը բաղաձայնի նոր անվանումն է. ձեռագրում *բաղաձայն* տերմինին գուգահեռ քերականը գործածում է այս նորահայտ տերմինը:

Վանկի անվանումներից ձեռագրերից առանձնացրել ենք հետևյալ նորահայտ տերմինները՝ *տարր*՝ վանկի կամ փաղառության նոր անվանում, ինչպես նշվում է ձեռագրում՝ «յաղագս վանգի կամ փաղառութեան, որ և տարր ասի», *տաժ փաղառութիւն և իսկական փաղառութիւն*. ձեռագրում տարբերակվում են վանկի այս երկու տեսակները, որոնք սակայն սահմանում կամ որևէ բացատրություն չունեն, այդ իսկ պատճառով դժվարանում ենք ասել, թե ձեռագրում դրանք առանձնացնելով՝ հեղինակը մասնավորապես վանկի որ տեսակները նկատի ունի: *Վանգ* տերմինից է կազմված նաև *փոքրավանգը*, որով անվանվում են սակավավանկ բառերը:

Այսպիսով, քերականության այս բաժնում ունենք նորահայտ յոթ տերմին՝ *եղանակագրութիւն*, *համաձայն*, *տարր*, *տաժ փաղառութիւն*, *իսկական փաղառութիւն*, *փոքրավանգ*:

Բ. ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ-ԲԱՌԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բառագիտությունն ուսումնասիրում է լեզվի բառային կազմը, իսկ բառակազմությունը՝ բառերի տեսակներն ըստ կազմության, բառերի բառակազմական կաղապարները, կազմության ձևերն ու եղանակները:

Բառագիտությունն ու բառակազմությունը հնում առանձին չեն ուսումնասիրվել, այլ ձևաբանության մաս են կազմել և քննվել խոսքի մասերի հետ: Թրակացին խոսքի մասերի քերականական հատկանիշները թվարկելիս խոսում է յուրաքանչյուրի բառածանցման ու բարդման ձևերի մասին, այդ տեղեկությունները

նա նաև տալիս է անվան տեսակները թվարկելիս²⁴⁶: Այս կարգին վերաբերող ունենք հետևյալ քերականական եզրերը՝ *ամանակական անուն*՝ ստացական ածանցական անվան տեսակ, *հայրանունակ անուն*՝ նույնն է թարգմանչի հայրանունական ածանցական անուն, *խոտորումն, անկ*՝ հոլովումն:

Ուսումնասիրության շրջանակներում ձևաբանությունն ու բառագիտություն-բառակազմություն բաժինները անջատ ենք քննում: Ըստ այդմ էլ այստեղ բերում ենք միայն բառագիտական-բառակազմական տերմինները, որոնք ձեռագրերում հետևյալներն են՝

պարզ արմատական բառերի համար ձեռագրերում գործածում են երկու նորահայտ տերմին՝ *«առաջառ անուն»*, *«նախկնառ անուն (նախկնառ փոխանուն)»*, ածանցավորները կոչում էին *«կրկնառ անուն»*: *Կրկնավոր անունն* էլ իր հերթին բաժանվում էր տեսակների և կոչվում համապատասխան ածանցի (*«գաղափար»*) անունով: Այդ տեսակներն են՝ *աղանդական գաղափար, կրկնական գաղափար, հայրական գաղափար, հպատակական գաղափար, մարդական գաղափար, նախկնական գաղափար, պատկանական գաղափար, վերացելոյ գաղափար, օթական գաղափար*: Սրանցից զատ ձեռագրերում կան նաև *կրկնածական անուն* տերմինը, որն անվանում է կրկնակի ածանցված բառերը:

Այս տերմինների շարքում բարդ բառերի հետևյալ տեսակներն են առանձնացվում՝ *յոգնաբարդ*՝ հարաբարդ, *կրկնաբարդ*՝ կրկնաբաղադրիչ հարաբարդ անուն, *երեքնաբարդ*՝ եռաբաղադրիչ հարաբարդ անուն, *չորեքնաբարդ*՝ քառաբաղադրիչ հարաբարդ անուն:

Այս բաժնում քննության նորահայտ տերմինների մեծ մասը անվանում են ածանցավոր բառերի զանազան տեսակներ:

գ. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ձևաբանական տերմինները քերականության մյուս բաժինների տերմինների համեմատ ձեռագրերում մեծ թիվ են կազմում. դրանց

²⁴⁶ Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, էջ 166:

քանակը շուրջ հարյուր իննսուհին է, որոնք էլ ներկայացնում ենք ըստ խոսքի մասերի և դրանց քերականական կարգերի պատկանելության: Եվ մինչև խոսքի մասերից յուրաքանչյուրի նորահայտ տերմիններին անդրադառնալը բերենք մի նորահայտ տերմին, որով ձեռագրերից մեկում կոչում են չթեքվող խոսքի մասերը՝ *անհոլ ովական մասն բանի*, որը Ոսկան Երևանցու գործածած *անհոլ ով մասու նք բանի* տերմինի ավելի վաղ և բառակազմական նոր կիրառությունն է:

Անուն խոսքի մասը լեզվաքերականական քննությունների մեկնակետն է: Այն սահմանվում է որպես առարկայական գոյացություն նշանակող հոլովական բառ²⁴⁷: Քերական մեկնիչները անվան մեջ առաջին հերթին նկատի ունեին գոյականը, որը քննած ձեռագրերում կոչվում է նաև *գոյալ որ անու ն* տերմինով:

Տարբերում էին հատուկ և հասարակ անուններ: Քերականների մեծ մասը առաջնային էր համարում հատուկ անունը, որը ձեռագրերում կոչվում է նաև *եզական անու ն*: Իսկ հասարակ անվան մեջ հետևյալ նոր տեսակն է առանձնացնում՝ *անհատական հասարակ անու ն*:

Առանձնացնում էին նաև նյութական կամ թանձրացական և վերացական գոյականներ՝ իրենց ենթատեսակներով՝ *անորոշելի էակ անու ն*՝ վերացական իմաստ արտահայտող, *զգալի էակ անու ն*, *որոշական անու ն*՝ նյութական իմաստ արտահայտող, *իմանալի էակ անու ն*՝ մտածական իմաստ արտահայտող անուն: Եզակի թիվ չունեցող գոյականները կոչում էին *անեզական գոյական*, իսկ հավաքական գոյականները՝ *համաժողովական անու ն*: Ձեռագրերում կան անուն խոսքի մասի մի քանի տեսակներ ևս՝ *արտաքարշեալ անու ն*, *համամածեալ անու ն*, *հոմանուն նական անու ն*:

Անուն խոսքի մասերից էին նաև ածականը, թվականը և դերանվան մի քանի տեսակ. ձեռագրերում ածականն անվանող մի շարք նորահայտ տերմիններ կան՝ *ածական ածալ որ*, *ածալ որ անու ն*, *առարկական անու ն*, *առածգական անու ն*, իսկ Ժխտական ածականը հատուկ տերմինով կոչում էին *բացասական անու ն*, տարբերակում էին ածականի մի շարք

²⁴⁷ Դիլբարյան Ն., Անվան ըմբռնումը հայ լեզվաքանության մեջ, «Հայաստան», Երևան, 2000, էջ 49:

տեսակներ, որոնք ձեռագրերում նոր անվանումներ ունեն. *գոյական ածաւոր*՝ փոխանվանական կիրառությամբ գոյականի վերածված ածական, *գոյաւոր ածական*՝ էական հատկանիշներ նշող ածականի տեսակ, *սլատահական ածական*՝ իրադրական հատկանիշներ նշող ածականի տեսակ, *բաղադրեալ մականուն*՝ բաղադրեալ ածական, *որոշեալ մականուն*՝ «պարզ» ածականի տեսակ, *անորիշ մականուն*՝ «բաղադրեալ» ածականի տեսակ, *սպարզ մականուն*՝ պարզ կազմությամբ ածական:

Թվականը անվանում էին նաև *թիւ* տերմինով, իսկ *ընթանրական անուն* տերմինով տարբերակում էին ընդհանրական նշանակությամբ դերանունները:

Անունը բնորոշվում էր հետևյալ քերականական հատկանիշներով՝ «սերք», «թիւք», «տեսակ», «ձևք» և «հոլով»²⁴⁸: Ձեռագրերում վերոհիշյալ կարգերին վերաբերող մի շարք նորահայտ տերմիններ ունենք:

Սեռ քերականական կարգը բաժանվում էր արական և իգական սեռերի, սակայն Վարդան Արևելցին սրանցից բացի նշում էր նաև «հասարակ», «անհասարակ» և «մակալասար» սեռերը²⁴⁹: Այս քերականական կարգին վերաբերող մեկ տերմին ունենք՝ *արուական սեր*:

Մյուս՝ թվի հատկանիշի (թվի քերականական կարգի) եզրերը հայերենում երկուսն էին՝ եզակի և հոգնակի թիվ, ինչպես նաև առանձնացվում էր հունարենին հատուկ երկակի թիվ, որը երբեք հայերենում չի ունեցել իր գործածությունը: Ձեռագրերից երկուսում ունենք հոգնակի թվի նոր անվանում՝ *բազմաւորակի թիւ*, որը արդեն հայտնի *բազմակոր*, *բազմաբար*, *բազմակորական*, *բազմակորաբար* տերմինների բառակազմական նոր տարբերակն է:

Տեսակ և ձև հատկանիշները թեև քննվում էին ձևաբանության մեջ, վերաբերում էին բառակազմությանը: Սրանցով քերական մեկնիչները հասկանում էին արմատական և ածանցավոր, ինչպես նաև պարզ, բարդ և հարաբարդ անունները: Դրանց կանոնադրաբանաբար բառակազմության բաժնում:

²⁴⁸ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 25:

²⁴⁹ Նոյն տեղում, էջ 26:

Անվան հինգերորդ հատկանիշը հոլովի քերականական կարգն էր, որն արտահայտվում էր հոլովաձևերով: Հին մեկնիչները հոլովը համարում էին «թեքում», «անկում», որից նաև «խոնարհում» տերմինը՝ բայի թեքումը արտահայտելու համար²⁵⁰:

Հոլովը քննած ձեռագրերից մի քանիսում կոչվում էր *անկ*, որը Ոսկան Երևանցու կողմից գործածած նույն տերմինի վաղ վկայությունն էր, ինչպես նաև Հովհաննես Քոնեցու *անգումն* տերմինի բառակազմական նոր տարբերակը: Ուսումնասիրության նյութ ձեռագրերում թեք հոլովների համար գործածում էին *թիւրականք*, *թիւր [անկ]* նորահայտ տերմինները: Կան նաև հոլովներին վերաբերող շուրջ մեկ տասնյակ նորահայտ անվանումներ, որոնք մեզ հայտնի տերմինների այլ իմաստով, ավելի վաղ, բառակազմական կամ հնչյունական տարբերակներն են. *անուանաւոր անկ* (ուղղական հոլով), *շրջադրական հոլով* (պարառական, գործիական հոլով), *կրաւորական հոլով* (հայցական, կրողական հոլով), *ներկայական հոլով* (ներգոյական հոլով), *տիրական հոլով* (տրական հոլով):

Ըստ Թրակացու՝ բայը ժամանակ, դեմք, թիվ ունեցող և չհոլովվող բառ է, որ «ներգործութիւն եւ կամ կիրյարկացոցէ»²⁵¹:

Հայ քերականական մտքի պատմության մեջ շատերը առաջնությունն էին տալիս անվանը, սակայն Ստեփանոս Սյունեցին, կարևորելով նախադասության մեջ բայի ունեցած էական դերը, այն է համարում առաջնահերթ²⁵²: Բայն ունի եղանակի, սեռի, դեմքի, ժամանակի, լծորդության քերականական հատկանիշներ: Ձեռագրերից քաղել ենք բային առնչվող հետևյալ նորահայտ տերմինները. բայի եղանակի քերականական կարգը մեկնիչները նշում են *հոլովմունք* տերմինով, հարկադրական եղանակը ձեռագրերում վկայված է *անեզրական եղանակ*, էական, գոյություն ունենալու իմաստ արտահայտող բայերը՝ *գոյական բայ*, *էական բայ*, դիմային նշանակությամբ բայերը՝ *դիմաւոր բայ*, *որոշեալ բայ*, *անդէմ բայ*

²⁵⁰ Աբաջյան Ա., Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2006, էջ 14:

²⁵¹ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 22:

²⁵² Դիլբարյան Ն., նշվ. աշխ., էջ 38:

տերմիններով, օժանդակ բայը կոչում են նաև *ենթակայ ական բայ*, *ծառայ ական բայ*, լինելության ընդհանուր իմաստ արտահայտող բայերը՝ *կայ ական բայ*, ասացական բայերը՝ *կոչ ական բայ*, պակասավոր բայերը՝ *պակասական բայ*, բացի էական և կոչական բայերից՝ քերականները մյուսներին տալիս են *պատահական բայ* անվանումը, իսկ բուն գործողությունն ցույց տվող բայերը *տրամադրական բայ* են կոչում:

Բայասեռերին վերաբերող հետևյալ տերմիններն են օգտագործված՝ ներգործական սեռի բայերը՝ *արտագործական բայ*, չեզոք սեռի բայերը՝ *կատարունական բայ*, կրավորական սեռի բայերը՝ *կրողական բայ*, կրկնասեռ բայերը՝ *փոփոխական բայ*:

խտտորումն տերմինով կոչում են լծորդությունը: Բայի խոնարհումը անվանում են *խտտորումն բայի*, ածանցավոր բայերի հետևյալ տեսակներն են թվարկում՝ *խորհրդաւ որ կրկնաւ որ բայ*, *հաճախաւ որ կրկնաւ որ բայ*, *պակասաւ որ կրկնաւ որ բայ*, *սկսգրնաւ որ կրկնաւ որ բայ*:

Հայ քերականության պատմության մեջ դերբայ եզրի բովանդակությունը տարբեր կերպ է ըմբռնվել. Թրակացու հայ թարգմանիչն այն անվանել է ընդունելություն, իբրև այդ բառերն ընդունում են անվան և բայի հատկությունները, անվան պես հոլովվում են, և բայի պես ունեն սեռ, եղանակ և ժամանակ: Հետագայում Հովհաննես Կոստանդնուպոլսեցին այն անվանել է դերբայ՝ բային փոխարինող, իսկ արդեն ձեռագրերում հանդիպում ենք միևնույն տերմինի այլ անվանում հետևյալ բնութագրմամբ՝ *ընդունակ*. «ընդունակ կոչեցինք և ոչ ընդունելութիւն, զի ընդունելութիւն վերացեալ անուն է, որ ոչ զառնօղ, այլ զառնումն նշանակէ... ընդունակ ասի, վասն զի զանուան և զբայի նշանակութիւն ընդունի, որ է էութիւն և զգործողութիւն...»:

Մեկնիչներն առանձնացրել են ընդունելությունը որպես առանձին խոսքի մաս, մեկնիչների մի մասը՝ Անանունը, Մովսես Քերթոզը, Համամ Արևելցին, ընդունելությունն ասելով, միայն անցյալ դերբայն են նկատի ունեցել, մինչդեռ մյուսները՝ անցյալ

և անորոշ դերբայները²⁵³: Թրակացու օրինակով քերականները խիստ համառոտ են քննում այս խոսքի մասը, ի տարբերություն Քռնեցու, որը մանրամասն քննելով ընդունելություն է համարում նաև ապառնի դերբայը²⁵⁴: Անորոշ դերբայի հոլովված ձևերը, որոնք ընդամենը երեքն են, ձեռագրերում երկու տերմինով են կոչում՝ *արարողականք* կամ *պակասական ընդունելութիւն*, իսկ Ոսկան երևանցու *ջերու նդիա* տերմինը ձեռագրերից մեկում հնչյունական նոր տարբերակով է հանդես գալիս՝ *ճերու նտիայ*:

Դերանունը միջնադարում ընկալվում էր որպես «ոչ ճշմարիտ» անուն: Այն բնութագրվում էր երկու քերականական հատկանիշներով՝ անվան փոխարինող և դեմք ցույց տվող²⁵⁵: Թարգմանիչը տերմինի համար առաջարկում է *դերանունութիւն* և *դերանուն* հոմանիշները, վերջինս գործածում ենք մինչ օրս:

Հայ քերականագիտության մեջ այս խոսքի մասը մի քանի եզրերով է հանդիպում՝ *փոխանուն*, *թերանուն*, *տիրանուն*, *հասարակ անուն*: Տերմինի տարբեր անվանումները պայմանավորված են մեկնիչների կողմից ընդունված քերականական հատկանիշներով. Դիոնիսիոս Թրակացին և մեկնիչների մեծ մասը դերանունը համարում են անվանը փոխարինող բառ. «դերանունութիւն է բառ փոխանակ անունան առեալ, որոշեալ դիմաց յայտական»²⁵⁶, մինչդեռ Յովհաննես Երզնկացին, Յովհաննես Ծործորեցին, Առաքել Սյունեցին, Յովհաննես Քռնեցին այն դիտում են հատուկ անվանը փոխարինող բառ. «դերանուն է մասն բանի հոլովական, որ եդեալ լինի փոխանակ յատուկ անունան և նշանակէ զյատուկ իմն անձն...»²⁵⁷: Առաքել Սյունեցին, խոսելով դերանվան կիրառական հատկանիշների մասին, նշում է դերանվան առավելությունն անվան նկատմամբ. «դերանունութիւն է փոխանակ անունան առեալ, այսինքն՝ թէ զոր անունն ոչ կարէ յայտնել, սա յայտնէ, եւ զպակասութիւն անունան լնու, ասելով՝ սա, դա...»²⁵⁸: Ձեռագրերում հանդիպել ենք

²⁵³ Մուրադյան Ա., Յունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, էջ 273:

²⁵⁴ Յովհաննես Քռնեցի, նշվ. աշխ., էջ 97:

²⁵⁵ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 36-37:

²⁵⁶ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 27:

²⁵⁷ Յովհաննես Քռնեցի, նշվ. աշխ., էջ 172:

²⁵⁸ Առաքել Սյունեցի, նշվ. աշխ., էջ 163-164:

դերանունների կամ փոխանունների նոր տեսակների՝ «աճական փոխանուն», «անդրադարձական դերանուն», «անհատ փոխանուն», «անհատական փոխանուն», «առինչ գոյոյ փոխանուն», «առինչ գոյոյ այլ այլ ու թեան փոխանուն», «առինչ գոյոյ նոյն ու թեան փոխանուն», «առինչ պատահման փոխանուն», «առնչական փոխանուն», «գոյական փոխանուն», «եզական փոխանուն», «հասարակ փոխանուն», «պատկանական դերանուն», «տոհմական դերանուն»: Յովհաննես Յուզ Կոստանդնուպոլսեցու *դիմորոշական* դերանունները ձեռագրերում կոչվում են *դերդերանուն* կամ *դիմաւորիչ դերանուն* տերմիններով: Դեմքի քերականական կարգը բնութագրելիս առաջին, երկրորդ և երրորդ դեմքից բացի՝ առանձնացնում է նաև «հասարակ դէմ»:

Նախադրությունը միջնադարյան հայ մեկնիչների քերականական երկերում ընկալվել է որպես «սպասավոր» բառ կամ բառակազմական միջոց²⁵⁹: Այն լայն կիրառություն ուներ, քանի որ հանդես էր գալիս ոչ միայն բառակապակցության, այլ և բարդության մեջ: Թրակացու թարգմանիչն այն գործածում է «նախածանց», «վերջածանց», «նախդիր» և «նախադրություն» հասկացությունների համար²⁶⁰: Վարդան Արևելցին գտնում է, որ նախադրությունը բառին իմաստային նրբերանգ և գեղեցկություն է հաղորդում. «և յաղագս զարդու եւ գեղեցկութեան իմացեալ եղել նախադրութիւնս, և բարւոք իմացեալ եղել»²⁶¹: Վերոհիշյալ խոսքի մասը բացի *նախադրությունից* հանդիպում է նաև *նախդիր* անվանումով²⁶²: Իսկ ուսումնասիրության ընթացքում նույն խոսքի մասի համար ձեռագրերից երկուսում գտանք նորահայտ անվանում՝ *առանուն*։

Ձեռագրերում կան նախադրության հետևյալ նոր տեսակները՝ «զարդ նախադրութիւն», «զարդ և հարկաւոր նախադրութիւն», «շարամանելիք», «տարաշարամանելիք»:

Մակբայը չփոփոխվող, բայից առաջ կամ հետո դրվող խոսքի մաս է, որին դասվում էին միջարկությունները կամ

²⁵⁹ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 39:

²⁶⁰ Մուրադյան Ա., Յուզաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, էջ 281:

²⁶¹ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 139:

²⁶² Յովհաննես Քոնեցի, նշվ. աշխ., էջ 104:

ծայնարկությունները, մակբայական (ցուցական և հարցական) դերանունները, եղանակական բառերն ու բառ-մասնիկները, որոնց թվում նաև *այո, ոչ* և նման պատասխանական բառերը²⁶³: Այս խոսքի մասը ևս տարբեր դարաշրջաններում և տարբեր քերական-մեկիչների կողմից տարբեր անվանումներով է հանդես եկել՝ *առբայ, կրկնաբայ, մակազդ, մակդիր բայի, վերնաբայ*: Ձեռագրերում հիմնականում հանդիպում ենք *առբայ* տերմինով:

Թրակացին այն համարում է «մասն բանի անխաղաց»²⁶⁴, իսկ Յամամ Արևելցին ավելի մանրամասնելով բացատրում է. «... եւ անխաղաց ասի, զի ոչ հոլովս ունի, որպէս զանուն եւ ոչ խոնարհմունս, որպէս բայ»²⁶⁵: Դիոնիսիոս Թրակացին, ըստ իմաստային դասակարգման, առանձնացնում է մակբայների 26 տեսակ, իսկ թարգմանիչը Թրակացու թվարկածներին ավելացնում է շուրջ տասը տեսակ, որոնց համարժեքները հունարեն բնագրում չկան, և այդ թիվը հասցնում է 35-ի՝ բուն մակբայներին ավելացնելով նաև ծայնարկությունները, որոնք այդ ժամանակ առանձին խոսքի մաս չէին համարվում²⁶⁶: Ձեռագրերից առանձնացված՝ մակբայի տեսակների նորահայտ անվանումները, որոնք ցույց էին տալիս գործողության կատարման ժամանակը, որափսությունը և այլ հատկանիշները, թվարկում ենք ստորև՝ *աճեցուցանող առբայ, ամանակական առբայ, այսպուսական առբայ, անտիտական առբայ, անցուցական առբայ, անուղղական առբայ, աշխատական առբայ, ասպուսական առբայ, բաղդասական մակբայ, բացական առբայ, բացայայտական առբայ, բացասելոյ առբայ, գաղտական մակբայ, գումարական մակբայ, երկմտելոյ առբայ, երկրորդական առբայ, ըշտապական մակբայ, ծանուցանելոյ առբայ, կարգաւ որական մակբայ, կարգի առբայ, կարգի և դրույթեան առբայ, հարցանելոյ առբայ, հենգնական առբայ, մեծութեան առբայ, մօտական առբայ, յոգնաստորոգական առբայ, նանտրական մակբայ, նմանութեան առբայ, նուաստացուցանող առբայ, շարունական առբայ, պատկական առբայ, սպառական առբայ, ստորասելոյ առբայ, վաղվաղական առբայ,*

²⁶³ Բարսեղյան Յ., նշվ. աշխ., Երևան, 1980, էջ 13:

²⁶⁴ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 31:

²⁶⁵ Նունյն տեղում, էջ 270:

²⁶⁶ Մուրադյան Ա., Յունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, էջ 284:

վարկական առքայ, տաղաւ որական առքայ, տարորոշական առքայ, ցանկանալ ոյ առքայ, փոխերդմնական առքայ:

Ինչպէս նշում է Ա. Մուրադյանը, ըստ լատին մեկնիչ Պրիսցիանոսի, հույները ձայնարկությունը չէին առանձնացնում իբրև խոսքի մաս, այլ մակբայների մեջ էին դնում, քանի որ ձայնարկությունը կամ կցվում էր բային կամ նրամեջ ենթադրվում էր բայի իմաստը²⁶⁷, իսկ Գ. Ջահուկյանն էլ, նշելով հույների այս տեսակետը, ասում էր, որ սա յուրացնում էին նաև հայերը²⁶⁸: Քննությանն նյութերկու ձեռագրում ձայնարկությունն խոսքի մասը առանձնացվում է և կոչվում *անյայտ բան*: Ձեռագրում առանձնացվում է ձայնարկության քսանից ավելի տեսակ, որոնք արտահայտում էին բարկություն, ժխտում, երկյուղ, կասկած, զարմանք, հրճվանք, հարցում, ցանկություն, ցավ, ուրախություն. դրանք հետևյալներն են՝ *անիծողի անյայտ բան, արգելօղի անյայտ բան, բարկացողի անյայտ բան, բացասողի անյայտ բան, երկիւղածի անյայտ բան, երկմտողի անյայտ բան, զարմացողի անյայտ բան, լացողի անյայտ բան, ծիծաղողի անյայտ բան, կոչօղի անյայտ բան, հարցողի անյայտ բան, հրամայօղի անյայտ բան, յորդորողի անյայտ բան, յուսացողի անյայտ բան, պատասխանողի անյայտ բան, ստորասողի անյայտ բան, ցանկացողի անյայտ բան, ցաւ ոտաւ որի անյայտ բան, ցուցանօղի անյայտ բան, ուրախացողի անյայտ բան*:

Շաղկապը թարգմանիչը սահմանում է որպէս բառ, որը շաղկապում է միտքը որոշ կարգով և պարզաբանում բացատրության մեջ եղած խզումը. «շաղկապ է բառ, որ շաղկապէ զտրամախոհութիւնն ոճով եւ զմեկնութեանն փեռեկումնն յայտնէ»²⁶⁹: Գրեթե բոլոր մեկնիչները շաղկապը սահմանում են որպէս «զուգակապ»: Ե՛վ Թրակացին, և՛ հայ մեկնիչները շաղկապ խոսքի մասի համար քերականական կարգեր չեն ճանաչում, այլ միայն շաղկապների իմաստային դասակարգում են տալիս: Ուսումնասիրելով շաղկապների իմաստային դասդասումը՝ Դիոնիսիոս Թրակացին տարբերակում է շաղկապների 8 տեսակ, մյուս քերականները,

²⁶⁷ Նույն տեղում:

²⁶⁸ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Էջ 84:

²⁶⁹ Ն. Ադոնց, նշվ. աշխ., Էջ 35:

լրացնելով շարքը, դրանց քանակը մեկով կամ երկուսով ավելացնում են: Միայն Յովհաննես Քոնեցին է, որ շաղկապներին տալիս է քերականական երեք հատկանիշ՝ «կարողութիւն, ձեւք, կարգ»: Սա պայմանավորված է լատիներենի քերականությունների ու շմիջնադարի մեկնիչների հայացքների ազդեցությամբ, որոնք բացի իմաստայինից՝ տալիս էին նաև շարահյուսական դասակարգում²⁷⁰: Ուսումնասիրությունն ուշագրավ է այն տեսանկյունից, որ ձեռագրերից դուրս ենք բերել շաղկապների նոր տեսակների և արդեն հայտնի տեսակների նոր անվանումներ՝ «անջատաւ որ շաղկապ», «ապու սահետուական շաղկապ», «բայաւ արտական շաղկապ», «բանաւ որ շաղկապ», «երկմտական շաղկապ», «երկրորդաքնտրական շաղկապ», «երկրորդախնդրական շաղկապ», «զանազանական շաղկապ», «ընդդիմափարցական շաղկապ», «ընդդիմաւ որ շաղկապ», «ընդդիմացուցական շաղկապ», «ժամանակաւ որ շաղկապ», «լուծական շաղկապ», «կապաւ որ շաղկապ», «կատարելական շաղկապ», «կերպափոխական շաղկապ», «համեմատաւ որ շաղկապ», «հաստատական շաղկապ», «հաւանական շաղկապ», «յայտնողական շաղկապ», «շարամանական շաղկապ», «որոշաւ որ շաղկապ», «տաղաւ արական շաղկապ», «տարական սաւ որ շաղկապ», «տեղաւ որ շաղկապ», «փաստադրական շաղկապ»:

Նշենք, որ ձեռագրերում բացի հոդից մյուս բոլոր ութ խոսքի մասերից էլ նորահայտ տերմիններ ունենք: Ինչպես նաև մեծ քանակով նորահայտ տերմիններ ունենք ավելի ուշ շրջանում քերականագիտության մեջ առանձնացվող ձայնարկություն խոսքի մասից:

դ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ինչպես նշում է Խաչերյանը, հայ քերականագիտության մեջ ձևաբանության համեմատ շարահյուսության քննությունը ավելի ուշ է սկսվում: Սա պայմանավորված էր Դիոնիսիոս Թրակացու աշխատության կառուցվածքով և բովանդակությամբ, քանի որ աշխատության մեջ քննվում էին հիմնականում ձևաբանությանը

²⁷⁰ Յովհաննես Քոնեցի, նշվ. աշխ., էջ 186:

վերաբերող հարցեր, իսկ շարահյուսական հարցերին անդրադառնում են ավելի ուշ՝ Սիմեոն Ջուղայեցու կամ Կղեմես Գալանոսի ժամանակներից սկսած²⁷¹։ Շարահյուսությունը սերտ աղերսներ ուներ փիլիսոփայության և տրամաբանության հետ և պատահական չէ, որ շարահյուսական տերմինների հիմնական մասի համար երախտապարտ ենք ոչ թե քերականներին, այլ փիլիսոփաներին²⁷²։ Այդ հարցում իր կարևորագույն մասնակցությունը ունի հայ փիլիսոփաներից Դավիթ Անհաղթը։ Նա իր աշխատության մեջ քննության է առնում «բան», «անուն», «սահմանում» տերմինները²⁷³։ Յուրաքանչեք քերականները շարահյուսության անդրադարձել են միայն նախադասության՝ «բանի» սահմանումով։

Հայ շարահյուսագիտության պատմության տեսակետից հատկապես մեծ կարևորություն ունի Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» արժեքավոր աշխատությունը²⁷⁴։ Այս աշխատությունը հայոց լեզվի շարահյուսության սկզբունքների նկարագրության առաջին ինքնուրույն փորձն էր. այստեղ առաջին անգամ խոսքի մասերը քննվում են ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական առանձնահատկություններից ելնելով։ Շատ բնորոշ է Գ. Ջահուկյանի որակումն այս աշխատության վերաբերյալ՝ «հայոց լեզվի համառոտ շարահյուսության նախադաս»²⁷⁵։

Ուշ միջնադարի լատինատիպ գրեթե բոլոր քերականություններում հայերենի շարահյուսությանը առանձին բաժիններ էին հատկացվում. հիմնականում քննությունը սահմանափակվում էր խոսքի մասերի կապակցելիության հարցերով՝ համաձայնության և խնդրառության²⁷⁶։ Տարբերում էին համաձայնության չորս տեսակ՝ բայի և անվան, գոյականի և ածականի, հարաբերականի և նախընթացի, պատասխանի և հարցման։

²⁷¹ Խաչերյան Լ., Հայ շարահյուսագիտական մտքի վաղ շրջանի պատմությունից, ԲՄ, 6, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 97։

²⁷² Նույն տեղում, էջ 98։

²⁷³ Դավիթ Անհաղթ, նշվ. աշխ., էջ 28։

²⁷⁴ Խաչիկյան Լ., Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը, «Տեղեկագիր», Սերիա 1, 2, Երևան, 1943, էջ 81։

²⁷⁵ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), էջ 253։

²⁷⁶ Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., էջ 113, Յոհաննես վրդ. Կոստանդնուպոլսեցի, նշվ. աշխ., էջ 156։

Քննության սկզբնաղբյուր ձեռագրերից առանձնացվել են շարահյուսական շուրջ քսան տերմին, որոնցից երկուսը բնութագրում են բառերի շարահյուսական դերը, այսինքն՝ անվանում են շարահյուսական նույն առանձնահատկությունն ունեցող խոսքի մասեր. դրանք են՝ *առնչիք*, այս տերմինով անվանվում են այն խոսքի մասերը, որոնք կապակցվում են առդրությամբ, իսկ *հարկաւ որք* կոչվում են պարտադիր խնդրառությամբ կապակցվող խոսքի մասերը:

Մյուսները նախադասության տեսակների նորահայտ անվանումներ են կամ արդեն հայտնի անվանումների ավելի վաղ, այլ իմաստով կիրառություններ: Այսպես՝

ամանակաւ որ քան՝ դիմավոր բայով արտահայտված երկրորդական նախադասություն, *անամանակ քան*՝ անվանական միակազմ նախադասություն, *անեզրական քան*՝ անդեմ նախադասություն, *անյայտ քան*՝ ձայնարկությամբ արտահայտված նախադասություն, *առբայական քան*՝ մակբայով (հարաբերական դերանուն) կապված երկրորդական նախադասություն, *ընդունելական քան*՝ դերբայական դարձված, *ինքնածական քան*՝ երկրորդական նախադասություն, *կոչական քան*՝ անդեմ երկրորդական նախադասություն, *յայտնական քան*՝ նախադասություն, որի միտքն արտահայտված է լիիմաստ բառերով, *շաղկապաւ որ քան*՝ շաղկապով կապակցվող բարդ նախադասություն, *որական քան*՝ շաղկապով կապված երկրորդական նախադասություն, *սահմանական քան*՝ պատմողական նախադասություն, *ստորակցական քան*՝ պայմանի երկրորդական նախադասություն, *ստորոգական քան*՝ անդեմ նախադասություն:

Այսպիսով, այս նորահայտ տերմինները կարող են ընդգրկվել լեզվաբանական տերմինների բառարաններում և քերականական մտքի զարգացման պատմության մի օղակ կազմել, հատկապես շարահյուսության բնագավառում:

Ե. ԿԵՏԱԴՐԱԿԱՆ-ԱՌՈԳԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Տրոհության նշանները միջնադարյան քերականների կողմից չատ էին կարևորվում. Դավիթ քերականը գտնում էր, որ դրանց անտեսման դեպքում «կճապաղուեն ու կը կորչեն նաև մտածութիւնները»²⁷⁷, Ստեփանոս Սյունեցին, նրա մեկնաբանությունը զարգացնելով, ասում էր, որ «արուեստաւորս զընթերցաւ ըն ներկուռ կրթութեամբ հմտանալ, զի մի՛ դարձեալ ի սովորականսն թիւրեսցի ուղեգնացութիւն...»²⁷⁸, Վարդան Արևելցին ասում էր, որ «այսպէս բաժանես զգրոյցսն, որ չխառնես եւ աւերես զբանս»²⁷⁹, Յովհաննես Երզնկացին հետևյալ մեկնաբանությունն էր տալիս. «տրոհութիւն ասէ զփեռեկումն եւ զորոշումն բանիցն և տանց, յընթերցողութեանն ո՛չ ընդ միմեանս շաղախելով զայլ եւ այլ խորհուրդսն...»²⁸⁰, իսկ Եսայի Նչեցին ավելի խիստ բնորոշում է տալիս. «Վասն զի ի տրոհելոյ եւ յորոշելոյ զբանսն... շփոթէ զմիտսն եւ ի լսողէն զանխացուցանէ և ինքն անարուեստ մնայ»²⁸¹:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայերենի կետադրությունը մշակվել է դարերի ընթացքում և, ինչպես տևական ուղի անցած ամեն մի ամբողջություն, ունի որոշակի առավելություններ և թերություններ: Կետադրության պատմության սկիզբը անմիջականորեն կապվում է հայ գրերի գյուտի հետ: Կետադրական նշանների գործածությունը հայերենում սկսվել է գրերի գյուտին զուգընթաց: Հայերենի կետադրության պատմության մեջ էական դեր են խաղում XII-XIII դարերը, որը պայմանավորված էր «գրչության արվեստի» մշակմամբ²⁸²:

Միջնադարում ձեռագրերի ընդօրինակման աշխատանքների համար անհրաժեշտ էր տիրապետել «գրչության արվեստին»: Իսկ գրչության արվեստի բաղկացուցիչ մասերից մեկն էլ կետադրության, առոգանության նշանների իմացությունն էր,

²⁷⁷ Խաչերեան Լ., Դիոնիսիոս Թրակացու բարձրաձայն ընթերցանութեան հարցադրումները («Յաղագս վերծանութեան») և քնարերգութեան տեսակների սահմանումները հայ քերականների մեկնաբանմամբ, ՀԱ, ՃԱ տարի, թիւ 1-12, տպ. Մխիթարեան, Վիեննա, 1987, էջ 533:

²⁷⁸ Նույն տեղում, էջ 534:

²⁷⁹ Նույն տեղում:

²⁸⁰ Նույն տեղում:

²⁸¹ Նույն տեղում:

²⁸² Ջահուկյան Գ., Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, ԼՀԳ, 7, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990, էջ 75:

ուղղագրության, կետադրության կանոնների կայունացումը²⁸³, որը բավականին մեծ նշանակություն ուներ, քանի որ դրանց օգնությամբ միայն կարելի էր ձեռագրերը ճիշտ ընդօրինակել, անսխալ կարդալ²⁸⁴: Շատ հաճախ միջնադարյան ձեռագրերի էջերում հանդիպում ենք գրիչների կողմից ընթերցողներին ուղղված խոստովանություններ, որոնցում նրանք գրում են, որ «անհմուտ», «անգետ», «անտեղեակ» էին գրչության արվեստի կանոններին: Իսկ գրչության արվեստի անթերի իմացության պահանջը հատկապես զգացվում էր Ավետարան կամ Աստվածաշունչ ընդօրինակելիս, քանի որ հատկապես այս երկուսի դեպքում բացառվում էր անգամ փոքրիկ վրիպակ կամ սրբագրում²⁸⁵:

Հին շրջանի քերականական աշխատություններում առոգանությունն ու կետադրությունը առաջին բաժիններն են եղել, ուսումնասիրության մեջ այդ երկու բաժինները միասին ենք քննում՝ հաշվի առնելով ձեռագրերից քաղված կետադրական-առոգանական տերմինների սակավաթիվը²⁸⁶:

Գրաբարում տրոհության նշան համարվել են միայն *վերջակետը*, *միջակետը*, *ստորակետը*²⁸⁷: Հայերենում կետադրական նշաններից մի քանիսը շատյուրօրինակ են, քանի որ հատուկ են միայն հայերենին, և համարվում են ինքնուրույն նշաններ²⁸⁸:

Կետադրության դերը չափազանց մեծ է հատկապես գրավոր խոսքում: Բանավոր խոսքը գրավոր խոսքի ժամանակ ճիշտ արտահայտելու համար օգտագործում են կետադրության, առոգանության նշանները:

Առոգանությունը հին ժամանակներում համարել են խոսքի զարդը, արվեստը, որը նպաստել է խոսքի կարգավորմանն ու երանգավորմանը²⁸⁹: Իսկ ականավոր բանասեր Ա. Այտընյանը գտնում է,

²⁸³ Գրիգորեան Ս., Գրիգոր Տաթևացու լեզուագիտական հայացքները, ՀԱ, 69 տարի, թիվ 1-12, տպ. Մխիթարեան, Վիեննա, 1989, էջ 205:

²⁸⁴ Խաչերյան Լ., «Գրչության արվեստի» քերականական տեսությունը Գևորգ Սկևռացու աշխատություններում, ԲՄ, 5, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջ 136:

²⁸⁵ Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, էջ 19:

²⁸⁶ Մխիթարեան Յ., Կետադրական նշանները հայերենում, ՀԱ, 26 տարի, թիվ 4-6, տպ. Մխիթարեան, Վիեննա, 1971, էջ 194:

²⁸⁷ Մխիթարյան Հ., Հայերենի կետադրությունը, «Էջմիածին», ԺԴ տարի, 2, էջմիածին, 1957, էջ 57:

²⁸⁸ Մխիթարյան Հ., Առոգանություն, «Էջմիածին», ԺԵ տարի, Թ, էջմիածին, 1958, էջ 54:

որ «... առոգանություն ան արվեստը միայն ձայնավոր գրերով վրակհածի և նշանները միայն ձայնավորաց վրա կդրվին...»²⁸⁹: Գրաբարում առոգանական նշանները տասն են եղել՝ *շեշտ, բուժ, պարույկ, երկար, սուղ, թավ, սոսկ, ասպարոց, ենթամնա, ստորատ*։ Այս տասը նշանները խմբավորվում են առոգանության չորս տեսակների մեջ՝ ոլորակ, ամանակ, հագագ, կիրք։

Ըստ Յր. Աճառյանի՝ խոսքի մեջ պահանջվող դադարները, ինչպես նաև տոնն ու շեշտը գրավորապես նշանակելու արվեստը կոչվում է կետադրություն²⁹⁰։ Միջնադարում շատ կարևոր էր բնագրի ճիշտ արվեստով ընթերցումը, որի համար էլ քերական մեկնիչները հատուկ ուշադրություն էին դարձնում կետադրության նշանակությանը՝ քերականական երկերում առանձնացնելով վերծանություն բաժինը, որն էլ անմիջական աղերս ուներ առոգանության նշաններին վերաբերող բաժնի հետ։ Հայերենում կետադրության տեսությունը սկսվում է Վ դարից, իսկ գործնական կիրառությունն ստանում քիչ ավելի ուշ՝ Վ դարի վերջին քարոզիչում, Դիոնիսիոս Թրակացու հայտնի երկի թարգմանությամբ²⁹¹։ Թրակացին առանձնացնում է տրոհության երեք նշան՝ *աւ արտեալ կէտ, միջակէտ, ստորակէտ*։

Ձեռագրերից դուրս ենք բերել ութ նորահայտ տերմին, և այս բաժնում փորձենք ներկայացնել դրանց մանրամասն քննությունը։

Բացականչական նշանը, ինչպես *հարցականը* և *շեշտը*, հայերենում իր ձևով և գործածությամբ մյուս լեզուների համեմատ տարբերվում է։ *Բացականչական* կամ *զարմացական նշանի* նախատիպը եղել է երկարը, որը հայերենում ունի իր յուրահատկությունը²⁹²։ հայերենում այն դրվում է կոնկրետ բառերի վրա, մինչդեռ այլ լեզուներում նախադասության վերջում։ *Երկարի* արժեքով բացականչական նշանն առաջին անգամ հիշատակվում է Վ և հետագա դարերի քերականական

²⁸⁹ Այտընյան Ա., Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, մասն Բ, տպ. Մխիթարեան, Վիեննա, 1866, էջ 360։

²⁹⁰ Աճառյան Յ., Լիակատար քերականությունն հայոց լեզվի, հ. VI, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 357։

²⁹¹ Մխիթարյան Յ., Հայերենի կետադրության համառոտ պատմություն, «Լույս» հրատ., Երևան, 1972, էջ 11-12։

²⁹² Մխիթարեան Յ., Կետադրական նշանները հայերենում, էջ 200։

աշխատության ունենում, գործածությունը ձեռագրերում հանդիպում է XI դարից սկսած²⁹³, իսկ Վ. Կլասսովսկին այս նշանի գործածության ժամանակաշրջան համարում է XVII դարի վերջը²⁹⁴: Ձեռագրերում *բացականչական նշանը* ձևի և տեղի անորոշ գործածություն ունի, կայուն չի եղել. մերթ *շեշտի* պես է, մերթ *երկարի*, մերթ բոլոր բառերի վրա է դրվում: Ձեռագրում վերոհիշյալ նշանը կոչվում է *զարմացական նշան*:

Ընդամենը մեկ ձեռագրում ունենք տրոհության նոր նշան *թագիկ* անվանումով. այն ունի թագի պատկեր և դրվում է տրական հոլովի վերջում սեռականից տարբերակելու համար:

XI դարից սկսյալ արդեն ձեռագրերում գործածվում է նոր կետադրական նշան՝ կետը ստորակետի հետ միասին, իրար տակ դրված դիրքով, որը ուսումնասիրության նյութ ձեռագրում հանդիպում է *կիտաստորատ* տերմինով: *Միջակետն* ու *ստորակետը*, որպես մի կետադրական նշան գործածվել է նաև ուղղակի խոսքը հեղինակի խոսքից զատելու համար²⁹⁵: Այս կետադրական նշանը եվրոպական մատենագրության մեջ ևս կիրառել են, սակայն ավելի ուշ շրջանում, որի մասին Պոզանյանն իր իտալերենի քերականության մեջ ասում է, որ «... կետստորակետը կըդրվի այնպիսի խոսքերուն ետևը..., ուր ստորակետեն աւելի պէտք է հանգիստ տալ խոսքին...»²⁹⁶: Այս կետադրական նշանը գործածել է նաև Խ. Աբովյանը՝ *կետ ընդ ստորակետի, կետ-ստորակետ* անվանումներով²⁹⁷:

Լեզվի մեջ անհայտն ու անորոշը պարզելու համար հարկ է լինում հարցնել, որը գրավոր խոսքում արտահայտվում է հատուկ կետադրական նշանի՝ *հարցականի* միջոցով: Հայերենում *հարցական նշանը* և՛ ձևով, և՛ գործածությամբ ինքնուրույնություն է հանդես բերում²⁹⁸: Այն եվրոպական լեզուներում գրավոր և բանավոր խոսքում տարբեր է. բանավոր խոսքի ժամանակ հարցումն ուղղվում է նախադասության որևէ անդամին, մինչդեռ գրավոր խոսքում նշանը

²⁹³ Մխիթարյան Հ., Հայերենի կետադրության համառոտ պատմություն, էջ 80:

²⁹⁴ Класовский В., Знаки препинания в пяти важнейших языках, в типографии В. Безобразова и комп., СПб, 1869, стр. 3.

²⁹⁵ Մխիթարյան Հ., Հայերենի կետադրության համառոտ պատմություն, էջ 25:

²⁹⁶ Պոզանյան Յ., Քերականության իտալական լեզուի, տպ. Մխիթարեանց, Վիեննա, 1836, էջ 188:

²⁹⁷ ԼԲ, էջ 151:

²⁹⁸ Մխիթարեան Յ., Կետադրական նշանները հայերենում, էջ 199:

դրվում է նախադասության վերջում, իսկ հայ երենում շատ հստակ է. բանավոր և գրավոր խոսքի մշակած սկզբունքները նույնն են. նշանը դրվում է անհայտ անդամի վրա²⁹⁹: Այս տերմինի նախադասը եղել է *պարույկը*, ժամանակի ընթացքում հայ լեզվաբանները *պարույկին* վերագրել են «հիացական» և «հարցական» նշանակություն, և XX դարի սկզբներին *պարույկ* ասելով՝ հասկացվում է բացառապես *հարցական նշան*³⁰⁰: Ականավոր հայ ագետները դժվարանում են նշել այս նշանի գործածության ստույգ ժամանակաշրջանը, կարծում են, որ ամեն դեպքում ուշ շրջանի ծագում ունի³⁰¹: Ձեռագրում տերմինը կոչվում է *հարցական նշան*:

Մակակէտը որպես կետադրական նշան քերական մեկնիչների աշխատություններում հիշատակված չէ: Տերմինը սկսել են գործածել ուշ շրջանում որպես */* նախդիրը անջատող նշան³⁰²: Այն սկսել է գործածվել X դարից, և շարունակել իր կիրառությունը արևելահայ և արևմտահայ լեզուներում, սակայն, երբ */* նախդիրը սկսեցին անջատ գրել, և ինչպես նկատում է Ա. Այտընյանը, նշանը կորցրեց իր գործածությունը³⁰³: Ա. Բագրատունին *մակակէտ* դնում է նաև */* և *ղ* տառերի վրա և ասում, որ դրանց գործածությունը գրչագրերում այնքան հազվադեպ է, որ կարելի է իբրև բացառություն դիտել³⁰⁴, և այսպես նա պարզապես փորձում էր կիրառություն տալ կետադրական այս նշանին: Գրաբարի քերականություններում այն որպես կետադրական նշան չի հիշատակվում, սակայն քերականները այն կոչում են */* նախդրի սեփական նշան և դնում նախդրի աջ և ձախ կողմերում, որ նախդիրը անջատ ընկալվի: Այն ստորակետի նման է, գործածությունը կանոնիկ չէ: *Մակակէտի* գործածությունը արևելահայ երենում ժամանակի ընթացքում դուրս է եկել, մինչդեռ արևմտահայ երենում շարունակում է գործածվել զեղչված ձայնավորների դեպքում³⁰⁵:

²⁹⁹ Նույն տեղում, էջ 197:

³⁰⁰ Մխիթարյան Յ., Հայ երենի կետադրության համառոտ պատմություն, էջ 68:

³⁰¹ Տաշյան Յ., Ակնարկ մը հայ հնագրության վրա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1898, էջ 163, հմմտ. Աբրահամյան Աշ., Համառոտ ուրվագիծ հայ կական պալեոգրաֆիայի, Պետական համալսարանի հրատ., Յերևան, 1940, էջ 55:

³⁰² Մխիթարյան Յ., Հայ երենի կետադրության համառոտ պատմություն, էջ 106:

³⁰³ Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 354:

³⁰⁴ Արսեն Բագրատունի, Տարեք հայ երեն քերականութեան..., Վենետիկ, 1874, էջ 207:

³⁰⁵ Մխիթարյան Յ., Առոգանություն, «Էջմիածին», ԺԵ տարի, Ը, Էջմիածին, 1960, էջ 57:

Շատ քերականներ գործածել են *մակակետը*, մյուսներն էլ այդ մասին խոսում են, նշում, սակայն իրենց դասագրքերում չեն գործածում: Ձեռագրերում ևս հիշատակվում է այս նշանը:

Հաջորդիվ քննում ենք *ստորակ* առոգանության նշանը, որը նույնական է *ստորատի* հետ: Կարծում ենք՝ ձեռագրում վկայված *ստորակ* տարբերակը առաջացել է *ստորատ+ստորակետ=ստորակ* ճանապարհով: Առոգանության այս նշանի մասին առաջինը հիշատակում են քերական մեկնիչները՝ յուրաքանչյուրը տալով իր բնորոշումը. ըստ Քերթոզի՝ «ստորատի խոնարհ կայ...»³⁰⁶, Գևորգ Սկևռացին, Եսայի Նչեցին նույնացնում էին *ստորակետն* ու *ստորատը*, ինչին անդրադառնալով Ջահուկյանը նշում է, որ Գևորգ Սկևռացին շփոթել է, քանի որ *ստորատը* տրոհության նշանների կարգին է դասել³⁰⁷, իսկ Լ. Խաչերյանը գտնում է, որ պարզապես Սկևռացու ժամանակ *ստորատը* կորցրել էր իր բուն իմաստը, ձուլվել *ստորակետին*³⁰⁸: Առոգանության նշաններից ամենաքիչը խոսվել է *ստորատի* մասին: Բացի այդ այն շատ քիչ է գործածվել և որոշ ժամանակ հետո էլ ընդհանրապես դուրս է մնացել գործածությունից գրավոր խոսքում: Դավիթ քերականը հակադրում է *ենթամնա* և *ստորատ* նշանները. «Եւ ենթամայն և ստորատդ հակառակին միմեանց. ենթամայնդ ի խառնել զբանդ իբր թէ աւրէնսուսոյց, իսկ ստորատդ՝ ի բաժանել զսոյն...»³⁰⁹: *Ստորատը* գործածել են բառերի սահմանները ճիշտ որոշելու համար, սակայն հին շրջանի ձեռագրերում չկային բառանջատումներ, և այս նշանի կիրառությունը ևս չկար, հակառակ դեպքում բոլոր բառերի վերջին տառերի վրայն ափսի դրվեր: Եվ զարմանալի է, որ քերականները դժվարանում են ասել, թե երբվանից է սկսել գործածվել այս նշանը, քանի որ հին ձեռագրերում այն այնքան քիչ է հանդիպում, որ կարելի է ասել՝ չի եղել: Հ. Մխիթարյանը կարծում է, որ այս նշանը

³⁰⁶ Նույն տեղում:

³⁰⁷ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), էջ 96:

³⁰⁸ Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, էջ 154-155:

³⁰⁹ Ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 124:

բնավ չի համապատասխանում հայ երեւի պահանջներին, որն է գործնական նշանակություն չունի³¹⁰:

Փառէնթազիսը առոգանության *կիրք* տեսակին պատկանող բացահայտության նշան է, նույնանում է մերօրյա փակագծին: Այն լայն կիրառություն չի ունեցել կետադրության մեջ, հատկապես հիշատակվում է Մխիթար Սեբաստացու քերականության մեջ *փարէնթազիզ*, *փարիենթազիս* տարբերակներով³¹¹:

Գրչության արվեստին վերաբերող տերմինների շարքում ունենք նաև մեկ տերմին, որը առոգանության նոր տեսակի անվանում է՝ *նշանակ*. այս տերմինը ընդամենը մեկ ձեռագրում է գործածված, առոգանության նշանների այս տեսակին են պատկանում *թաւ*, *մակակետն եւ թաւնակ* կետադրական նշանները:

2. ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԿԱԶՄՈՒ ԹՅԱՆ

Կառուցվածքային առումով տերմինները նույնն են, ինչ լեզվի համագործածական բառերը: Ոչ բոլոր խոսքի մասերը կարող են տերմին դառնալ, քանի որ տերմինի հիմքում ընկած է գիտական հասկացություն, իսկ հասկացություններ արտահայտում են հիմնականում գոյականները:

Ըստ Լ. Յովսեփյանի՝ բառակազմությունը, որպես լեզվաբանական հետազոտության առանձին բնագավառ, ձևավորվել է համեմատաբար ուշ շրջանում, թեև բառակազմական առանձին երևույթների նկարագրությանը հետազոտողներն անդրադարձել են դեռևս հայ քերականական մտքի ծագման ժամանակաշրջանից սկսած³¹²: Թրակացու քերականության մեջ որոշ խոսքի մասերի նկարագրության ժամանակ առանձնացվում էին *նախագաղափար* և *ածանցական* տիպերը, մյուսների դեպքում՝ *պարզ*, *բարդ* և *հարաբարդ*, իսկ մակբայների դեպքում՝ *պարզ* և *ջոկադիր* տեսակները:

³¹⁰ Մխիթարյան Յ., Առոգանություն, ԺԵ տարի, էջ 56:

³¹¹ Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազեան սեռի, տպ. Պաթիստա Ալ առեցի Ջեռօլիմօի, ՎԵՆԵՏԻԿ, 1730, էջ 488:

³¹² Տե՛ս Յովսեփյան Լ. Գրաբարի բառակազմությունը, ՅՍՄՅ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 5:

Տերմինները արտահայտվում են մեկ բառով և բառակապակցությամբ: Մեկ բառով արտահայտված տերմինները լինում են պարզ կամ արմատական, ածանցավոր, բարդ: Բառակապակցություն-տերմինները կազմված են երկու կամ ավելի բառերի կապակցությամբ: Կազմված են տարբեր խոսքի մասերից և արտահայտում են որոշչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի հարաբերություններ:

Պարզ կամ արմատական տերմինները մյուսներից տարբերվում են նրանով, որ դրանց կազմությանը մեկ արմատ է մասնակցում: Նման կառույց ունեցող տերմինները յուրաքանչյուր գիտության տերմինաբանության մեջ շատ քիչ մաս են կազմում՝ պայմանավորված նրանով, որ նոր երևույթներ անվանելու համար պարզ բառեր չեն ստեղծվում, բացի այդ, պարզ տերմինները մյուսների համեմատությամբ գիտական բարդ հասկացություններ արտահայտելու նույն կարողությունները չունեն³¹³:

Տերմինակազմության մյուս եղանակը բառաբարդումն է, որի միջոցով կերտվում են բարդ և բարդ-ածանցավոր տերմինները: Բարդ տերմինները ունեն որոշակի առավելություններ՝ արտահայտում են բարդ հասկացություններ և օգնում են տերմինաբանության մեջ բազմիմաստությունից խուսափելուն: Հայերենում լեզվաբանական բարդ տերմինների բնորոշ կաղապարը երկանդամ կառույցներն են, որոնք երկու տիպի են բաժանվում՝ հոդակապավոր և անհոդակապ³¹⁴: Բարդ տերմինների կազմման գործում կարևորագույն դերը նյութական խոսքի մասերինն է, որոնց միացումով են ստեղծվում բարդ տերմինները:

Ածանցմամբ ստեղծվում են ածանցավոր և բարդ-ածանցավոր տերմինները: Ածանցմամբ կերտված տերմինները հետևյալ ենթախմբերի են բաժանվում՝

ա. տերմիններ, որոնց կերտմանը մասնակցում են միայն նախածանցներ,

³¹³ Ղազանչյան Լ., Լեզվաբանական տերմինների կառուցվածքա-իմաստային վերլուծության մի քանի հարցեր, ՊԲՀ, 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, էջ 141:

³¹⁴ Նույն տեղում, էջ 147:

բ. տերմիններ, որոնց կերտմանը մասնակցում են միայն վերջածանցներ,

գ. տերմիններ, որոնց կերտմանը մասնակցում են նախածանցներն ու վերջածանցները միաժամանակ³¹⁵:

Տերմինաբանության բնորոշ տիպը բաղադրյալ կամ բառակապակցությամբ կազմված տերմինների խումբն է: Ըստ լեզվաբանների հետազոտության ունենքի՝ այդ տիպի տերմինները բնագավառի տերմինների մեծամասնությունը կազմում են բաղադրյալ տերմինները³¹⁶: Ըստ բաղադրիչների քանակի՝ տերմինների այս տիպի կառավարներում առանձնացվում են հետևյալ կառույցները՝ երկանդամ, եռանդամ, բազմանդամ (քառանդամ և ավելի): Այս կառույցներից ամենակենսունակն ու տարածվածը երկանդամ բաղադրյալ տերմիններն են:

Ա ՊԱՐԶ ԿԱՄ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Պարզ կամ արմատական տերմինները առանց բառակազմական այս կամ այն միջոցի մասնակցության կերտված տերմիններն են³¹⁷: Բառակազմության մեջ ելակետային, հիմնական ձևությամբ են համարվում առաջնային հիմքերը կամ սկզբնահիմքերը, որոնք բուն բառակազմական տեսակետից այլևս չեն հատույթավորվում³¹⁸: Այս տերմինները բավական քիչ թիվ են կազմում ոչ միայն քննության մեջ, այլև առհասարակ գիտական տերմինաբանության մեջ՝ պայմանավորված ներլեզվական և արտալեզվական գործոններով: Ըստ Լ. Ղազանչյանի՝ բառակազմական տեսանկյունից արմատական տերմինները բավականին կենսունակ են, գործունե կերպով մասնակցում են նոր տերմինների կերտմանը՝ հանդես գալով գլխավոր բաղադրիչի դերում³¹⁹:

³¹⁵ Նույն տեղում, էջ 142:

³¹⁶ Նույն տեղում, էջ 149:

³¹⁷ Ղազանչյան Լ., Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, էջ 275:

³¹⁸ Հովսեփյան Լ. Գրաբարի բառակազմությունը, էջ 52:

³¹⁹ Ղազանչյան Լ., Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, էջ 276:

Հնչյունական նոր կազմով պարզ տերմիններ չեն ստեղծվում, արմատական բառեր չեն հորինվում, այլ եղածները զուգորդվում են, երբ նոր հասկացությունն արտահայտելու պահանջ էլիսում³²⁰:

Նոր պարզ տերմիններ կարող են առաջանալ բաղադրյալ տերմինների փոխանվանական կրճատմամբ, երբ տերմինը փոխանվանաբար կրում է սեռային իմաստ և համատեքստի շնորհիվ արտահայտում կրճատված տերմինի ամբողջական նշանակությունը³²¹: Ձեռագրերում նմանատիպ տերմիններն են հետևյալները՝ *անկ - անկումն, անգումն, թիւ - թուական*:

Պարզ տերմինների առաջացման մյուս ուղին տերմինների փոխառությունն է այլ լեզուներից՝ *ճերուկտիայ - ջերուկոնդիա, gerundium (լատ), փառենթագիս - փարենթագիս, փարինթագիս, parenthesis (հուն)*:

Հաճախ պարզ բառերը կարող են տերմինի նշանակություն և ստանալ: Այդ կիրառությունների տերմինային նշանակությունն իրադրային է՝ հատուկ տվյալ շարադրանքին, և կայունությամբ չի բնորոշվում³²²: Այսպես՝

Տարր - վանկի անվանում, մինչ այդ այն հայտնի էր տառ, մասնիկ, յոդ իմաստներով:

Այսպիսով, արմատական տերմինների դերը գիտական տերմինաբանության գործում մեծ է, քանի որ դրանք ունեն գործածության մեծ հաճախականություն. ակտիվորեն մասնակցում են մյուս կառույցների կազմությանը (ածանցում, բառաբարդում), իսկ բառակապակցություն-տերմինների մեջ հանդես են գալիս իբրև բաղադրիչ:

Բ. ԱՃԱՆՑԱԿՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Գրաբարում բառակազմական երկրորդական ձևությամբ բաժանվում են տարբեր տիպերի: Առաջին հերթին դրանք ածանցներն

³²⁰ Համբարձումյան Վ., Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990, էջ 129:

³²¹ Սիրունյան Տ., «Հանդես ամսօրեայի» լեզվաբանական տերմինները (1887-1920 թթ.), «Նաիրի» հրատ., Երևան, 2010, էջ 48:

³²² Նույն տեղում, էջ 49:

են, որոնք տարբերակվում են ըստ իրենց կարգային գործառույթի (որոշակի խոսքի մաս կերտելու ունակության) և ըստ դիրքի (նախաձանցներ և վերջաձանցներ)³²³:

«Աձանցումը տարաժամանակյա տեսանկյունով լեզվաբանական տերմինների կազմության ամենակենսունակ եղանակն է»³²⁴:

Հայերենի քերականական տերմինաբանության կերտման գործում իրենց կարևորագույն դերն ունեն աձանցները, որոնք, ավելանալով հիմնական ձևույթներին, մասնավորեցնում են բառի ընդհանուր իմաստը: Ճատդեպքերում էլ ավելանալով բառին վերջից կամ սկզբից՝ նրան այլ իմաստ են տալիս, բառակազմական ու ձևաբանական նոր տարբերակներ ձևավորում: Աձանցման եղանակով կազմվում են մի շարք նոր տերմիններ արմատական, ինչպես նաև բարդ տերմիններից:

Դ. Լոտտեն գտնում է, որ աձանցական կազմությունն ունեցող տերմինների առավելությունը սոսկ նրանց քանակը չէ, այլ այն, որ դրանք իրենց համակարգող հատկանիշի շնորհիվ ընդգծում են հասկացությունների ընդհանրությունը³²⁵:

Հայերենում աձանցավոր տերմինները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ նախաձանցավոր, վերջաձանցավոր և միաժամանակ նախաձանցավոր և վերջաձանցավոր:

Նախաձանցավոր տերմինների կերտման հարցում պարտական ենք հունաբան դպրոցին, քանի որ նախաձանցավոր տերմինների զգալի մասը գալիս է հունաբան հայերենից: Հունաբան դպրոցի հիմնադիրները հունարենի նմանողությամբ ստեղծել են բազմաթիվ հայերեն նախաձանցներ, որոնցից շատերը կայունացել և մտել են լեզվի մեջ՝ իբրև նրա բաղկացուցիչ տարր, որը հնարավորություն է տալիս ոչ միայն ընդարձակելու մեր լեզվի բառակազմական միջոցները, հարստացնելու բառապաշարը բազմաթիվ բառերով, այլ և ստեղծելու հայերեն գիտական տերմինաբանություն³²⁶:

³²³ Հովսեփյան Լ. Գրաբարի բառակազմությունը, էջ 53:

³²⁴ Տե՛ս Ղազանչյան Լ., Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, էջ 282-283:

³²⁵ Лотте Д. С., Основы построения научно-технической терминологии, изд. Академии наук СССР, Москва, 1961, стр. 86.

³²⁶ Մուրադյան Ա., Հունաբան դպրոցի կերտած նախաձանցները, «Տեղեկագիր», 11, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 75:

Ճեռագրերում նախածանցավոր նոր կազմությունները սակավաթիվ են և ոչ միօրինակ. կազմված են տարբեր ածանցներով՝

առ (գրաբարյան նախդիր) - *առանու ն, առբայ*,

